



Բազմա

անասուն

Վ Գ Ի Ն

Ձ. ՏԱԳԻ 1967 ՆՈՅԵՄԵՐԸ  
A.R.A.R.®

ԹԻԻ 11

# پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزائجيان

## PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

## Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱՆԱԿՆՈՒԹՅԱՆ

ԵՒ ԱՐԹՈՒԾՄԱՆ

ՎԱՐՔԷ ՆՍՐԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՆՍՐԱԳԻՐ

Գ. ՄՆԱԳԵԱՆ

ՆՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐՅ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Վ. ՕՇԵԱԿԱՆ

Ժ. ԱՔՓԱՐԵԱՆ

ՀՆՍՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ

† ԵՒ ՊՕՅԱՅԵԱՆ

## ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆ ԻՆ

Ա. ՀԱՅԿԱԶ

Ա. ԵՐԿԱԹ

Զ. ՈՐԲՈՒՆԻ

Ա. ՍԵՒԱՆ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Գ. ԹՈՐՈՍԵԱՆ

Ա. ՍԵՒՈՒՄԵԱՆ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

.....

ՆՇՄԱՐՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

հմբադրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,  
Beyrouth-Liban

Հեռագրային թիւ 296898

# Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Հ. ՅԱՐԻ, ԹԻՒՐ 11

ՆՈՅՄԱՐՈՒ 1967

ՊԵՐՏԻՐ

## Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

### ԱՐԱՄ ՆԱՅԿԱԶ

Վերջերս, ես շատ շիճ երթար ձեռնարկներու. անոնցմէ շատերը, իրենց բովանդակութեամբ ու տեսողութեամբ, կը յղանցեն դիւ: Երբեմն, կը ժողոված առաջադրութիւնս ու կը խառնուիմ Նոն գացողներու կարտանին: Առջի օր ալ այդպէս եղաւ: Հոն Հանդիպեցայ բազմաթիւ Հին ծանօթներու եւ բարեկամներու: Ի՛նչ ուրախացայ, եւ թէ՛ ուրեցայ գանոնք տեսնելով: Տարիները, ժամանակը ի՛նչ աւերներ գործեր էին անոնցմէ ոմանց վրայ... Անշուշտ բան մը չըտի իրենց այդ ժամին. նման անխորհուրդ բան ընելու չափ ցնդած չեմ դեռ: Բայց երբ անոնցմէ մէկը բեմ ելաւ սրածուրբիւն մը փորձելու, դարձայ չո՞վս նստողին ու ըսի.

- Գրեզքը ծերացեր է. իրմէ աւելի՛ իր ձայնը:

- Է, ի՛նչ ընենք, - պատասխանեց ջողինս. - ուզենք չուզենք պիտի ծերանանք, որովհետեւ կարելի չէ առանց ծերանալու ապրել: յետոյ իր այս խորունկ գիտողութեան համար հպարտ, գլուխը կրկն ձեռքի յայտադրին մէջ:

- Մեր սերունդը չապրեցաւ, տառապեցաւ, - մտածեցի.ս կնծի, ու արեւոյ լոյսը զիջ մը:

Հանդէսի վերադարձեան՝ Տիկին մը ծոռեցաւ ինծի ժպտելով ու ընթերցէն սեղմեց ձեռքս:

- Որքա՛ն լաւ կ'երեւիս, պարտէ Հայկազ, ինչպէ՞ս էք...

- Լա՛ւ, լա՛ւ, շնորհակալ եմ. եւ դո՛ւք:

- Փառք Ածու, մենք ալ լաւ ենք. առ սմառ Փարիզէն Գարգեի որդին եկած էր, վայելցինք զինքը:

- Ա՛ր Գարգեիին մասին է խօսքդ, ես կը ճանչնամ զինքը:

- Անշուշտ, եզրայր Գարգեւը չէ՞ք ի՛շխր:

- Կը յիշեմ. ուրեմն Գարգեւը մեծցաւ, ամուսնացաւ ու երեսա՛յ ունի:

- Ի՞նչ երեսայ, իր որդին կարգին երիտասարդ է. չե՛ս գիտեր, երեսաներն ու պատանիները մեծնալու գէշ ու վարութիւնն ունին...

- Հը՛մ...

Գարգեւը սրբանոցի իմ ընկերներէն էր. ամենախորըրէն, Յիւղութեանս մէջ իր գոյութիւնը մնացեր էր թիւ մը հասակով՝ ու պատանութեան գոնորուն հազիւ հասած աղու իր անմեղունակ զէմքով: Հիմա կ'ըսէին ինծի, թէ իր սրբին - ինք չէ, իր որդին, - Փարիզէն

այցի եկած էր իր հորաքրոջը։  
 Աստուած իմ, ե՞րբ մեծցու ան՝ ու ի՞նչ շո՛ւտ անցաւ կեանքը... Ես իսկ, ե՞րբ մեծցայ... Երբ դպրոցը ձգեցի, գեւ պատանի էի, խորհիլ իսկ չէի պիտեմ... Երբ Ամբրիկայի մէջ գործատր դարձայ, յոգնութեան ինչ ըլլա՞լն իսկ չէի դիտեր. երբ ամուսնացայ՝ սքանչելի արկածախնդրութեան մը մէջ նետուողի հանոյքով քաշեցի դէպի խորան... Ե՞րբ մեծցայ, Աստուած իմ...

Ա կեանքիս դրժին էջերը, մտքովս, արագ-արագ թերթեցի։

Յանկարծ կանգ առի վաղրի ընթացքին ոտքը քարի մը դարնողի պէս։ Գոտած էի պատասխանը։

Ես մեծցայ, մարդ եղայ՝ երբ չիւանդանոց դուցի հոն ծնած սոջիներէս տուն բերելու, եւ Հիւանդապահուհին պզտիկ ծրար մը դրաւ թեւերուս մէջ։

Այո, ես այդ պահուն մեծցայ, մարդ դարձայ։

Տղայ էի՝ ու չափահաս մարդ դարձայ։

Մրիւտ տարի ետք եկաւ երկրորդ զաւակս. այս անգամ մանչ մը։

Հիմա թոռներ ունիմ. կամ մոռցոյ թէ երիտասարդութեան տարիներու որքան շատ կը սիրէի զաւակներս, եւ կամ իրաւ է այն ենթադրութիւնն՝ թէ թոռները աւելի համով են, քան զաւակները։

Իրաւ համով են։ Բայց անոնցմէ մեծը, Գարէնը, որ վաղը միւս օր չի՞նչ տարեկան պիտի ըլլայ, մատնել է։

Գիրուկ բալիկ մըն է. այնքան սիրուն, որ երբ պապիկ ու թոռնիկ չով քովի քաշելով ծառուղիին վրայ կը դրաւ արձանանք, մեզ տեսնողներն ու մեղի անցնողները անգամ մը կու գլուխներն հսկը դարձնեն նայելու համար անոր քաղցր դէմքին ու հովանիիս տակ քալող հասակին։ Գիրուկ ձաղուկ մըն է։ Իր շաւանկագոյն գանգուրները, ըստ նորոս մեւութեան՝ կը թափին ուսերուն։ Քիթն ու բերանը կոկիկ են, անթերի։ Աչքեր մեծ են, պայծառ, կայծկլտուն ու իմացականութիւն արտայայտող։

Մեր ընտանեկան բժիշկը, որ օգնեց անոր աշխարհ գալուն, առջի օր, ըսաւ թէ իր տարիքին անհամապատասխան է իր ծանրութիւնը։

– Բայց աօքթօր, մեծդի է, իր ուկորներն ալ մեծ են, ամուր։

– Գիտեմ, բայց շատ հաց մի տաք ու շաքարը կտրեցէք։ Մանր է։

Ապուշը... Ի՞նչ կ'ուզէ արդեօք... Երկխան չոր, տախտակ ըլլալու է որ ինք հաւնի անոր...

Իմ կարծիքով, երբ երեխայ մը վերկես, ուստիլը դալու է...

Յամենայնդէպս, մեր տան մէջ ումանք սկսած են գործադրել բժիշկին պատուէրը։ Ըսի սմանք՝ որովհետեւ, եւ բացառութիւն եմ, մեծամասնութեան հետ չեմ։ Մրեխան ինչպէ՞ս հասցաւ այդպէս ըլլալու... Զգիտեմ։ Առջի օր, երբ տունը միտակ էինք ես ու ինք, յանկարծ ձգեց մեռքի խաղալիկները ու վաղեց քովս։

- Մեծ հայրիկ։
- Այո՛, ձագս։
- Մեծ մայրիկը հոս չէ, շաքար տուր ինձի։

Եթէ դուք իմ տեղն ըլլայիք ի՞նչ կ'ընէիք... Մանկավարժներու, գաստիարակներու, տխուր բարոյաբաններու խրատի՞ն մտիկ կ'ընէիք, թէ ոչ...

– Կե՛ր, ձագս, անուշ ըլլայ՝  
 Ուրախացաւ, տուածս լափեց. սրբորեցի բերանը ու իր սիրուն գլուխը նորէն կտիւնց խաղալիկներուն վրայ։

Բոպէ մը ետք, երբ մեծ մայրիկը իր ըրած դնումներով ներս մտաւ դռնէն, ուրախութեամբ վազեց քովը ու հրճուանքէն թրթռացող ձայնով մը, ըսաւ.

- Մեծ մայրիկ, երբ դուն հոս չէի՞ր մեծ հայրիկը ինձի շաքար տուաւ։
- Դաւանա՛ն, մատնի՛ւ, Յուզա՛ւ, Մերուժա՛ն...

Ու տուի դիմը թեւերուս մէջ։ Հիմա երբ մէկը օրհնել ուզեմ, իրբիւ գերագոյն բարիք ու օրհնութիւն կ'ըսեմ.

– Թոռներու տէր ըլլա՛ս։

**ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ**

Ա.

Այս պահում, երբոր ամեն  
 Հայելի է նախանձառ,  
 Դուռն աղօթք մը կ'երազես.  
 Բայց չես կրնար գայն երգել:

Մոլորակի մը վըրայ  
 Ուրիշ հրրագ մը շիջած,  
 Բաժակի պէս դառնահամ  
 Քու ստուերովդ է լեցում...

Բ.

Ինչ որ կու տամ իմ տունէս  
 Քովի բոլոր տուներում,  
 Իրիկնաշող լոյսն է ճրագին,  
 Եւ լուսարաց պատուհանէն երկնակապոյտ  
 Վառ ժպիտն է գունկներուս,  
 Անոնց աղօթքն անմեղորէն մըմըջւած.  
 Եւ գազանիքն ալ՝ որ սիրտերն իրարու  
 Մ'իացուցած է յաւէտ:  
 Ատելավառ կամ սիրտչեր  
 Ետն արեւն է որ մեր տուները կը բաժնէ,  
 Ետն գիշերն է դարձեալ գանձմ' միացընող,  
 Բայց ո՛չ մէկ բան բովի բոլոր տուներում  
 Տունըս կրնայ միացնել այնքան խոր  
 Որքան քայտիծն անձրեւներուն քաղցրորոք...

Գ.

Երբ աղբիւրները կ'երգէին,  
 Պարտէզին մէջ ինկած էին երկինքէն  
 Բիւր ծնծղաներ, եւ կը սարսաք  
 Կեանքը:  
 Բայց դուն եկար հիւսել  
 Պատուհանս վայրի վարդեր՝ որոնց մէջ  
 Բզէզներուն ոսկեթել պարսն էր բրբռում:  
 Ա՛հ, ոչ բան տրտմագոյն է քան հագիդ,  
 Երբ ասեղներն եղեւին կը ծակեն  
 Սիրտը կապոյտ միջոցին՝  
 Ուր կը պայթի լոյսը՝ նման  
 Շատ հասունցած պտուղի մը մահաբեր...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

Ձ. ՈՐՐՈՒՆԻ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Նամակ Ծահուրէն, «Եւ հղեալի ա-  
ռիթով:

Այն պահուն, երբ յուսահատութիւն-  
ներու ամէնէն սեւը կ'ապրէի: Ո՞վ կըր-  
նար հասկնալ, թէ ինչ ըսել է գիրք հրա-  
տարակէլ հայկական սփիւռքի մէջ: Կը  
հրատարակես: Լաւ: Եւ դեռ ձօնագրու-  
թիւններ գրել, սիրտէդ մաս մաս դնել  
իւրաքանչիւր ձօնագրութեան մէջ, գիրքը  
ծրարել, գրոյժաթուղթ փակցնել լոր-  
ձունքը գործածելով, եւ դեռ կը կար-  
ծես, անդին անհամբեր քեզի կը սպա-  
սեն: Ու կրակը կը բոցավառի, բայց,  
ահա, լուծիւն: Մէկը միւսին ետեւէն  
ձօներդ կը գլորին անտարբերութեան  
անկշտում երախին մէջ:

Միամիտ:

Ձե՞ս խորհիւր, թէ գիրենք պարտա-  
պանք ըլլալու դերին մէջ կ'մտցնես: Կը  
պարտադրես: Միամիտ:

Ու շուրջը պարագութիւնը կը տա-  
րածուի, կը խորանայ, հոն՝ ուր կը  
կարծէիք որ բազմած էր բարեկամու-  
թիւնը:

Յանկարծ անապատին մէջ հիւզուկիդ  
դուռը կը գարնուի, ուշ գիշեր ատեն,  
ղլրղապին: Բարեկամ մըն է, որ կը վե-  
րադառնայ, ան՝ որ օր մը մեկնեցաւ  
դուռը շրխկացնելով:

Շո՛ւտ, սեղանը դրէք եւ մորթեցէք  
ամենապարտ հորթը: Դրէ՛ք սեղանին  
վրայ ամենազնիւ գինին, մինչ այդ,  
բա՛ց թեւերդ գրկելու համար բարեկա-  
մութեան վերադարձը, քանզի ան շատ  
աստապեցաւ եւ շատ աստապեցուց:

Այս ի՞նչ շքեղութիւն, Տէր իմ, տա-  
նապանքն ու արտաթիւնը գիրկ գրկի:

»

Կը նախանձիմ ձեզի, ընկերներ, կը  
նախանձիմ: Այս ի՞նչ անտարբերութիւն,  
համատարած անտարբերութիւն: Այս  
ի՞նչ աստուածային արհամարհանք: Կը  
դրէք, լա՛ւ, կը դրէք ինչպէս կը խմն  
տառապանքը, ինչպէս կը խմն ալքը,  
ուժպ առ ուժպ, լեզուն չփշփոցնելով  
քիմքին դէմ: Յետոյ կը շարտէք թուղթի  
թերթիկները հոս հոն, անկիւնէ անկիւն,  
իւրեւ թէ անոնք իրենց պարունակու-  
թեանէն պարպուած թուղթէ տոպրակներ  
ըլլալին անպէտ:

Կը դրէք, բայց ձեր գրածին հետը  
չկայ:

«Հոս է, կարծեմ, չէ հոս ըլլալու է՞»,  
կ'ըսէք, երբ ձեզմէ բան մը կ'ուզուի,  
ո՛ւհ, միայն կարդալու համար:

«Ձե՛մ գիրք ուր է, փնտռէ՛ք», կ'ըլլա՞յ  
վերջին խօսքը:

Իսկ ես, մարդ կարդ ու կանոնի,  
կարգապահութեան, կ'ուզեմ որ գիրքերս  
հայրնին իրենց պատժունանը ու կանցնին  
դրադարանիս մէջ, ուրիշ գիրքերու կող-  
քին, քով-քովի, բարեւի կեցած, որ-  
պէսզի ամէն անգամ անոնց առջեւէն ան-  
ցած ատենս, ըսեմ ես ինքս ինձի՛:

– Ահա ասիկա տառապանքիս եւ ուր-  
իութեանս վկաները:

Գիրքերս ասպացոյց են որ ես ապ-  
րեցայ:

Յաղթեցի ժամանակի տապաւրին, որ  
աջ ու ձախ հարուածելով կեանքը յանձնէ  
մոտացութեան: Անվերազարժ մոտացու-  
թեան:

Ա՛հ, էթէ կարելի ըլլա՞ր մի միայն  
մէկ հաստը հրատարակել, ինձի համար,  
կեանքիս չափանիւրը եղա՞յ:

Ք

Ես կը ճանչնամ մէկը, որ փոխանակ  
շանրուկաւքէն ցատկելու ճիշդ իրեն տան  
առջեւ, մինչեւ կայան կ'երթար, յետուն  
բայլ ետ պալուստ ստիպուած:

- Մինչեւ հոն վճարած եմ, - կ'ըսէր:

Ք

- Բայց սիրտս ուզում է, - ըսաւ տի-  
կին մը:

Կտարէ՛ սիրտդ, եթէ կ'ուզես ապրիլ:

- Բայց ինչպէ՞ս ապրել առանց սիր-  
տի:

Ք

Այլէք Կոստ, ոտքը դրան սեմէն  
դուրս նետելէ առաջ խորհուրդ կու տայ  
ինքնիրեն:

- Ձգո՛յ՛, Այլէք, սիրտդ մի ձգեր  
իր տեղը, ձեռքիդ մէջ առ եւ, ի հար-  
կին, լաւ մը սեղմէ:

Ք

Կը նախանձիմ նաեւ հրէշին՝ որ նա-  
խանձորդ է: Իր շարժարանքներուն եւ իր  
անկումներուն համար: Կրակին համար  
որ կը մրկէ, կը մոխրացնէ զինքը ու ինք  
կը վերածնի իր մոխրէն, փինիկ թռ-  
չունին պէս:

Մինչդեռ իր գոհը կը զալարի դեա-  
նաբար, կը առաւյտի աչքերը ուղղած  
դէպի երկինք, աղիողորմ, ինքը՝ նա-  
խանձորդ, հրէշը, կը սաւառնի գփոխի  
իր դրախտին մէջ:

Ք

Ընկերվարութիւնը, լաւ:  
Ի՞նչ կայ աւելի վսեմ, քան ինքը այս  
անաստուած աշխարհին վրայ: Աստուած  
ինքն ալ ընկերվարական է:

Բայց ինչո՞ւ օրէնքներու այս ան-  
բախտի ցանցը: Եթէ ընկերվարութիւնը  
ազատութեան իտէայն է, պէտք է նուա-  
զեցնէ օրէնքներու քանակը: Ինչքան շատ  
օրէնք, այնքան շատ պիտութիւն: Ի հար-

կէ ոն ունի իր շքեղանքը: Օրէնքին ա-  
նունք իրատունք է:

Ք

Կինը միշտ կ'ըսէ ձեռքէն, իսկ այրը  
կը մտածէ զկը բաւէ:

Ձեմ հասկնար, ո՛ւր է հաւասարու-  
թիւնը այս երկու հակամարտ եւ հա-  
կընդէմ կեցուածքներուն միջեւ:

Բառ մըն ալ այս, կարգադրելու հա-  
մար անհաշտ գործերը:

Ք

Յանկալ՝ ինքզինքը հորը նեռել:  
Չցանկալ՝ արդէն հորին մէջ գրո-  
նրած ըլլալ:

Ք

Ուտել...  
Չուտես, կը մտնիս: Ուրեմն, տն-  
նասպան կ'ըլլաս:

Վերածո՞ք թեղի կ'ուտէ, կ'ըսէ փոշո-  
վորդական փորձառութիւնը:

Ք

- Ա՛հ, նայեցէք, ինչպէս իրար կը  
նմանին, ջուրի երկու կաթիլներու պէս:  
Բառ մը եւս, նմանութիւնը կամ  
նոյնութիւնը, մտքին զոհացում տալու  
համար, առ ի չլսոյ՛ լեզուական ճշգրտ-  
տութեան: Մարդը ստիպուած է մտա-  
ւորապէս արտայայտել իր մտածումներն  
ու զգացումը:

Բնութեան մէջ, նոյնիսկ մէկ ուն-  
գամուայ համար, երկու նման բան դո-  
յութիւն չունի: Այո՛, նման են ըստ մեր  
աչքին, մեր մարդկային խեղճ աչքին:  
Քանի միլիոն մարդկային աչքերով բազ-  
կացած է հեռադիտակը, հաստատելու  
համար որ մեր աչքերուն նման երեւցող  
աստղերը, անհունութեան մէջ լողացող  
անհասանելի աստղերը, ահռելիօրէն ի-  
րարմէ տարբեր են:

Ենթադրենք որ ջուրի երկու նման  
կաթիլները ծիլ արձակեն: Պիտի տես-  
նենք այն ատեն անոնց տարբերութիւնը  
իրենց արտադրութեան մէջ, որ կը հաս-

տասն էրկու տարբեր պատճառներ: Երկու տարբեր պոչացութիւններ: Վնասը պտուղէն կը դատեն:



Իրականին մէջ սխալ է, երբ կը գրենք ընտան: Մասամբ ընդունելի է երբ, կ'ընենք չինչպէս կամ չպէս: Սոսիւն պարագային, ստարկան կայուն, անշարժ վիճակին մէջ կրնայ արձանութեան պատրանքը տալ, ասանց պարզապէս պատրանք մը ըլլալ: Իսկ երկրորդը կ'ենթադրէ շարժում, ուղղութիւն, բայց ոչ երբեք նմանութիւն:



Զարմանալի է որ երաժշտութիւնը արուեստներու արքան նկատուած է, երբ ան ամէնէն նախնականն է: Մարդը իր լիզուով կը դրաւէ իր տեղը: Գիրք: Կը հասկնանք հիմա որ ասանք գրողը աստուածութեան պէս բան մը եղած ըլլայ: Կամ աստանայ, եթէ կ'ուզէք: Միեւնոյնն է: Մինչդեռ երաժշտները հարսանիքի ու Ֆէյֆի օրերու գունճանիներ: Զայնը: Ամուսնական աշխարհի անասունները վերէն մինչև վարէնը ձայն ունին: Ասոր համար զղայուն են նուազին: Օձը պարիւ կը սկսի: Զայնը երբ մտքեմախիկական զգեստ կը հաշնի, հանելի է: Նըւաղը կը փայփայէ ականջը, կը շարժէրթէ: Ասոր համար կը սիրուի ականջ ունեցողներէն: Տուէք գիր մը, բերանին բաց կը մնայ: Գիրք, նախ պէտք է սերտել, անցնել իմացականութեան երկինքէն: Հասկնալի է որ Մեթերլինկ մերժած ըլլայ Տրագիկի միջնորդութիւնը: Մեթերլինկ սպասուողի պէտք չէր գտար: Թռչուններն ալ նուազ ունին, իրենց գեղեղանքը:

Երաժշտութիւնը, քանի մը ձայն, թիչ մը մտքեմախիկ: Եւ թիւ մը նուազ: Պէթճովէնի պարագային, օրինակի համար, աւելի մարդն է, որ մեզ կ'ատարէ:

Ռինքնէ, մինչդեռ տարզ է՝ մարդը կը նետէ երկրորդական զծի վրայ: Հոն զերթըւածը արքայ է: Քերթուածը, ահա՛ բառը, գերազրուածը:

Մ'էօսի՛տ, ուստի լը բաւ: Բառը ինքնին լուծումն է մարդկանութեան արարքին: Եթէ գիտակցութիւնը, այս միաժինը լիզուովեան, սահմանը հաստատողն է սնունդականի եւ մարդկայնականին միջև, այս ուրեմն լեզուն գիտակցութեան զործիքն է: Ս' գիտակցութեան այս ստուածային զործը, իր գործիքը ստեղծելու կերպին մէջ: Քերթելով, քերթելով ութուններուն, հուլիներուն կողերը, կազմակերպելով ընթացքը զործարաններու, ուղիւ՛ր գործարաններուն զործարանը, իրարու կապելով պանծք, կապկապով՝ կառուցանել միութիւն մը, որ իր արտայայտուելու անկուն, անմերձիկ արտայայտանքը եղաւ, ի վերջոյ, աղտոյնը: Ամէն ծնունդ ազազակ մըն է: Բառին սպասուողը, որ քերթուածն է գիտակցութեան, վասնչի տեղի՛ ունեցաւ քերթելով: Բանաստեղծութիւն: Բանաստեղծութիւնը քերթուածը չէ՛ դէտ: Բանաստեղծութիւնը քերթելով յառաջ կը բերէ քերթուածը՝ բանաստեղծութեան ինտեստեղծութիւնը:



Իրաւ է, ընտելեան մէջ տեղութիւն չկայ: Եթէ ըլլայ իսկ, ընտելեան անմիջապէս կը թաղէ զայն, թաղածը յորութեամբ զեղեցկացնելու հեռանկարով: Միայն մարդն է, որ մասնաւոր հոլանութեամբ մըն է որ կը խնամէ իր տեղութիւնները, գորգուրալով անոնց վրայ, հրահրելով, հաւրհրալով: Իսկ եթէ մեռնելու վրայ ալ ըլլայ, իր կեանքը վրայ կու տայ զանոնք փրկելու համար:



Սէբը այն ատեն է, երբ տեղութիւնը չենք տեսնիր, եթէ նոյնիսկ տեղութիւն



ըլլայ: Այն ատեն որ տղեղութեան ամենափոքր դիտման վրէպը, ըսել է որ սերը հողեպիծակի մէջ է: Հապա եթէ տղեղութիւն տեսնենք հոն, ուր տղեղութիւն չկայ, կրնաս սերդ թաղել, այլևրդ ձեռքերուդ մէջ ծածկել ու լալ:

❖

Երջանկութիւնը: Ամենուրեք փրկարանէլ գեղեցկութիւն:

❖

Պահ մը կ'երեւակայիմ իբրև նկար վեցերորդ անտառը էր խաղաղութեամբ եւ թռչուններուն հուռողիւնովը: Կը կարծէի Լուսինի թանգարանը ըլլալ: Բայց ո՛չ, մարշալ՝ օ բրէնսն եմ:

Ինչն ալ, Պեթհոլէնը, նուազը չըրած, փախչելով մարդոցմէ ստացած վէճքերէն, թռչուններու հուռողիւնին, ծածկուա սոսափիւնին մէջ կը փնտռէ սփոփոնքը: Փոթորիկէն տղատածի մը պէս:

Բայց ես կը նախընտրեմ վեցերորդը: Մարդուս միակ սփոփանքը տորուտարն է, որ մեզ կը հաշտեցնէ մարդուս հետ:

❖

Ժողովուրդը բարի է: Ժողովուրդ մըն է քառասուն տարի աւելի բարի ըսողը:

- Եթէ զոհ չես, երկիրդ զնա՛: Ի հարկէ, ի հարկէ կ'առաքիտի թէ ժողովուրդը զոհն է չարերուն քարոզչութեան:

Եթէ բարի է՝ ինչու՞ բարութեան տրամաբանութիւնը չունի:

❖

- Ժողովուրդին համար գրէ՛, կ'ըսեն:

Ժողովուրդին հո՞գն էր, որ ես կը գրեմ:

❖

Երևակայութիւնը զբացումին ոընունդն է: Ինչքան շատ կաթ տաս, այնքան կը մեծնայ տղան:

❖

Մարդուն ամենամեծ անգթութիւնը ա՛յն է, որ ամենուրեք տրշալոյսին կը դործադրէ մահապատիժը:

Երբ արեւը կը սկսի ծագիլ: Երբ կեանքը կը վերսկսի:

❖

Ապագո՞յց որ միշտ կողմնակալութիւն կայ մտածումին եւ ամէն բանի մէջ, քանի որ դահիճը կը կոչուի լմտորութիւն (սէլէֆիսմ) - վերը ըրած բառանկարութիւնս:

Թերեւս ընկերութեան մեծագոյն պատիւն է սպաննել կեանքի վերսկսումին առջեւ, երբ լոյսը կը ծագի, որպէսզի մարդը մեռնի զոնէ՛լ յարութեան յոյսով:

Յոյսը՝ քաջութեան այս մուրացկանը:

❖

Մահը, ինքը ժամ չունի: Մուրը կը գարնէ ճիւղին, ուզած ատենը:

Բայց մանաւանդ գիշերը, երբ մարդկութիւնը քաշուած է հրապարակէն:

Այս ալ թերեւս անոր գթութեան զգացումն է:

Զ. ՈՐԲՈՒՆԻ

## ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԵՐԳԸ

ՈՒՐ ԱԳՆԻՆ ԿԸ ԺՊՏԻ  
ՊՈՒՏՏԱՆ՝ Կ՛ԱՐՏԱՍՈՒԷ...

Ե.

«... Ո՛վ գերագոր Աստուած, մե՛նք՝ էս գերիներդ,  
բոյլ մի՛ տար որ ըլլամք առա՛նց ճանաչմանս,  
առա՛նց գեղեցկութեան եւ առա՛նց գոհի»:

«Ռեհ-ՎէՏԱ» տալ՝ ԱԳՆԻՒ

Ուշա՛ւ, ուշա՛ւ, բազկատարած  
ես կ'աղօթեմ էեզ, իբր Աստուած.  
Կեանքը ահա կը ծպտի մեզ,  
Մե՛նք՝ էս լոյսիդ հուրմեքը հեզ.  
Ծագէ՛, ուշա՛ւ, աղօթասաց  
Քերթողը իր տալն է հիւսած,  
Տալը՝ պայծա՛ռ առաւօտի՛ն՝  
Որ կը բխի սիրտէն մտքի՛ն.  
Աստուածներու փառաւոր մայր.  
Շագա՛, շոգա՛ բարձունքդ ի վար,  
Եւ տա՛ւր, եւ տա՛ւր, որ ամենուր  
Յորդի էս սիրտըդ տրիտուր,  
Ո՛րձ տուր, կորով՝ մեր բազուկի՛ն՝  
Որ տեղն ըլլամք ողջ աշխարհի՛ն,  
Եւ մեր սրտին կոյս սափորէն  
Ժողովուրդները լո՛յս բնայեն:

digitised by A.R.A.R.@

Ուշա՛ս, Ուշա՛ս, պե՛լն արշալոյս,  
 Դուն մեր կեանքին արեւ եւ յայս.  
 Շողա՛, ու բող կառնք հրեղէն,  
 Վարդի հեղեղ քափէ վերէն,  
 Ակունքները բացուին յոյսին՝  
 Ու մեր հոգւոյն հոսի՛ն, հասի՛ն.  
 Ահա՛ գոհը՛ գոր կը բերեմ  
 Աստուածներում մեր երկնանեմ,  
 Վե՛ն Ինտրայի սուրբ սեղանին՝  
 Ուր անմահները կը բազմին.  
 Ես կը բերեմ մեր հայրերում  
 Լուսաճաճանչ հոգիներում,  
 Հայրերում՝ որ կ'սպերին ընդմիջո  
 Մեր արիւնքին մէջ յար անվիշտ.  
 Մեր հայրերում՝ որոնց շուքին  
 Ապաւինած է մեր հոգին.  
 Որոնց արիւնը կը քալէ  
 Մեր սիրտէն, որ ցեղը տեւէ.  
 Ցեղը՛ լոյսին նըման անմահ,  
 Կեանքի կուրծն մէջը անտե,  
 Արիական, լուսաճաճանչ  
 Ցեղը՛ յաւէտ քարմ ու կանաչ:

Ամենագործը դուն՝ Սա՛քրա,  
 Կառնք որ աստղէ աստղ կը սարայ,  
 Ու տիեզերքին աստղածին  
 Կը խոնարհի քու մակամին,  
 Կը խոնարհիմ ե՛ս ալ սեռ,  
 Ժողովուրդիս հետ իմ անմահ,  
 Եւ գոհը գոր կը գեճում արդ,  
 Մաքրամաքար գուլն այս պարարտ,  
 Ջինջ ջուրին հետ աստղերն ըմպեց,  
 Մեր դաշտերում մէջ լուսահեղձ.  
 Սնաւ հագա՛ր ծաղիկներով  
 Մարգերում վրայ, գնդախոյն ծո՛վ.  
 Եւ ըռնգունքը շնչեցին  
 Լուկ բուրումներ գարնանային.  
 Մեր հօտին մէջ կարծեօ անծիր,  
 Աստուած մ'ըլլար իջած երկիր...:  
 Ինտրա՛, Աստուածն իմ, ինձ լըսէ՛.  
 Ընդունէ՛ գոհս՝ ու ցեղս օրհնէ՛.  
 Մեր պայքարին հսկէ՛ վերէն,  
 Թշնամիին դէմ ամօրէն,  
 Մեր սուրն հատո՛ւ ըրէ ընդմիջո,  
 Սրբէ արտին մառյյն ու վիշտ.  
 Տո՛ւր, որ կեանքը ըլլայ ուրախ,  
 Տունն երջանիկ, երգ ու խրախ.  
 Անպարտ ըրէ մեր բազուկն յար,

Գուպարներուն մէջը դժուար .  
 ու մեր կեանքի սափորին մէջ  
 Թող հասի ուժն՝ իբրեւ ջրվեժ :

Ահա ձեռներըս են մաքն՝ ար  
 Զոհին արեամբը վայրագոյր,  
 Ահա՛ խարոյկը բոցավառ,  
 Ու երգը՝ մեր հագուոյն պայծառ .  
 Ահա՛ ծուխն՝ որ մեներ-մեներ  
 Կը բարձրանայ երկինքն ի վեր .  
 Ահա՛ բույնունքը սուրբ գոհին,  
 Մեր տաղերը վեհ ու խորին .  
 Ու ցեղը՝ որ կեցած շտափ,  
 Գահիդ աղբու ծունկ կը չոփի .  
 Զի մեկնումի պահն է, Աստուած,  
 Իջի՛ր, իջի՛ր բարձունքէդ ցած .  
 Մեր աղեղները զօրացուր,  
 Օրհնէ՛ նետերը սայրասուր,  
 Մեր արշաւին աղբու խռով,  
 Թող սեղի՛ տան լեռներն ու ծով .  
 Զի, մեմէ ծովն ենք անմահ յոյսի՛  
 Որ ամենուր պիտի հոսի .  
 Մե՛նք, քու ցեղդդ ազօթասաց,  
 Փա՛ռք քեզ, Ի՛նչու, հրգօ՛ր Աստուած :

❖

Պեզա՛ս, Պեզա՛ս, վարն ամբոյսներ կ'ազօթեն  
 Ու կը շարժի՛ն ահա, հագած գրահ ու գէն .  
 Քուրմե՛րն ահա, որ աչքիւն կը փայլեն,  
 Գրօշակներն՝ որ կը ծրփան շողալէն .  
 Մարտի կառեր պղնձակուռ եւ շրէրդ,  
 Նկարներովը աստուծուն իբր ահեղ,  
 Ու մարտիկներն՝ ինտրըայի համզումակ,  
 Ապարանջան ունին, ոսկի գարգումակ .  
 Կու գայ խրխիւնը ձիերուն սանձակած,  
 Կը շարժի ցեղը անտառի մը պէս հոծ :  
 Նրկա՛ր եղաւ արշաւն իրենց, դժուարի՛ն  
 Օխուսի յորդ արհիւն ծոցն իրանին,  
 Ուր, դարերու իրենց կեանքէն յետոյ, արդ  
 Նորէն ճամբայ ինկեր են, փաշ ու զըւարթ :  
 Անոնց հոսանքը կը շարժի անըրկում .  
 Կը բացուին դրունքը Հիմաու՛րոյ լեռներուն  
 Ու Գապուլի դունէն անոնք կը խուժեն  
 Հնդիկ աշխարհն՝ որ դուրս կ'ելլէ մշուշէն :  
 Կեցի՛ր են հոն, նո՛ր երկնքի, աստղի՛ տակ,  
 Ժողովուրդներ ըրած գերի, հայտնակ :  
 Գարբուն հետ կոյս աշխարհը այս անհուն,

Կը բանայ ծոցն իր մայրական ու բեղուն.  
 Եւ Ինդոսի ափերում վրայ արփենի,  
 Նոր կեանքը նոր երազներով արժենի,  
 Կը պարզէ իր թեւերն անդորր, երջանիկ,  
 Վէտաներում կը հնչէ տաղը տոհմիկ:  
 Աստուածներն այս երկինքին տակ չե՛ն տրուիր,  
 Կեանքը պարտէ՞ մ'է վարդերովն իր կարմիր:  
 Դաշտերում մէջ, աշխատանքովն իր արդար,  
 Մարդը կ'երկնէ, կը տաղերգէ անդադար,  
 Հօտերը հան անդորրութեամբ կ'արածին,  
 Կը ուտուտեն գառնուկները նորածին.  
 Ծաղիկներու ծոց, ճովը ջինջ չուրերու,  
 Ցեղին սիրտը լոկ ֆազցումբին կը հեզու.  
 Նեկտար կ'ըլլան կաթն ու մեղրը անկասկած,  
 Ու կ'ուտուտեն գառնուկները նորածին.  
 Դաշտերում մէջ, ստորտը լեռներու.  
 Մշուշին գիրկ, գիւղերն են մօտն ու հեռու.  
 Մանուկներն հան իրենց աչուին կը բանան,  
 Մաքուր, քնքա՞յշ, ճիւղածաղիկն պէս գարնան.  
 Եւ ակութին մէջ կյանքը կը շագայ,  
 Երջանիկ են որով ծերուկն ու տղայ.  
 Կը հասի սէրը ամենուն ջինջ սիրտն  
 Մեղրը ինչպէս՝ բարումնաւոր փեթակէն:  
 Յե՛ղը, ցե՛ղը, նպատակը սրբազան՝  
 Որը իմաստ կու տայ կեանքին ու մտնուան.  
 Ցեղն՝ որ կ'ապրի յիշատակովը նախնաց,  
 Ու նախնիքը՝ մեր արեան մէջ՝ իբր Աստուած:  
 Պեզա՛ս, Պեզա՛ս, կը տեսնես ցեղն յաղթական,  
 Միշտ գօտեպինդ՝ իր երազովը վազուան:  
 Հազա՛ր տարի ափերում վրայ Ինդոսի,  
 Ան յաղթական, դիժերում հեռ կը խօսի.  
 Կը պազուտի տառուածներում իր միայն,  
 Ու կը խօսին իր հետ Ազնին ու Ինտրան...:  
 Հազա՛ր տարի նուանու՛նով յամբընքաց,  
 Կը տարածուի ան, թեւերով մեծարաց,  
 Մարդերում եւ բնութեան դէմ յաղթական,  
 Կը կանգնի օր մ'ալ Գանգէսի ափին վրան:  
 Եւ, ո՛վ սարսա՛փ... իր երազէն մեծաշուք,  
 Այ կը սքափի ու կը խօկայ անշքուկ.  
 Կը զգայ թէ ինք վնիւս կաթիլ մ'է լոյսի.  
 Ինկած պղտոր ծովի մը մէջ, մեկուսի.  
 Ամբոխներու գիրկը՝ անթիւ, խայտարղէտ՝  
 Ուր, կոչուած է ըլլալու օ՛ր մը անհետ...:  
 Ուտտի ցեղին պաշտպանութեան է խնդիր.  
 Կը պըրկըլին բարք կամենն անխտիր...:  
 Կը գրկեն էին աստուածները անվարան,  
 Որոնց անմահ փառքը կ'երգէ Ռիկ-Վէտան:  
 Ու կը ծխան յորդ ափերը Գանգէսին

Ջոներով սուրբ՝ որ անմահները խօսին.  
 Կը փառատրեմ Ազնի՛ն՝ լռյսի՛ ալիմադրիւր,  
 Վահու - Ազնի՛ն՝ կեանքի շողը համասփիւռ :  
 Քրմայե՛տը ահա, չտատուած մը՝ ի՛նքն ալ,  
 Ոսկեմատուկ հագուստներով շողափայլ,  
 Դաշոյնը սուր, կը խըրէ սիրտը գանիմ.  
 Ձեռները վեհ, կարկանդակ դէպ՝ երկին.  
 Կ'ազօթէ ան. ժողովուրդն է վերացած.  
 Անոր հոգւոյն մէջ կը խօսի արդ, Աստուած... :

- Ազնի՛, Աստուածն հայրերուս,  
 Կը մերձեմա՛ն ահա քեզ՝  
 Բացած սափորը հագւոյս  
 Շունչիդ առջեւ արփակէգ :  
 Դուն իմ սիրտը կը կապես  
 Իմ պապերու վեհ սիրտին.  
 Արիննիս մէջ կը զգամ ես  
 Անոր արափիւնը խորին :  
 Դուն սկիզբն ես բեղմնաւոր,  
 Հզօր հաստիչն ուշխարհի.  
 Դուն բոցն ես՝ որ ամէ՛ն օր  
 Երակներուս մէջ կ'այրի.  
 Անցաւոր կեանքն քեզմով  
 Քը կապուի լռյս անմահին.  
 Հազարդ կ'ըլլամ ես քեզմով  
 Քեղեցկութեան սարսուռին.  
 Դուն՝ ազնի ես հրեղէն՝  
 Սերմերն որով կը ժպտին  
 Ակօսներուն ընդմէջէն  
 Եւ մայրական արգանդին.  
 Դուն կեանքն ես, որ կը հօսիս  
 Դալար ճիւղէն ծառերուն,  
 Կ'ըլլաս արափիւնն իմ սրտիս  
 Եւ բարբա՛ջ սիրտն արեւուն.  
 Աստուածային հագի՛ն ես  
 Որ երկինքը կը շրջիս,  
 Ան բարձունքէ՛դ վար կ'իջնես՝  
 Հրկիզե՛լ սիրտը գանիս :  
 Ազնի՛, Աստուած շողափայլ,  
 Դուն կենաց բոց ծիրանի,  
 Կ'ազօթե՛մ քեզ անայլայլ,  
 Տա՛ւր, որ խարայիք վառի.  
 Ընդունէ՛ գանը մաքուր  
 Արիական մեր ցեղին,  
 Եւ բաշխէ մեզ տըրիտուր,  
 Պաշտօններդ ինչ որ չունին :  
 Ո՛վ Աստուածն իմ գերագօր.  
 Մեր անութները բարի,  
 Պայծա՛ռ ըրէ ամէ՛ն օր,

Կրակն հոն քոզ չի մտրի,  
 Մեր օճախը չի մընայ  
 Առանց ծպտում մանուկի.  
 Գեղեցկութիւնը անմահ  
 Թոզ մեր սրտին մէջ բռնկի:  
 Սուրբ բազինները մերին  
 Զբլլան գոհէ որբացած.  
 Վե՛հ պապերու հոգիին  
 Մեր տարքն իբրեւ, ա՛վ Ատուած:  
 Նուիրական խարոյկին  
 Կը մերձենամ տես նա,  
 Ու կը սպասեմ անձկագին  
 Որ մեր նուէրն ընդունես:  
 Խարոյկն տես կը վառի,  
 Կը բուրե գոհը ընտիր,  
 Կը հնչէ տաղը բարի  
 Մագէ ի ծագ, անխորտիր:  
 Մագէ ի ծագ կը հնչէ  
 Քու անուրդ վեհափառ,  
 Տեղին սիրտը կանաչ է  
 Դափնիի մը պէս դալար:  
 Ու ես տես կը հեղում  
 Նուիրական լոյս Սուման,  
 Որ արծարծի անկողորում  
 Բոցո՛ղ՝ արեւի մը նման:  
 Սամա՛ն, Սամա՛ն, կեանք առած  
 Խորհրդաւոր լուսնի՛ն տակ.  
 Անոր շնորհը ըմպած,  
 Խըմած աստղերը յտակ  
 Սամա՛ն՝ աղբի՛ւր մաքրութեան,  
 Երբանկութեան ջիւղ բխում,  
 Սափորի՛ մէջ սրբագան,  
 Ատուածութի՛ւն անպատում:  
 Ը՛մպէ՛, ը՛մպէ՛, ա՛վ Ազնի,  
 Եւ օրհնէ ցեղը անտես,  
 Զի աստուածները երկնի  
 Միայն անո՛վ են անմահ...:



Կ'անցնին դարերն աշխարհի խռով կուրծքի՛ն վրայ,  
 Նետը ինչպէ՛ս որ աղեղէն կը սուրայ,  
 Եւ հովուական երբանիկ ցեղն արիական  
 Կը կենայ մռայլ կեանքի մը դէմ յանդիման:  
 Յաղթանակներն աւ մեծութիւնն իբնց հետ  
 Իշխանութեան կը բերեն կեքքն ախտածէս,  
 Ու դաշտերու խաշնարածը երագուն,  
 Թագը գլխին կը մտնի գահ աստագուն.

Գիւղակներու անդարտութիւնն երկնային -  
Տեղի կու տայ քաղաքներու ազմուկին,  
Ոստաններում՝ որ շրջեղ կը բարձրանան,  
Ամբոխներու իբրեւ բաւ ու խառնարան:  
Այ ո՛ւր էք դուք հօտ ու հովիւ գեղջուկի,  
Ո՛ւր էք երգեր՝ առանց արցունք ու ցուգի -  
Դաշտի բուրեան, գոյն գոյն ծաղիկ ո՛ւր էք դուք,  
Ո՛ւր՝ սիրասուն թիթեռնիկներ գոյգ առ գոյգ -  
Սարերուն վրայ հիմա ալ ո՛վ կը կանչէ,  
Ինչո՞ւ ազբիրն ալ մեծիկ կը կարկաչէ -  
Ո՛վ կը հիւսէ կտաւները սակեհիւս -  
Շուշիաները՝ համակ մետաքս ու սնդուս -  
Կաթն ու մեղրը կը հոռի՞ն արդ լոյսի պէս,  
Կը տաղերգէ ո՛վ արեգակն սկեհգէս:  
Հովիտներու խաղա՛ղ հիւզեր, չըկա՛ք ալ  
Ջրկա՛ք կոյսե՛ր, ազբիրներու պէս գուլալ -  
Ծիւ ու ծաղիկ չեն քաղեր կուրծքը բլրան,  
Որ փըրփըրի սափարի՛ն մէջ լո՛յս Ստամ:  
Տեղն երջանիկ, իր պարզ կեանքին ընդմէջէն,  
Սին փառքերու կը մտնէ մութն ու գեհեհն:  
Ամբոխներու գորշ ծովին վրայ կը ծըփայ  
Ան, անճատուս գուպարի մը անպայ:  
Կըզգայ թէ, ալ ծանրութեանը տակ փառքին  
Իր ծունկերը անյուսօրէն կը կըքին:  
Վէտաններու լոյս երկիմէր կը մքնէ -  
Հոգիներուն կ'իշխէ Պրահման ի՛նք դժմէ -  
Եւ դարին խռով կուրծքին վրայ, իմաստուն  
Իբրեւ հսկայ, կը կարգող վեհ Մանուն...:  
Տեղն իր արեամբ աստուածներուն ցեղակից,  
Հարկ է պահել իր մաքրութեան մէջ անրիծ -  
Ու կը ծընին օրէմքները հեթանոս -  
Անկարեկիր, մերթ արդար, մերթ՝ բարբառս:  
Մարդոց դասեր պարիսպներով կը գատուին,  
Աւէն մէկը կ'առնէ խարան մը հակտին:  
Մին՝ պրահման է, աստուածներուն հաւասար,  
Ուրիշ մը՝ սուտրա, որ կեանքէն բան չի՛ յուսար:  
Ու կը մքնէ այսպէս կեանքը դարէ դար  
Հասանքն ի վեր կը լոյսայ ցեղն անդադար,  
Մինչեւ որ լոյսն իր համաբարն արփեմի  
Կեանքի դաժան պայթարին մէջ կը սպառի:  
Հակասուզրին անին հիմա կը դառնայ  
Ստեղծագործի, մութ երկիմքի մը վըրայ -  
Ու գոյութեան տաժանքովը ծանրակիր -  
Տարուարս մը կ'ըլլան երկիմքն ու երկիր -  
Ու իր քամբան կարծես սկիզբ, վերջ չունի...  
Հոգին անան է թեւարեկ թռչունի -  
Անյուսութեան խառնարան փութեք կանգնած  
Ան, կը սպանէ՛ք յոյսի մը՝ մոր Աստուած...:



Մերք յուսահատ կը պաղատի երկինքին.  
Ո՛ւր սկիզբը, ո՛ւր վախճանը այս կեանքին:



Պրահմա՛, Պրահմա՛, ո՛վ դու, հոգի գերագոյն  
Կենսաւորող աշխարհն, ամէ՛ն էութիւն.  
Բեզուն սկիզբ, անմահ կրակը ինչպէս՝  
Որ կը ծընի բի՛ւր. բիւր կայծեր հրակէզ.  
Դուն կը գընես կեանքին լոյս կայծը՝ հոգի  
Ընդերքի՛ն մէջ գոյութեանց իսկ փանաքի.  
Բաժա՛ն-բաժան՝ դուն կ'ապրիս մէջն ամէնուն,  
Քեզմով միայն կը շնչեն մարդն ու գետուն.  
Եւ անբաժան կը մնաս դուն առ յաւէտ,  
Համագումարն աս կեանքերուն արփաւէտ.  
Դուն՝ էութիւն անշոշափ եւ անմարմին  
Որ կ'իյնաս յոկ կարկինին տակ երազին.  
Աստղերէն վեր, սահմանէն դուրս ճանաչման.  
Հոն՝ ուր անգոր է թըփչէր մտածման.  
Կը բնակիս բնագաւառ մ'անվրդով  
Ուր՝ կը հասնին հաւատքին հո՛ւր քեւերով:  
Մարդն ազագուն, ա՛հ այլերս է կըքտծ  
Ծանրութեանը տակ խորհուրդիդ մթամած:  
Հագա՛ր, հագա՛ր տարի է սը իր եռզին  
Կը քափառի մարմիններէ ի մարմին  
Ընդունէ՛ գայն, ներէ՛, ներէ՛ մեղքերուն,  
Զի մեղանչեց տկարութեամբը մարդուն.  
Ընդունէ՛ գայն, ու հայրորէն իր տոգին  
Բաց դռները երանաւէտ *«չի՛նչէն...»*:



Պեզա՛ս, այ երբ հնդիկ հագին է խաւար,  
Առասպելին քեւերուն վրայ կ'իջնէ վար  
Պուտտան ինքը, լոյս բարձունքէն երկնքի  
Որ սրտերուն վէրէն ու վիշտը ամոքի:  
Պալատին մէջ գանձառանգ *Սխտարթի*,  
Կ'ուզէ աշխարհ մ'առանց բէնի ու ոխի,  
Ուստի օր մ'ալ, դայար ծառին տակ *ճամպու*,  
Կը մտածէ նար սէրերու, նո՛ր ճամբու.  
Տառապանքին կ'իջնէ անդունդը խորին,  
Կ'ուզէ հասու ըլլալ անոր աղբիւրին,  
Հէ՛ք մարդերուն ազի արցունքը սրբի,  
Լոյս շող մ'ըլլալ խաւարներուն մէջ անի:  
Իր համար չեն այլեւս գանձ, փերճութիւն,  
Կին ու գաւակ, գահ, մական ու պետութիւն.  
Եւ անտու մ'ալ դարձուցած այ՛քն աշխարհէն,  
Ճամբայ կ'իյնայ զէպ՝ անապատ, վեհօրէն:

Առանձնութիւնն հոգւոյն սնունդն է հաճոյ,  
Ա՛յ երկնաբազս Յզնաւորն է՝ *Հօթաժօ՛*,  
Ընկերներն են՝ *Եօկի*, *Պիբլու*, *Պրամաչար*,  
*Պըրաճանկեր՝* կեանքի կռուին մէջ անհար:  
Մինչ ոտները կը պեղեն սիրտն աւազին,  
Կը սաւառնի հոգին թեւովն երազին:  
Այ ըստուեր մ՛է վեհ գրկին մէջ քրնութեան,  
Եւ իբ շունչը՝ ծագկի բուրմունք մը միայն:

Հովիտին ծոցն, ուր վեհափառ Գանգէտին  
Նուիրական ջուրերը յարզ կը հոսին.  
Բարան կողքին կայ գիւղ մ՛հաւնստ՝ *Սենակի*,  
Մտանելով աւ ծագիկներով գարնայնի,  
Եւ անոր մօտ, խորհուրդ անտառ մը անհում,  
Մեծ հայեցողն ուր կ՛երազէ օրն ի բուն:  
Կուզէ կարդալ իմաստութիւնը կեանքին՝  
Կոյս էջերուն մէջ քնութեան վեհ գրքին:  
Իբ շուրջ, երգն է թռչուններու գուարքուն,  
Վտակին ձայնը՝ ցայգ ու տիւ միշտ արթուն:  
Լուսասենինն այնտեղ կայայտ ու ներմակ  
Կը բանայ իբ ծագիկները, լո՛յս համակ,  
Ու անտառին գագաններուն անողայ.  
Կը հանգչի գլուխն՝ անոր բարի ծումկին վրայ:  
Ան, բնութեան կիսմ մտան է անբաժան,  
Յագթե՛ր է ալ կեանքի օրէնքը դաժան,  
Բայց երկնքին դռներն աւա՛ղ, դեռ փակ են,  
Դեռ չի՛ հոսիր ճշմարտութեան լոյսն ակէն:  
Դեռ մտածման գիշերին մէջը անհում,  
Չի՛ նշուիր նառագայթ մ՛իսկ նուազուն:  
Գիտակցութեան ոսկի սափորն է թափուր,  
Կուշանայ դեռ փրկութեան շողը՝ մահուր.  
Տառապանքը յաւէտ կ՛իշխէ յաղթանակն,  
Կը դառնայ դեռ կեանքին անիւն ու մահուան.  
Ու մարզն ինկած քայտին թակարդն յաւաճատ  
Տառապանքին կը քշէ սայլն անընդհատ...:



Իմաստութեան ծառը՝ *պտտի*, մեծաբաց  
Տարածե՛ր է իբ գով շուքը, ուր նստած  
Երկնքին հետ լո՛ւս կը խօսի վեհ Պաւտան.  
Ոգիները կարծես իբար ձայն կու տան:  
Տժգո՛յն է ան, աստուածային քայտիծով.  
Ինկեր է գիրկը ծրագին, ծփա՛ւն ծով.  
Լո՛յս սանդուխ մ՛է ան աշխարհէն երկարած  
Դէպի *Յրկիւնք*, դէպի աստղերն ու Ատուած:  
Կը ստեղծի՞, կը սաւառնի՞ անդադար,  
Հոգին յեղի է՝ երբաշէ մը համար:

Կը սըրտփէ տիեզերքի սիրտն հոգը,  
 Պիտի պատուի՜ ժուք վարագայրը այսօր:  
 Եւ ո՛վ գարմանք, երկինք, երկիր միացած,  
 Ճշմարտութեան ըսի՛ն երեզլն խօսքն յանկարծ,  
 Տառապանքին ըսի՛ն ակունքն ու դարման.  
 Իր լա՛յն գունբը բացաւ լա՛ւ Երբվանան:  
 Բնութիւնը գայնով, բոյրով լեցանցաւ,  
 Երանութեան շունչ մը հովի՜ պէս անցաւ.  
 Աւազներն իսկ բացին գայն գայն ծաղիկներ,  
 Ծառերուն վրայ գեղգեղեցին բռնունմբ,  
 Գազանները իրենց որբէ՛ն դա՛րս ելած  
 Տեսանողին առչել կեցած խնայիտած  
 Բնութիւնը հասնակ էլած էր ասէր,  
 Լո՛յս ու ծաղիկ կը հասէր սիրտն երկնքի.  
 Եւ ծոցին մէջ այս խառվին անստանում,  
 Անդարը էին լսկ պոտի ծառն ու Փոտոտան...:



*Սաքիա-Մունի, Սաքիա-Մունի*, կը տեսնեմ  
 Քեզ, ինչ որ կ'ընես պատմութեանդ վրեժ,  
 Քաղէ՜ քաղէ՜ քաղէ՜ քաղէ՜ քաղէ՜ քաղէ՜ քաղէ՜,  
 Ճշմարտութեան կը տամիս խօսքն անվարան:  
 Կ'երկարես սեպուղձ՝ տրկարին պահպան,  
 Կը ծաղկատի ուտիդ տակ հողը՝ խաղան.  
 Քեզ խնայիլի կաւ գան արքայ ու սուտրա,  
 Թիւթի խարանն իրենց ճակտի՛ն վրայ.  
 Եւ ինչ որ քանիդ խոր խորհուրդովը անառ  
 Մըքին սիրտերը կը դառնան լո՛յս տանար:  
 Կը տեսնե՛մ քեզ կեցած ասին Գանգէնք՝  
 Որ կը հասի իրրեւ սահանք մը լոյսի:  
 Եւր Աստուած մէ՛ իշեր հիմա Պենարէս,  
*Սաքիա-Մունի, Սաքիա-Մունի*, ողջո՛յն քեզ...:  
 Լուսութիւնը ապունիի քերտով.  
 Ծա՛ղ ստորոտին կ'իջնէ հոգւոյն վրայ խառվ,  
 Եւ երկինքի աւ երկրի մէջ, իբր հսկայ,  
 Լուսապըտակ, կը պատգամէ արդ Պուտառ:  
 - Ո՛վ եղբայրներ, բոյրե՛ր, այստեղ ունկնդիր,  
 Դուք որ կ'եսնէին կը կըրէ՛ք բեռը անվերջ,  
 Ճշմարտութեան լեցե՛ք խօսքն անստանալը.  
 Թող ծագի լո՛յսը սիրտի՛ն հոգւոյն մէջ:  
 Պրահման կոչուի՛ք դուք, Վայիտ կամ Սուտրա.  
 Ես՛յն արիւնը սեր երակէ՛ն կը հասի.  
 Ազնուակառն այն՝ որ կ'եսնէի ճամբուն վրայ  
 Սիրայ, գութի բարբառովը կը խօսի.  
 Դժոխքն՝ որուն կրակներէն կը տակաւ,  
 Ձեր բազմանքին բոցերովն է միայն վառ,  
 Դուք տեղծիչն ու գեղն է՛ք մթայնակ,

Կիրֆերու կո՛յր քեւի՛ն վըրայ հոգմովար,  
 Երկինքը գոր կ'երազէ՛լ ու կը տրամի՛ք  
 – Զի կը գտնէ՛ք գայն աննըւան ու անհաս –  
 Արցունքնեքը ձեզ պիտ' չի տան, ոչ ալ՝ դի՛ք,  
 Եթէ կշիռը ձեր կամփին է պակաս:  
 Երկինքնեքը երանաւտ կը բացուին՝  
 Եթէ իշխանն է՛ք ձեզ այրող կիրֆերուն:  
 Անօգո՛ւտ է արիւնն անմեղ, եէ՛ք գոհին,  
 Եւ ընդունայն վըսմ շունչը տաղերուն:  
 Անօգնակա՛ն են ստուածներն այլ, աւա՛ղ,  
 Զի անեղծուածն է աննեցմէ՛ յո՛յժ անտին:  
 Ու կ'իջնէ՛ միշտ նոր վարագոյր մ'անյապազ՝  
 Վարագոյրնեքն երբ անընդհատ կը բացուին:  
 Տառապանքն, անա կ'ըսեմ ես ձեզի,  
 Տառապանքը կեանքին շուքն է անբաժան:  
 Բայց անորմէ՛ անելի վեր կը կանգնի  
 Զեր կամփը՝ որ տէրն է կեանքին ու մահուան:  
 Պիտ' տառապի՛ք, սպրեւու իզճը քանի  
 Կը բորբոքի՛ ձեր էութեան մէջ քա՛տուն:  
 Կը քաւալի տառապանքի, պայքարի  
 Անի՛ւր երբ, ժամանակին մէջ անհուն:  
 Եւ անին այդ շղթայ մըն է անհատում:  
 Ուր կեանքն ու մահ կը հետեւին իրարու:  
 Պիտի գտնէ՛ք երանութիւնն անպատում:  
 Երբ անիւնն դո՛ւրս է՛ք, ազա՛տ եւ հեռու,  
 Ու կը քալէ՛ք կատարելին համբայէ՛ն,  
 Երկինքէն վե՛ր, աստղերէն վեր, հասնելով  
 Ափերն անդորը՝ Նիրվանայի՛ն լուսեղէն:  
 Կեանքէն, մահէն, տառապանքէն սպառնով:  
 Առանց կեանքի կը հոսի կեանքը այնտեղ,  
 Շողարձակ յո՛յսն է ան, առանց ճըրագի:  
 Հոն չի՛ ժպտիր աստղերուն աչքը բիրտի:  
 Անգորբաւտ բնակավա՛յր սշիւնչի...:

Լոնց. մարդիկ անա ինկեր են ծունկի:  
 Դէմքերն անոնց արեւի՛ պէս կը ժպտի:  
 Տօղի՛ն շիթը կը լուծուի մէջը ծովին:  
 Նիրվանային մէջ կը լուծուի ջիւղը հոգին:  
 Թաթխահա՛րթա՛, Թաթխահա՛րթա՛, կը կանչեն  
 Ան՝ կ'անհետի արմաւենեաց ընդմէջէն:  
 Պէտքերն է համակ արիւ ու ինդում:  
 «Ամբիթահա», փառք, «Օմ-Մանի-փատմէ-իում»:  
 Փա՛նք քեզ, փառք քեզ, դու անվայսնամ եւ անշէջ:  
 Թանկագին քար՝ լուտաւի լո՛յս ծոցի՛ն մէջ...:

❖

Պեզա՛ս, Պեզա՛ս, հրաշք դուրը պատմութեան  
 Պանդեռնին փակենք, ու հոն յաւիտեան

digitised by A.R.A.R.®

Թող ննջեն լո՛ւռ, պատանքի մէջ ոսկեհիւս,  
 Աստուածները, կեանքին հաւար ա՛լ անշոյն:  
 Անոնք Ինարա, Սիվա, Վիշնու կոչուեցան,  
 Կոչուեցան՝ մարդ-Աստուած, Պրահման ու Պուտտան,  
 Պայծառագո՛յն շնորհ բայց հուրը կեանքի,  
 Ջոր վառ պահեց արեւաբլրըն Ագնի:  
 Մեռա՛ն անոնք, հրգորները երբեմնի  
 Որ կեանքը իր նոր աստուածները ծնի  
 Նոր մարդկութի՛ւն, խոհայներ նա՛ր ու անեա՛ս.  
 Նոր պայքարներ, նոր բարիք ու պատուհառ...:

Հնդիկ աշխարհն, հսկայ Պուտտա մը ինչպէս,  
 Թալլապատիկ, խորախորհուրդ ու միշտ հեզ,  
 Ահա նստեր է ու լըռին կը խոկայ  
 Իր բեղմնատու մեծ երկունքին ապագայ...:  
 Հրաշք ծոցը անոր, բա՛ց է մեր առջեւ,  
 Անհա՛ւն երկինք, լեռնե՛ր, ովկիան ու արեւ,  
 Եւ անտառներն՝ ուր անծանօթ մի ռզի-  
 Գագաններուն կը պահէ ցեղը սուքի:  
 Լեռնե՛րն ահա, Հիմնապատն վէս ու հետ-  
 Երկինքն են Կուրիզանէր, կվէրէսդ,  
 Անոնք, գահն են աստուածներուն որ չըկան,  
 Գահն է անմահ, գահակալներն են մահաւան:  
 Հիմնապատն դէպի երկինք քարքարացած  
 Յեզին կամէին կոթողունն է առ Աստուած-  
 Ան, բռնութեան կապանքներուն դէմ դժկամ,  
 Յեզին ձայնն է որ կը գոչէ - ես միշտ կամ-  
 Ես անվախճա՛ն եմ լեռներու ձիւնի՛ն պէս,  
 Իմ խորհուրդս է իր խորհուրդի՛ն պէս անոնս-  
 Կը բարբառիմ յախտեանին հետ միայն  
 Կ'անցնի չարիքը հովերուն պէս ունայն-  
 Լեռնե՛ր, լեռնե՛ր, առաջերուն հետ առանձին-  
 Ուր կը ծագիլին էսովայսներն երազին-  
 Վիհերուն պէս անոնց խորունկ է հոգին-  
 Անոնց չափով չափեր եմ չափն հասակիս...:  
 Ու լեռներէն տիտան այս լո՛յս աշխարհին,  
 Անոնց սրտն իբրեւ վիշապ կը ծընին  
 Հնդիկ գետերն, իր հոգիի՛ն պէս հարուստ,  
 Որոնց գահաք ցամէ արեւն ի վերուստ:  
 Ինդո՛սն ահա, կոյս ցեղերու օրբանն հին,  
 Գանգէսը սուրբ՝ ըխած գանկէն Սիվային  
 Ջերբ մանեակ մը մարգրիտ, որուն քեյն ոսկի-  
 Քակուեր է ջինջ կապայտն ի վար երկինքի:  
 Ահա դաշտե՛ր ծովերու չափ անասնան-  
 Ծըլեր էրտի՛նն ուր ծագիլի մը նըստն-  
 Ակօսներուն ցանուած սերմը որ կ'անի-  
 Սեզանի՛ն վրայ վազուան ճշխարքն է հացի:  
 Եւ անտառնե՛ր, ծով անտառները մըքի՛ն,

Դրբոշմած չէ ուր մարդ դբբոշմը ասին՝  
 Զի կաթիք հաս արեւին շողը ուրախ,  
 Գազաններուն լոկ կ'իշխէ կամբը անկախ՝  
 Աւ դածան է կեանքի պայքարն անուայ,  
 Վագր ու առիծ, դէմ առ դէմ՝ փիղ ու թօպրաւ.  
 Վայրի եզներն ահա կուտոշ կուտոշի,  
 Յովազները կը պարտադրեն նահապետի:  
 Գուպարին այս կը նայի մարդը ժպտում.  
 Զի, իբ սնունդն ալ է կռիւ աւ արիւն...:  
 Մա՛րդը, մա՛րդը, սն այճերն իր կը քանայ  
 Հիւղերուն մէջ ու պալատին՝ մարմարեայ.  
 Գիւղի՛րն ահա, որ անշըշուկ կը մըխում.  
 Բազա՛ններն՝ որ առիւթեանը կը ծըխում:  
 Ու յոգնարեկ կ'անցնին քի՛ւր, քի՛ւր բանուորներ,  
 Որոնց նակտին լա՛ւա տառապանքն է դրեք  
 Իր կնիքը՝ իբրեւ խարա՛ն անէծքի,  
 Արդարութեան մինչեւ որ լոյսը ծագի...:  
 Պեզա՛ս, աշխարհն այս խորհուրդ մ'է անսանձան  
 Ուր՝ մարտիկ այճն երագի մէջ կը քանան.  
 Ու մահատիպ երագին ծագն անխորով  
 Նոր Աստուած մը կը տեսնեմ ձեռքը հուրով.  
 Նոր Ազնի մը՝ անմահ բոց մը ծիրանի,  
 Որով հազարդ կ'առնեն պարման, ծերունի,  
 Գազափա՛րն է. որուն շունչով երանեստան  
 Նոր կեանքի երգ կ'երգեն գեղջուկն ու գուսան:  
 Կ'երգեն անոնք՝ *պրահման, այլուտ, յանուարա,*  
 Կ'երգեն՝ *իրուշ, նամասուտրա եւ բարիտ:*  
 Կ'երգեն հազին զաւակները քրոնաջան.  
 Անօրութիւնն զքոնց եղաւ անբաժան:  
 Կ'երգէ՛ր բանուորը գործատան, կը քնդայ  
 Շունչովն անոր *Պոմպէյ, Մասթառ, Կալկաթա:*  
 Հին փռոքերը իրենց հիմէն կը սարսին.  
 Կը մշուէ հորիզոնին վրայ արփին...:



Պեզա՛ս, Պեզա՛ս, սկիհաններու կուրծքին վրայ  
 Ու գրկին մէջը յոներու, տեգ, հսկայ,  
 Ժողովուրդներ. կը տարածուին ծովի՛ պէս,  
 Խրախանչիւրը խորհուրդով մը անտես:  
 Կը սաւառնի հո՛ն ալ երազը վըսեմ.  
 Կը հոսի կեանքն այժտեղ, պայծա՛ռ կամ նըսեմ:  
 Մէջն երկնքին ու ծովու շինք կապոյտին.  
 Սերունդները կը ծընին ու կ'անկետին.  
 Կ'անցնին անոնք, մերք երգի պէս երջանիկ,  
 Կը խորովին երբեմն իբրեւ փոքարիկ.  
 Կեանքը կ'երթայ անկոշ հիւրի մը նըման,  
 Յանբժակամ է լոկ մուր դէմք մտնում:  
 digitised by A.R.A.R.©

Մարդն այնտե՛ղ ալ, նոյն ճամբայէն կը քալէ,  
 Հիւսուած է կեանքն եսն ալ սերէ, պայքարէ:  
 Հոն է, եսն է, յաւիտեանիս հետ ընկեր,  
 Ձին աշխարհը, որուն հոգւայն է բազմեր  
 Պուստաւն՝ քնքը, միտեծումն ու սրբին,  
 Կամփուկիտսի կը շոգայ լոյսը՝ նրազին:  
 Ու դարերը կը յարարեն դարերուն,  
 Փոքորիկներ, արշաւաններ եւ արիւն-  
 ժողովուրդն՝ որ լուծերու տակ կը հեծէ.  
 Կը ծագի օր մ'իրբու տրեւ, Լածծէ:  
 Կեանքին համար կը բերէ խօսքն իմաստուն.  
 Կուարին ծոցը խորխորակ է՛ք մարդուն:  
 Ինչպէ՛ս պատմել անհո՛ւն խորհուրդը խորին  
 Դժանագիր դարձած այս ծա՛վ աշխարհին.  
 Ինչպէ՛ս պատմել քերթողներուն փառքն անբու,  
 Որոնց երգը լեռն ու ծովերը անցաւ՝  
 Ու ծագկեցուց հագինելու խորն այնքան  
 Ծաղիկները գեղեցկութեան, դաշնութեան:  
 Ինչպէ՛ս պատմել եւ մահաբանը՝ որով  
 Ան քնացու տնջուսօրէն դարերով:  
 Ինչպէ՛ն պատմել եւ հերաշքը այսօրուան,  
 Իր յարութիւնն՝ աշխնչէն իբրեւ տխրան:  
 Անշարժ հանիւնն՝ որ դարձեր է ծա՛վ ծրվան  
 Ու կը ծրվայ աշխարհն առկա աստղերուն.  
 Սարուկը՝ որ անեղ կեցեր է ստի,  
 Հաշիւ կ'ուզէ, հաշիւ չի՛ տար ո՛չ սփ...  
 Հակասագրին խեռ երկվորը սանձած,  
 Լոկ իր կամքը կը մանջնայ ան իր լուսուած:  
 Մարդե՛ր, կ'երգէ Յանկ-Յէն, նոր երգ մը խրատի,  
 Աշխարհն յըզի է հիմա, ծա՛նք երկունքով...:



Հեռո՛ւն, ուր որ խաղաղականը անհուն,  
 Թրթռուն փարձէն իր կը ցուցարէ աստղերուն,  
 Նիպալան աշխարհը անհաւար լուսնի տակ.  
 Իր երազները կը հիւսէ ջինջ, յառակ:  
 Ան, պայքարի կեցած հողին, ծովին դէմ  
 Իր գոյութեան կը հերոսէ շէնքը վրան.  
 Արեւն ըրած խորհրդանշող կեանքին  
 Բարձունքներուն կը տուանի իր հոգին.  
 Հայրենիքն է հոն բոցավառ մէկ փայտը.  
 Գեղեցկօրէն կը ծագի գերք սաքուրտ.  
 Եւ սաքուրտն վարդափրփր ու ժպտան,  
 Կեանքին խորհուրդն է վազանցուկ է՛ք մարդուն:  
 Գա՛ղցր է նստիլ Մուսիկոսի կզրէլն,  
 Զափեղ ասնդուխը մեծութեան ու փառքին.

Մինչ կարաւանն անվերջ վայրի սագերում  
 Կը փոքորկի գլխիդ վերելու ու հեռա՛նն :  
 Քրիզանթեւները կը ծաղկին հան շքեղ .  
 Սամիաճեհն կը սարսուռայ սիրտն այնտեղ .  
 Ու կէջաներն ուրախ կ'երգեն, կը պարեն .  
 Տաղերգելով կ'անցնի գեփուռը վերէն .  
 Յայզն երբ իջնէ, կը հոսի գետն երկնային  
 Ծիր-կաթինն՝ ուր հոգիները կը յածին .  
 Ուր կը թայծին թըքաշէիք, զօլոփաս,  
 Սիրահարներ՝ իրենց սիրոյն մէջ անհաս :  
 Գեղեցկութիւնն հոս դարերէն կը հասի .  
 Քէյեսնի մեծ էրթողուհին Բոմաթի,  
 Իր տաղերուն եւ իր գեղիմ շնորհով .  
 Դեռ կը պահէ հոգիները միշտ խըռով .  
 Գեղեցկութեան երկինքին վրայ դեռ կ'իշխեն  
 Քէյեսնի վեց անմահները, յար վըստ :  
 Աշխատանքն հոս ուրախութիւնն է կեանքին,  
 Հոգիները որով զուարթ կը ծաղկին .  
 Բայց կուտի պէս դեռ կը մնայ աներբը,  
 Դահին վըրայ մարդ-աստուած մը անվեհեր... :  
 Բայց կայս ծոցէն հոգին, հըրաշք քրտիմքին,  
 Նո՛ր արժայ մը կը վազէ արդ իր գահին .  
 Փողովուրդը, լուսաշող ու յազքական  
 Կեանքին օրէնքն հանելով դէմը մահուան... :



Ասիա՛, Ասիա՛, քեզ ո՞ր վընուկը մոզեց .  
 Ու մթնեցին երազներդ լուսանեղծ,  
 Ու քնացար անգիտութեան խաւարով .  
 Թշուառութեանը մէջ անդո՛րր, անխըռով :  
 Դուն՝ որ խորի՛ն էիր, էիր՝ անախմահն,  
 Երկնքին ու ավկիանային յար նըման .  
 Խաւարի ո՞ր ոգին ըզքեզ օրօրան  
 Դըրաւ, օրրեց, ծանրը քունովը մահուան :  
 Բայց կը զարթնուս իբրեւ արփի դուն հիմա .  
 Կը վառես կեանքդ նոր բոցով մը անմահ .  
 Եւ կու գայ օրն՝ երբ կը կանգնես դուն նորէն  
 Իբրեւ փարոս աշխարհներու դէմ առ դէմ,  
 Ու էրթողներդ եի՛ն շաւտով, հին փառքով,  
 Կը փառատրեն լոյս հանճարդ ծովէ ծով :  
 Մնաս քարեա՛ւ, դողանքներն են մեկնումին .  
 Իբրեւ ընծայ՝ կը թողում սիրտը խորին,  
 Ընդունէ՛ գայն, իմաստութեամբդ լեցա՛ւր .  
 Գեղեցկութեամբ՝ - երա՛զ, վարդ, շող ու լագուր... :

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ



Կ. ՍԱՍՈՒՆԻ

# ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

## ՄԱՍՆ Զ.

### ԴՈՒՆ ԾԱՆՈԹ ԵՄ ԱՅՆ ԵՐԿՐԻՆ, ՈՒՐ ԳԱՅՈՂԸ ԵՏ ԶԻ ԴԱՌՆԱՐ

#### ԳԼՈՒԽ Ա.

Սարերու Ասլանը կորսնցուցած ընկերներու սուզը սրտին, սիրտ-  
թիւնը ծամեց երկարօրէն:

Այդ օրերուն ստացած էր Կորիւնէն նամակ, կարճ ու վշտառիթ: Կո-  
րիւն համաձայն չէր Սարհատի հարուածողական շարժումներուն: Խնու-  
սէ մէջ իր աշխատանքներէն ետք, քանի ժը ընկերներով անցան Կովկաս,  
նոր յեղափոխական յեղաշրջումներու խանդավառութիւն կար, ու ղէպի եր-  
կեր շարժումը գաղբած էր:

Կորիւնի նամակը կիսատ նախադասութիւն մըն էր:

- «Միրելի Սարիա՛տ, ես գացի»:

Ու Սարհատ կը զգար, կ'ապրէր Կորիւնի այն շփոթութիւնը, որ կը  
կաթէր այդ հեռացումէն, արիւնոտ երկիրը լքումէն:

- Իմ գործեղակերպին չի հաւնիր Կորիւնը, ու կը հեռանայ արեան  
երկրէն: Իսկ եթէ մենք ալ լռենք, անյայտ քարանձաւներուն ապաստանինք,  
Դեզմի խորհուրդներուն մտիկ ընենք, այս պազանները անարգել մեր ժո-  
ղովուրդը կը լսփեն, կը լսփեն առանց տատանումի: Մինչդեռ մեր ժողո-  
վուրդը լեռնացած հաւատք ունի Փետայու բազուկին...

Սարհատ կը խորհրդածէր ախրութեամբ, ու սիրտը աւելի կը ճմլը-  
ւէր, երբ այդ օրերուն շուկը կը հանէր իր ականջին, թէ Սարհատի  
խումբը հարբած՝ նետուած է կռուին մէջ:

Ու ծառերուն տակ հանգիստի նստած խումրին մտածումն ու մամը-  
տուքը փարատելու համար, Մօսն կ'երկարէր իր հառաչանքները, սրտի  
մորմոքով:

- Աղբէ՛ր, մէկ շէշ կոնեակ ունէ՛նք, տասնեւերկու հոգի, արշայոյսին, մէկ-մէկ կաթիլ խմեցի՛նք, ցուրտ էր: Ո՛ր պիտի գինովնայինք, է՛նչով պիտի դինովնայինք:

- Մօսօ՛, գարգ մի ընէր, մեր ժողովուրդը մեզ սուրբի տեղ դրած է, մէկ կաթիլ ալ խմես, մարդ պիտի դռնուի, որ սուրբը դինովցած հաշուէ:

Եւ ասկայն Սարհատի սիրտը կը փոթորկէր կորիւնի հեռացումը առթիւ, գինովութեան բարբաջանքին ի լուր, եւ մանաւանդ առիւծ ընկերներու սուզում:

- Տղա՛ք, ազատութեան ճանապարհը չիկացած երկաթ է, քայլերդ կ'այրէ, եթէ ողջ մնացիր, կո՛մ՝ քեզ կ'այրէ ու դուն չես մտածեր, այս է մեր ճանապարհը:

- Ուր կտրու կապը... - կը ձայնէին կտրիճները,- զա՛րկ, մենք քու գորկին հետն ենք...

Միխիթարութիւնը, որ ունէր Յարհատ, անձնագոհ ժողովուրդն էր, ու անձնուրաց մարտիկները:

Առիւծը կը մոնչէր բոյրբին մէջ:

Ու Սարհատ նորէն կը նետուէր Մլոյ դաշտի լայնքն ու երկայնքը: Թշնամին շատոնց մոռցած էր իր յայթանսկը, ու Սարհատի փոթորկալի շարժումները դողահար կը զարձնէին բոլորը:

Իսկ քրտական ցեղապետները աւելի պատկառածքով կը սպասէին մահը արհամարհող Քէօռ Օղլիին: Անոնց համար տասնեակ մը Ֆեռայիններու մահը սովորական էր, իսկ Սարհատի վերերևումը աստուածային հըրաշք մը:

Սարհատ հրաշագործ մարտիկն էր: Ու ցեղապետները անոր ուժին ենթակայ կը մնային:

Փառք մըն էր, այդ օրերուն, այն ցեղապետին, որ բախար կ'ունենար տեսնել Սարերու Ասլանը:

Սարհատ Առաւառինճի տիւրք դէպքի տպաւորութեանը տակ ապրեցաւ, ու քաշուեցաւ Մուրթ Յովհաննու անտառները: Իր վիշտը բաժնեցին իր ընտիր մարտիկները, եւ սիրտանքը դտան անվիհեր հարուածներուն մէջ:

Սուսամը, հազուադէպ հանդիպումներուն, Սարհատի հազեկան տառապանքը ապրեցաւ լռելիայն, եւ մեղմեց անոր վիշտը:

Այսպէս անցաւ երկու շաբաթ:

Սարհատ յեռներուն վրայ էր: Անոր լուսթիւնը հաներուկ մըն էր թուրք կառավարութեան համար: Իայց չըջանէ չըջան, բերնէ բերան ա՛մէն օր Սարերու Առլանի մասին կը խօսէին, բաւորի մէջ ստեղծելով անհամբեր սպասում մը անոր երևումին:

Ու ան պիտի երեւէր կայծակի ճայթումով:

Մարտիկ ընկերները Սարհատի դէմքին վրայ կը կարդային խաբհուրդն ու մտածումը, ու երբ Սարհատէն քիչ մը անդին կ'ատանմանային, կ'օւզէին բռնել անոր մազին թելը:

- Տղա՛ք, Սարհատի մոռյլ արամագրութիւնը կը շարունակուի, է՛նչ կը դուշակեն մեր բանիմացները, - Մանուկ ֓եթարին էր, որ իր մտածուածը կը յայտնէր:

- Եւ փոթորիկ կը տեսնեմ Քէրդի ամպառ դէմքին ետեւը, - ըսաւ Գալէն, որ առհասարակ այսպիսի խօսակցութիւններուն բերան չէր բանար:

- Մօսան ու Մուկանաց Ղաղարը զիչ էին, հիմա Գալին ալ ժարգարէ գարեաւ, - ըսաւ Մանուկ:

- Երեսի Հանգիստը ձեր Ղիղբըը լարած է, որ պարագ խօսքեր կ'ընէք, - ըսաւ Մօսան, - վաղը Սարհատը կատակներուն պիտի անցնի, ու ձեռք այս շնորհը պիտի թողունք: Ձեր դօսին ամբացուցէք:

- Ես ալ Մօսոյի կարծիքէն եմ, - Ծածրօրէն ըսաւ Մուկանաց Ղաղարը...

- Ատուած լսէ ձեր ժարգարէներուն, ու ձեռք նորէն նետուինք փոթորիկի մէջ, - աբախութեամբ բացագանչեց Ախօն:

Ճետայինները անցան իրենց առօրեայ կատակներուն եւ վերջնականորէն, ժամանակը սպաննելու համար:

Անդին Մուշի թուրք երեսելիները մտածուքի մէջ էին:

- Ի՞նչ պիտի ըսենք Մուլթանին: Գէորգ Չափուը լիններուն վրայ է: Մենք հեռագրեցինք Պոլիս, թէ այդ վտանգաւոր կեանքուրը սպաննուած է ու ձեռք թաղած ենք զայն:

- Երբ դէպքերը պատահին, Գէորգ Չափուչի անունը բնաւ չենք տար: Այս խօսակցութիւնները միտքտանք մը չէին նահանգապետին եւ հրահանգատներուն: Մուս թողնանակ մը յայտնած էին Մուլթանին եւ շքանշաններ ստացած: Իրենց դրուելը պիտի գուէք:

Ազատութեան եւ բռնութեան դիրքերուն վրայ խորհրդաւոր ըսութիւն մը կը յամենար...

Սարհատը Սուլանը զատուութեան բաժակը ըմպած էր ցմբուր... Իր զինակից ընկերներու նահատակութիւնը անոր սիրտը կը փոթորիկէր նոր պայտուածեմով: Վրէժխնդրութեան գրգռիչ մղումները իր լիդերը կը լարէին: Ազատութեան կախններու ընթացքին, Սարհատ ազգային գոյամարտի համար հակառակ էր ինքնազին ղէժ: Վրէժխնդիր արիւնահողութիւնը անոր փոթորկալի կեանքին մաս կազմած չէին: Ան մարդ սպաննած կամ մարդ սպաննել տուած չէր, այլ բռնակալութեան ղէժ կուած էր:

Ատուաթիննի ղէպքին մորմուրը բռնելու միակ համբան վրէժխնդիր հարուածն էր, ու Սարհատ նետուցաւ արիւնոտ նոր շարժումի մը մէջ, կայծակնային հարուածով ղէպքնելու սպաններուն եւ սառիկանոպետներուն, թէ իրենց արարքը անպատիտ չի մնար:

Մարհատ երեւցաւ ախոյժ քայլերով Ճետայիններու խմբակին մէջ:

- Տղա՛ք, ծառերուն տակ երկննարով, զիսկ գարձաք, մութը կրիտուն պէս ճամբայ պիտի ելլենք:

- Փա՛ւք Աստուծոյ... - բացապանչեցին Ճետայինները:

Ճ

Լերան բարձունքներէն ձիււորներու անցըր ժայռերը կը թնայեցնէր: Անուառը կը խօզար կարծես իր հարազատ կորիճներուն վրայ, որոնք, այսպէս, հովի պէս կը բաժնուէին ծառերէն ու կը ծրարուէին գաշտի խաւարակաւուն մթութեան մէջ:

Արդէն խալաճեալ հանապարհներուն վրայ էին, երբ Սարհատ երկու խմբակի բաժնեց Ճետայիններու այս ընտրանին:

- Արա՛մ, գուն սլաքի պէս կը մտնես Ատուաթինն եւ կ'առաջանաս մինչեւ այն առանցքը, ուր թրքական զօրքերը կը մնան, կը հարուածես

աչքիդ երեւցած սպաները կամ զինուորները եւ առանց վայրկեան կորսն-  
ցընելու կ'անցնին Բերդակի բարձունքները: Մենք կ'երթանք ինսպիւզ,  
անկէ կ'անցնինք Բերդակի լեռը: Պուրակներուն մէջ իրար կը դռնենք...  
ով որ ողջ մնայ:

Ձիւտոր խումբը շարունակեց իր ճամբան ու երբ մօտեցան ինսպիւ-  
զին, ճիւղաւորուեցան, իւրաքանչիւրն իր ուղղութեամբ:

Կէս գիշերին խողաղ դիւղերը կը փոթորկէին:

Երկու խումբերը, նոյն ժամուն, քառասորով կը մտնէին ինսպիւզ  
եւ Առուառինճ: Գիւղի առաջնորդներն արդէն հրահանգ ստացած, ճամ-  
բաներուն վրայ էին, եւ անխօս՝ պատերուն տակէն կ'անցնէին ուրուաղի-  
նի պէս: Խումբերը անոնց կը հետևէին դէպի նշանակէտը: Ետեմբու հա-  
ջոցը, ձիւտորներու հանած աղմուկը զօրամասի մը ժամանման նշան նկատ-  
ուեցան: Ազաներէն ոմանք դուրս եկան իրենց թիկնապահներով ճիշդ այն  
պահուն, երբ Սարհատի խումբը երեք անկիւնէն կրակի տակ կ'ստնէր թըլ-  
քական զօրքը: Ֆետայիներու համազարկերէն արդէն երեք սպայ եւ եօթը  
ասքերներ ինկած էին դռներուն առջեւ: Տուներուն մէջ ապաստանած  
զինուորները կը կրակէին դէպի առաստաղները, իսկ անոնք որ կըցած էին  
գուրբ դալ եւ պատի մը տակ ապաստանիլ՝ իրենց հարուածները կ'ուղղէին  
դէպի երկինք: Թրքական վաշտերը զանազան տուներէն դուրս կու գային  
եւ կը շարունակէին համազարիւր ամէն ուղղութեամբ:

Պատասխանող չկար:

Գիւղը իր խողաղ քունէն նոր կ'արթննար, ահուգողով:

Պահ մը ետք համազարկի որոտները կը հասնէին Առուառինճին:

Կոբը, ուրեմն փոխադրուած էր այն թեւին վրայ: Զօրքի համա-  
զարկերուն պատասխանող չկար: Ետեմբու կատարեալ էր: Ինչ որ իրենց  
աչքերուն առջեւն էր ու շատ խօսուն, առաջ դիակներն էին որ տուպա-  
լած կը մնային փողոցին մէջ: Քանի մը վերաւորուածներու վայնասունն  
աւելի քան կը շնչէր հարուածին ուժընթիւնը:

Ինսպիւզէն շոկատ մը ճամբայ ելաւ դէպի Առուառինճ, զիտնալու  
համար, թէ կոբը ի՞նչ փուլի մէջ է:

Առուառինճի թրքական վաշտը նոյն շուարումի մատնուած էր, երբ  
թրքական շոկատը հոն հասաւ:

Կոբը չկար, քայց ուրախ կար բոլորի դէմքին: Հոն դռներուն առ-  
ջեւ փոռած էին վեց դիակներ: Վաշտի սպան անոնց կողքին երկարած կը  
միար: Սակայն միբաւորուածներուն թիւը շատ էր, ու անոնց զաւարուն  
ձայնը դիւղը բռնած էր:

Գիւղացիները փակուած մնացին իրենց տուններուն մէջ:

Թրքական զօրքերը, անակնկալ հարուածէն չփոթահար, ոտքի էին,  
համախումբ, ուշագիւր ու զգոյշ: Հետաւոր շտաբի մը կամ երեւակայական  
շարժման ուղղութեամբ համազարկեր կը բանային:

Կրկին լուռութիւն:

Ձրազար այս վաշտերը դիւղերը կ'անցնէին առանց կռուի, սակայն  
կորովէ կը սպառէին:

Առաւօտը կը բացուէր թրքական զօրքերու քայց աչքերուն վրայ: Ու  
անոնք խաւարի սարսափէն, անորոշ անկիւնէ եկած հարուածէն սպառած,  
ուշիկ կու գային՝ կայծակնային հարուածը չափելու համար: Հոն էին  
դիակները, անշարժ, զդետնուած: Ու դէպքը տեղի ունեցած էր իրենց առ-  
ջերուն առջեւ. քանի մը վայրկեան տեւողութեամբ, Ստոյգ զիտէին որ

ձիւտորները քառասմբակ անցան այդ տուններուն առջեւէն: Կայծակը ճաթեցաւ ու լռեց... Լուսն էին դիակներն ալ: Հարուածի տեսողութիւնը կը շարունակուէր վերտուորներուն տնքոցին մէջ:

Արդէն դուժկանները ճամբայ ելած էին դէպի Մուշ, նահանգապետին եւ զօրքերու հրամանատար Քէօսէ Պինպաշին հաղորդելու արիւնալի դէպքը:

Արեւը հասակ մը բարձրացած էր, երբ եզի կատրերուն վրայ շարած դիակները Մուշի ճամբան կը բռնէին: Ջոկատ մը զօրք սպաննուածներուն կ'ընկերանար, գլխիկոր ու ուժօթահար:

Քանի մը շարաթ անցած էր այն օրէն, երբ թրքական զօրամասերը, վայրագ ցոյցերով, Առուարինճի տասը նահատակները Մուշի հրապարակին վրայ կը ցուցադրէին, ու գոռու-գոռուներով կը յայտարարէին.

- Արմատը կտրեցաւ Ֆեռայիներուն...

Ուրիշներ կ'աւելցնէին.

- Հիմա, թող երթան ու լան հայերը իրենց Սարերու Աւլանին վըրայ...

Իսկ այժմ...

Կառավարութեան շէնքերուն առջեւ հիմա պատկերը փոխուած էր: Սպաներու եւ գինուորներու դիակները արիւնոտ պատասխան էր Առուարինճի նահատակներուն:

Աին ընդ ահան...

Ու այդ հարուածող երկաթէ բազուկը կրնար երկարել մինչեւ Մուշի նահանգապետարանը, զօրահրամանատարի եւ ոստիկանապետի դրոսեն-հակը, ամէն տեղ:

Շէնքնող հարուածի լուրը հեռադատուն չմտաւ: Լուսնիւնը, սաստի մը պէտ, տիրեց պետական շրջանակներուն մէջ: Դիակները թաղուեցան, իրենց հետ դերեզմանելով գէպի շուրջ եղած վայնատունը: Կարծես բուն մը պատահած չէր: Ու հայ ժողովուրդի փակ տուններուն ետեւ իր վըրայ կնկած պանդուածի հանդիստը ոչ ոք վերովից:

Սակայն ամէն մարդ գիտցաւ, թէ Մոզասարէն կայծակը ճայթեց, ու Սարերու Աւլանը լեռներէն անցաւ...



Աշնան տերեւները ոսկի կը սփռէին Տարօնի տմբող տարածքին: Ու հողկը կ'աւելին աշխատաւորները դէպի իրենց տունները: Ինչ որ բնութենէն կրցած էին քաղել եւ ինչ որ կողոպտիչներէն իրենց ձեռքը մնացած էր, դէպի տան պահեստները կը հասնէր:

Գիւղացիներուն աչքը երկինքն էր: Գիտէին թէ տեղատարափ անձրեւէն ետք, ձիւնը կ'իջնէր ամէն կողմ:

Թրքական զօրքերն ալ կեդրոնացան Մուշի զօրանոցները: Թրքական զօրքերն ալ կեդրոնացան Մուշի զօրանոցները: Թրքական զօրքերն ալ կեդրոնացան Մուշի զօրանոցները:

Գիտանէին էր: Գիտանէին էր: Գիտանէին էր: Գիտանէին էր: Գիտանէին էր:

Ֆեռայիներն ալ թաքստոցներ պիտի որոնէին, հաւատարմներ պիտի գտնէին, պաշարի մասհողութեամբ պիտի զբաղէին: Աշնան այդ օրերը Ֆեռայիներուն մասհողութեան եւ տառապանքի օրերը կ'ըլլային:

Եւ սակայն կեանքը պիտի քայլէր դաժանութեան ճամբաներէն:

Սարևատ քրտական պէկերու այցելութիւնը ընդունեց: Քանի մը յանկարծուստ այցելութիւններ ըրաւ Մելիքին ու շարք մը ազաներուն, միշտ փոքրիկ խումբ մը, զինավտո, անկախ ու տիրական: Դուռաղբուքիան մտածում ունեցողներն իսկ, իրենց հարիւրաւոր ձիաւորներով եբբ իրենց մէջ կը աւանդին Սարևատը իր տասնեակով, խորատկիչ բանակի մը ապաւորութեանը ասկ կը մնային:

Իւերզակի բարձունքներէն, Սարևատ բնութեան հետ կը խօսէր, ու լեանեքէն փրթած փոթորիկները կ'ազարարէին թաքստոցներու անհրաժեշտութիւնը:

- Տղա՛ք, գիւզերէն սուբանդակներ պիտի հասնին՝ հրահանգներ ասանալու համար, ասեմն է որ ձիերը զիւղերուն վրայ բաժնենք: Անոնք տար անգի պէտք ունին, իսկ մենք ցուրտին պիտի մնանք...

- Ատենն եկաւ, որ պարսպ մնալէն ձանձրացած՝ զգուրտուքի սկըսինք, - ըսաւ Արամ ու աւելցուց, - Հաղուստ չի մնար վրտնիս, պարսն Սարևատ, զարման ծոր հաբուստ հարելու միջոց մը խորհէ:

- Ահնգերը կտրտած հազուստը կը ծածկեն ու դուք աչքիս միշտ փայլուն կ'երեւիք...

Տղաքը խնդացին: Յոյս չկար ծոր հազուստ-կապուստի: Ու մրմուռացին:

- Զուրն իր համրով կ'երթայ...

Ճ

Ձիւնապատ աշխարհին մէջ, կրակէ կոնդերուն շարջն էր ժողովուրդը: Ո՛ր էին Ձիւնայինները, ո՞վ գիտէր թացի հաւատարմներէն, որոնք ամէն զոհողութիւն պիտի ընէին այս փախտականներուն ձմեռնային դառնութիւնները ամոքելու համար:

Սարևատ, խումբը մասերու բաժնած, ամէն մէկը յարմար շրջան մը տեղաւորած էր: Ինքը կը մնար կուրտիկի բարձունքները, Փեթարէ եւ Ս. Յովհաննու շրջանին մէջ: Երբեմն միայն կ'ապաստանէր Ս. կարապետի վանքը:

Լուսթիւնը ծանր կ'իջնէր կառավարական շրջանակներուն վրայ: Մտահոգութիւն մը կախուած էր բոլորի գէմքերէն: Կը զգային որ զօրքով մէջ խլրտում մը ծայր տուած է: Ազատութեան հովերէն տարուած սոցաները համախոհներ կը գտնէին, որոնք Սուլթանի բռնակալութիւնը այլեւս անհանդուրժելի կը համարէին: Ու այդ հովերը կու գային Թուրքաստանէն, սւր յեղափոխութիւնը կը փոթորկէր հսկայ կայսրութիւնը 1905-ին: Սահմանադրական կարգեր հաստատած էին երէկուան բռնակալութեան տեղ, ու ժողովուրդի խանդավառութիւնը Թուրքիոյ եւ Պարսկաստանի սահմաններուն վրայ բարձրախօսի դեր կը կատարէր:

Թուրքիան ու Պարսկաստան ապատութեան այդ ակէքներէն ցնցուած էին: Սակայն սուլթանական բռնակալութիւնը երկաթէ կրունկներուն ասկ կը պահէր Սասունն ու Տարօնը, որպէս հայ ապստաղրական շարժման հնոցի:

Կովկասը իր խելայեղ ուրախութեան եւ ժողովրդական ցնցող շարժումներուն ընթացքին նոր խումբեր համբայ չհանեց գէպի Արատութեան

բարձրագույնագիր: Ստորանդակները պոկեցան ու երկրի կ. Գոմիտեներն ու Ծեսոայինները պահ մը լքուած զգացին ինքզինքնին:

Արեւմտեան Հայաստանը ազատագրուածն կուռի արիւնտս բռնան տակ կ'ընէր: Իսկ Արեւելահայաստանը ուսական յեղափոխութեան այգիներէն աւարուած՝ իր տեղը կ'որոշէր կոմկասի բեմին վրայ:

Ստորանու ձմեռուան վեց ամիսներուն ծանր ու թեթեւը կը լընայ, ու զտնտեսիչները ծամեց: Սուսամը երբեմն իր փոթորկած հողին մեղմացուց, բայց ազատութեան հորիզոններուն վրայ սպասուած շողողուն արշալոյսները կ'ուշանային:

Ձիւն ձմեռ էր, բուք ու բորան:

Յր մը, Վարդան վարդապետը դուռը հրեց եւ ներս մտաւ Ստեփան վարդապետի խուցը, ու իր գէժ դասը Սարհասը: Անկեղծաբար եկաւ: Եւրաբան հողին կրցաւ ըսել.

- Այդ ինչպէ՞ս, Գէորգ, եկած ու ինկոծ ես կրակին մէջ:

- Հայր Սուրբ... - մէջ մտաւ Ստեփան վարդապետ, - ես չուանով վեր քաշեցի Գէորգը եւ ամիս մըն է որ հոս կը մնայ: Քողութիւն տուր, հայր Սուրբ, որ քեզի չիմացուցի, զիտէի որ պիտի մտահոգուիս: Երկու վաշտ թուրք զօրք կայ վանքին մէջ, բայց այս բուք ու բորանին դուրս չէի կրնար թողուլ Գէորգը:

- Ատուած թողութիւն շնորհեցէ, Ստեփան հայր սուրբ: Բերաննիս զոցինք, որ վասակի մը շահողիկնք:

Վարդան վարդապետ դարձաւ Սարհասին.

- Տեսչէ՛ն, հարուածներուդ ձայնը կը լսենք, կառավարութեան եւ զօրքի ճշտումներն ալ կը տանինք, բայց քեզ տեսնելէն զրկուած ենք: Ո՞ր ես, ի՞նչ կ'ընեն.

- Հայր սուրբ, ձմեռ ստեն ի՛նչ պիտի ընենք: Արջը ձմեռուան վեց ամիսները իր ոտքին տակը կը լքէ, մենք ալ մեր անցած օրերուն ցուրը կը ծամենք:

Վարդան վարդապետ այլեւս չմտաւ Ստեփան վարդապետի խուցը, բայց ամէն օր առատ պաշար հասցուց այդ խորհրդաւոր սենեակը:

Ծեսոայիի կեանք, մասը հրացանի բլթակին, օր մը անօթի, օր մը կուշա...



Գարունը բացուեցաւ, դեզածիմազ դարուն, Սարհասին համաց հըրաշախի դարուն մը:

Ծեսոայիներու դարունը կը բացուէր արիւնտս կոթեւներով, Խահասով ընկերներու սուղը թողելով վերապրող անձնագոհներուն: Այս պարան տակաին կոթիւնները վերսկսած չէին ու անա ձիւններուն տակէն ձեծազիկը իր դունաւոր թերթիկները կը բանար:

Ձիւնէն ծագիկ կը բուսնէր:

Ու Ծեսոային գուռի կ'ուշանար:

Սուսամը Ապրիլ ամսու վերջերը տղայ մը կը պարզուէր Սարհասին: Արեւան ճանապարհին վրայ, հրաշքով, արիւն մը կը բողբոջէր, եւ բաժին Ծեսոայի մը նուիրելով կայծակնային խուճրին:

Մարհատ քսան տարուան ընթացքին շատ յաճախ արիւն քամած էր իր մարմնէն՝ ազատութեան սեղանին, ու այս մէկ կաթիլ արիւնն էր որ իր սիրտը կը լեցնէր հրճուանքով:

Նորածինը կնքեց Գոմերի Տէր Սարգիս քահանան, որ սպառապէն մտած էր Սուրբ Յովհաննու վանքի սրբացած անասուը, եւ Մարհատի ինդրանքին վրայ՝ անունը կնքուեցաւ ԱՆՐԿԳԷՍ...

Մարհատ, Վանի շրջան եղած միջոցին, Չերմօրէն կապուեցաւ Վարդուխտին, անոր մէջ գտնելով ոչ միայն դեկավար գործիչը, այլեւ անվեհեր մարտիկը: Իսկ Վարդուխտ, Մարհատին հանդիպելէն ետք, Անդրանիկի եւ Մուրատի պէս, Գէորգ Զաւուչի գլուխով կ'երգուէր:

Ու այդ դարնան Մարհատ համախմբեց իր զինակիցները, նոր արշաւանքներուն ձեռնարկելու համար:

— Տղա՛ք, ձեր արեւ անմար մնայ, մենք կռուի պիտի ելլինք, Ես հանդիստ սրտով կրնամ մեռնիլ, Վարդուխտ ողջ մնայ:



1906-ի տարին ծանր մտահոգութիւններով կը բացուէր զարնան սեմին:

Երբ բնութիւնը ծաղկաւէտ բուրմունքով կը լեցնէր մթնոլորտը, հայրենի հողին կառչած ժողովուրդը, վտանգի ենթակայ՝ լուռ կը հակէր մահին:

Հոն, Կովկասի բեմին վրայ, հայ-թաթարական կռիւ, հոս հայկական բարձրաւանդակին՝ Ազատութեան կռիւ: Սասունի լեռները զորդացնող առիւծները այժմ Աբարատեան դաշտէն մինչեւ Ղարաբաղ գոյամարտի ելած էին, հայ ժողովուրդի իրաւունքները հիմնաւորելու համար:

Կովկասէն զէպի Տարօն արշաւախումբեր եւ գործիչներ ալ չերեցան:

Մարհատ գրած էր Վանի պատասխանատու մարմնին, որ գործիչ մը այդ շրջանէն անցնէր Տարօն եւ իրեն օղնէր, Գուրան Բարձրաւանդակի Կ. Կոմիտէն եւ Պատասխանատու Մարմինը ոչ միայն ազատագրական մարտերը վարելու ստիպուած էին, այլ պիտի համադրէին դաղտնի կազմակերպութեան գործերը, կազմակերպութեան մը, որ իր ընդարձակ ցանցին մէջ կը հաշուէր տասը հազար ուխտեալներ, հինգ հարիւր վայրերուն վրայ բաժնուած:

Մարհատի ուսերուն կը ծանրանար Հրայրի ստեղծած այս կուռ կազմակերպութեան պատասխանատուութիւնը: Անցած երկու օրերէն շատ հարուստ անձնակազմը քաղաքականութեան առաջնորդը ինքն էր, ու դարձած էր ամբողջ ժողովուրդի պաշտելին, անխորտակի բազուկը, թշնամիին սարսափը, ու քիւրտ ցեղախումբերուն հպարտանքը:

Բայց Պատասխանատու Մարմնի միւս անդամները, Մշոյ Գեղամը եւ Վարդան վարդապետը, խոչնդովեան կոչ կ'ընէին Մարհատին, Գուրան Բարձրաւանդակի շրջանը նոր ցնցումներէն հեռու պահելու համար:

Գործօն կեանքի մէջ, խօսքն ու գործը Մարհատին կը պատկանէր՝ Մարտական ինդախութեան մարմնացումն էր Մարերու Ասլանը: Միեւնոյն ատեն իրողութիւններն ու կարելիութիւնները կշիռքի առնող փորձառու ու թրծուած գէմքը կը մնար ինքը: Գործած էր Հրայրի, Վահանի, Անդրա-



նիկի եւ Վարդգէսի հետ, ու կը շարժէր վարել զեկամարի մտմտուքով ու ճրագրով:

Սարհատ կրկին գրեց Վան, որ գործիչ զէժք մը Տարօն դրկեն:

Այդ գարնան սմիաներուն Սարհատ անյայտ տեղեր ապաստանեցաւ փոքրիկ խումբով մը: Միւս Տնտայիները խմբակներու բաժնեց: Հրահանգեց որ զգոյշ ըլլան զէպքեր առաջացնել եւ կազուած միան սուրհանդակներուն: Յատուկ պարտակոտորութիւն դրաւ զաշտի շարք մը յարտական խումբերուն եւ մանաւանդ Մուշ քաղաքի երկայնայ եւ ցարգաւանայ խումբերուն վրայ, երբեմն գիշերային արշաւներ կատարելու եւ սասախլ ուժ մը ցուցադրելու, բայց զսնոհք զգուշացուց զճուակն կոխներէն: Անոնք ցուցական զէք մը միայն ունէին: Այս շարժումները մարտական ընդարձակ ցանցի մը գոյութիւնը կը զգացնէին: Քրքական բռնակարութեան այլքին այս խորտումները աւելի վտանգաւոր թուեցան, քան Տնտայական արշաւանքները: Քրքական բանակը եւ ոստիկանական ջոկատները ստիպուեցան Սասունի ճամբաները հսկողութեան տակ պահել եւ մօտէն հետեւել հարիւր տասնեւերկու գիւղերու անցուղարձերուն:

Սարհատի զաղտնի եւ անակնկալ հանդիպումները, քրտական պէկերուն, լրջօրէն կ'անհանդստացնէին Օսմանեան իշխանութիւնը: Քրտերը զաղտնի կազմակերպութեան ըմբռնում չունէին, եւ իրենց հիացումը կ'արտայայտէին բարձրադադակ երգերով, ամէն տեղ: Քուրքերի ականջ կըտրած՝ աւելին կը լսէին, քան ինչ որ էր իրականութիւնը:

Առանց մեծ զէպքերու, Տարօնի աշխարհը կ'ապրէր խորհրդաւոր մտահոգութեան մէջ:

Սարհատ սուրհանդակներ զրկած էր ամէն կողմ, պատգամաւորներ ընտրելու Իււրան Բարձրաւանդակի շրջանային ժողովը գումարելու համար: Պատգամաւորները օրն ու տեղը պիտի իմանային աւելի ետքը:

Ուժերու համախումբը եւ կազմակերպուած շրջաններու իրար լճէթալումը Հրայրի ժամանակաշրջանի ճամբան բռնած էր:

Սարհատ կը լսէր մարտերուն ձայնը Կովկասէն, ուր իր գիտակից ընկերները արեւելեան հայութեան ճակատագիրը կ'արձանագրէին Ղարաբաղի եւ Լեռնահայաստանի ժայռերուն վրայ: Հոն էին Մուրատն ու Սեպուհը, Կորիւնն ու Խէչօն, Արիւծ Աւագն ու Սմբատը, Նիկոլ Դումանն ու Համազասպը...

Խանդավառութիւն եւ փոթորիկ կար Արարատեան աշխարհին մէջ, ու սահմանէն ասդին՝ նոր զէնքեր շանցան, նոր անձնուէրներ շմտան երկիրը, ուր ազատութեան դրօշն արիւն կը կաթէր:

Սարհատ կը սպասէր Վանէն օժտնդակ ուժերու: Վանի մէջ, այդ օրերուն, կը գործէին Արամն ու Իշխանը, Սարգիս Բարսեղեանն ու Բուրէնը: Սարհատ յոյս ունէր որ անոնցմէ մէկը պիտի անցնի Տարօն:

Տարօն, այդ օրերուն սարսուռ ազդող անուն մը ունէր, - Կիւտան կ'էմէրի Երկիր կը կոչուէր: Այսինքն՝ ով որ հոն երթայ, ետ չի դառնար...

Ազատութեան գոհասեղան...



Ազատութեան գոհասեղանին շուրջ հաւաքուած էին Արամն ու Սարգիսը, Մալխասն ու Իշխանը: Հոն ժամանած էր Բուրէն Լեռնապարէն, ուր կը գործէր Իշխանին հետ տարիէ մը է վեր:

Արիւնոտ օրակարգ մը կար սեղանին վրայ, որ իբր լուսամբը պիտի դռնէր այդ գիշեր: Գործելի մը պիտի գրկէին Տարօն, ուր գացողը նա պիտի չգտանար...

Դիւրբին էր դարձիչի մը համար, երբ իբր ազատ կամքով կը նետուէր ազատութեան հրահրին մէջ: Բայց գծուար էր, երբ ընկերոջ կը նետուէր կրակին մէջ, զուգարարներն հրազանայու, հաստատ գիտնալով որ ընկերոջ այդ կրակէն պիտի այրի: Այս հագեցանութեան նշման տակն էին Վանի պատասխանատու մարմնի անդամները, ազատութեան սեղանին շուքի համախմբուած:

Իշխանն ու Ռուբէն եկած էին Լեւոնապարէն: Իշխանը տարիներէ ի վեր Լեւոնապարի մարտական ուժերու գեկավարը եղած էր: Նոր ժամանակն Ռուբէն նախընտրած էր Լեւոնապարի մէջ դործել, Իշխանին հետ: Բայց տարին չբոլորած՝ այս երկու գէժքերուն ջուրը մէկ արուէն չհասնցաւ: Թե՛ Ռուբէն կ'ուզէր հետանալ Լեւոնապարէն:

Արիւնոտ օրակարգը կը մնար սեղանին ու Վասպուրականի պատասխանատու ընկերները ճշիւ լռութեան մը մատնուած էին:

Սարգիս, որ նոր ժամանած էր եւ ամէն խնդրին կը մօտենար ճակատէն եւ պայծառ մտքով, բացազանչեց.

- Այս ի՞նչ մութ բաներ կը խօսիք, ի՞նչ լսել է կիտան կելլա՞գի էր կիրը, բան ըսէք, բան իմանանք:

Արամ կարգաց Սարհատի նստակը.

- «... Ես այսօր կամ, վաղը չկամ. արիւնի այս քամբում վրայ իմ օրերը հաշուած են: Մէկը ձեզմէ քոյ անցնի Տարօն: Ազատագրական կրօնի լծուած է ամբողջ ժողովուրդ մը, ու զեկավարի պէտք ունի...»

Արամ աւելցուց.

- Սարգիս, կիտան կէլմէջի երկիրը Տարօնն է: Սարհատի սրտաուշ հրահրին պիտի պատասխանենք...

Պահը խորհուրդով ծանրացաւ:

Արամ ոտքի ելաւ.

- Ես երկիր մտած օրէն ուրիշ ըրած եմ անցնիլ Սասուն: Ես թե՛ նա՞նու եմ երթալու Տարօն:

Ըտու ու նստեցաւ:

Սարգիս.

- Իմ թեկնածութիւնը կը դնեմ: Հոս գեկավարներ կան, հոն բանի մը պէտք կու գամ:

Ըտու ու նստեցաւ:

Իշխան.

- 1903-ին, գէլի Սասուն իմանի եւ նեվրուզի արշաւանքին մասնակցեցայ: Ծամբաւ կիտաւ մնաց... Ես կ'երթամ Տարօն:

Ըտու ու նստեցաւ:

Մարիամ.

- Ես կ'երթամ Տարօն, եթէ ընկերները յարմար կը գտնեն: Իրարու ծանկն բարձր ընկերները կանգնեցան, իրենց թեկնածութիւնը դրին:

Ըտու կը մնար Ռուբէն, խոռովան գէժքով:

Լուսթիւնը երբ երկարեցաւ, Արամ դարձաւ Ռուբէնին.

- Արջու տղա՛յ, դուն ալ քան մը ըսէ...

Ռուբէն զայրոյթով խօսեցաւ.

- Արամ, դուն Տարօն չես կրնար երթալ, զիչէրը աչքդ բան չի տեսներ: Այդ երկրի դործերը զիչէրը կը կաարուին: Սարգիսն ալ չի կրնար երթալ, երկրի սլայմաններուն նօր կը ծոնօթանայ: Իսկ Մայլառը Հիւանդկախ ժըն է, Սարհատին բե՛ռ զրկենք: Իշխանը միակ ուժն է, որ կրնար Սարհատին հետ գործել, բայց Իշխանը զիս Լեոնապարէն կ'ուզէ հեռացնել ու ինքն ալ անհրաժեշտ է Լեոնապարին: Ուրեմն, ես եմ թեկ- ճածուն Տարօն մեկնելու, պայմանաւ որ Վասպուրականի կազմակերպու- թիւնը Դատմանի եւ Ախլաթի ճամբաները բանայ, ու մենք կ'անոնաւոր հաղորդակցութիւն ունենանք իրարու հետ:

Ռուբէնի քննադատական ու զայրայից խօսքերը ընկերները ժախկ ըրին լուսթեամբ:

Ռուբէնի առաջարկը կը դառնար ժողովի որոշումը: Անոր հակառակ- գիրը որոշուած էր: Պիտի երթար ազատագրական արիւնտ այն երկիրը, ուրկէ անձնուէրները ետ չէին գտնար...

Այդ ժողովը կը վերջանար 1906, Յունիս 19 - Յուլիս 1-ին:

Ու Ռուբէն Արամէն կ'անէր յանձնարարական նամակներ եւ կը հե- առնար Վանէն, առանց ընկերներուն մնաս բարով ըսելու:

Արամ անոր հետեւէն ձայնեց.

- Արջու տղայ, ա՛րջ, կեցի՛ր համբուրուինք:

Բայց Իշխանի եւ Ռուբէնի ձիւտոր խումբը արդէն մուք ծառուղիին մէջ կը կորսուէր:

Ռուբէն խռովքի, զղջումի եւ յուզական մտածումներու մէջ էր ու լուռ: Եւ սակայն ճամբաները պիտի կտրէին, տեղէ տեղ պիտի անցնէին, ձիերը թողած՝ նաւակներուն պիտի ապաւինէին, յետոյ լիւններուն մէջ պիտի նետուէին, հասնելու համար Սուրբին կատարը:

Իշխանը կ'երդէր իր հօր ձայնով: Այդ լիւններուն տէրն էր...

- Հագար արա՛ս Մօկաց Միթղէն...

Ու Իշխանի ձայնը կ'արձագանդէր Ռչատնեաց ժայռերուն մէջ:

- Օրն էր Ուրբաթ, լոյս ի Ծաբաթ...

Իշխան մէկէն երդը դադարեցուց:

- Ռուբէն, լուսաստղը կ'ելլէ: Ես Լեոնապարի ճամբան պիտի բըռ- նեմ, իսկ դուն՝ կիտան կելլի՛ր մէջ կը նետուիս:

- Ուր որ կտրաւ կայր...

Ու անոնք սկսան գրուցել հաշտ ու ընկերական ջերմութեամբ:

Իշխան տասնեակ մը տեղական զինուորներ տրամադրեց Ռուբէնին, ու երբ պիտի բաժնուէին, անոնք երկարօրէն գրկախառնուած մնացին:

Ռուբէն աւելցուց.

- Ընկերներուն սիրտը կտրեցի, մնաք բարով լըտի: Կը խնդրեմ ի՞մ կողմէ բուրբ համբուրես: Մահուան դացողները քէն չեն պահեր...

Ու Ռուբէն իրեն տրամադրած տասնեակով բռնեց Դատմանի ճամ- բան:



Մութ գիշեր էր, խուճրը կ'հրթար արագ-արագ :  
 Մոյու այրքնեբուն շտաշը կը լտուկը ցցունքներէն եւ խորշերէն : Ու  
 խուճրը կը մանէր Ռչտունիքի այն կիրճերուն մէջ, որոնք պիտի բացուէին  
 Բզնունեաց սահմանին վրայ, Դատվանի մօտերը :

Որքա՞ն ճամբայ կտրած էին, ասին չունեցան չափելու : Ժայռերն ու  
 խորշերը լեզու ելած էին : Դիմացէն մարդիկ կ'առաջանային մեծ աղմու-  
 կով, ու խուճրը ձեռքը դէնքին՝ կը հարցնէր .

- Ո՞վ էք, ձայն տուէք... Թէ ոչ կը կրակենք...

Պատասխան չկար : Ու բազմութիւնը համարձակ կ'առաջանար :  
 Խուճրը շփոթած, միշտ նոյն չարցումը եւ սպառնալիքը կ'ընէր, ա-  
 սանց կրակելու :

Ռուբէն ստիպուած կրակ բացաւ : Հրացանի ճաթոտոցը սկսաւ եր-  
 կուսակէ, ու նեղ կիրճերը խաւար գոտիք մը դարձան : Առաջին բախումէն  
 ետք ով ո՞ր քարին կառչած էր՝ անորոշ մնաց :

Ռուբէն իր շուրջը նայեցաւ եւ ասանակէն երիտասարդ մը տեսաւ  
 իր կողքին : Անորոշին նետուած գնդակները օլին մէջ կը սուչէին : Իրենք  
 ճամբայէն վար իջնան ծովակի եզերքը, ու ժայռերուն տակ ապաստանեցան :

Վերի կիրճին մէջ, թրքերէն եւ քրտերէն պոռչտուքը կը շարունակ-  
 ւէր : Առդին-անդին կը խուզարկէին, ու երբեմն անորոշ ձայնի մը ուղղու-  
 թեան կրակ կը բացուէր :

Ռուբէն նշան բրաւ իր ընկերոջ, որ աւազի վրայէն փոքրոց աւով  
 յառաջանան դէպի Դատվան : Պահ մը ետք, ձայներն ա'լ շտուեցան : Ռու-  
 բէն ետ նայեցաւ : Երիտասարդը անհետացած էր : Կ'երեւի իրեն ծանօթ ձո-  
 րերուն մէջէն դիմած էր դէպի իրենց դիւղը :

Ռուբէն մինակ կը մնար առաջներուն վրայ, տակաւին ոտք չդրած  
 Տարօնի դռներուն : Ու այդ ողբերգական պահուն, անընկեր, մինակ մնա-  
 ցած, Արամի խօսքը իր ամբողջ ծանրութեամբ մտքին պատկերացաւ :

- Ահա, քեզի Կիւսան կէլմէզի երկիրը, - ըսաւ ու շարունակեց ճամ-  
 բան դէպի դիմացի փակերը :

Արշալոյսը բացուելու վրայ էր, երբ Ռուբէն հասաւ հայ դիւղի մը  
 պատերուն տակ : Մոյու մրմունջներէն կարծես թէ պիւղը կը մրափէր :  
 Զգոյշ քայլերով մօտեցաւ առաջին տան գրան, Տարօնի առաջին տունը :

Պատահմունքն էր, որ մինակ մնացած մարտիկի ճակատագիրը պե-  
 տի որոշէր :

Դուռը բախեց : Ձայն չկար : Երկրորդ բախումին՝ կանացի ձայն մը .

- Ո՞վ է...

- Ճամբորդ եմ, քոյրի՛կ :

Ու դուռը բացուեցաւ : Ռուբէն արագօրէն ինքզինքը ներս նետեց :  
 Կինը սլալայած հիացումով կը նայէր զինուած ճամբորդին, ու անսլալով  
 յուշումով .

- Դուն բարով եկար, Ֆետայի՛ հոգայր, ո՞ր հրեշտակը քեզ առաջ-  
 նորդեց այս տունը, որ Ֆետայու տուն է, ու սպառնոր...

Նահատակուած Փետայի նատոյի կինն էր : Հաւատարիմ պահակը  
 աչքատագրական յեղափոխութեան :

Այս քաջակորով կինը Ռուբինը պահեց եւ կերակրեց եւ դուրս եկաւ մթնուրբար հոտոտակու։

Վտանդուած էր դիւզը եւ շրջակայքը։ Զորքերն ու ժոնտարմները ամէն տեղ էին, խուզարկու աշքերով։

Գիշերը Ֆետայիներ անցած էին ղէպի Դատվան...

— Աղբէ՛ր, այս գիշեր ինքզինքդ նետէ նեմբութ, Աստուած քեզ հետ։ Այստեղ անպահով է, որեւէ մէկուն չլստահես...

Կէս գիշերին, Ռուբին, աչքը նեմբութի կատարին, բռնեց բարձունքներու ճամբան։

Երկու օրուան ղէպերը ցնցած էին գինք։ Մինակ, ու անել ճամբայ։ Հաղորդակցութեան թելը կտրած էր, ու Ռուբին պիտի ապաւինէր իր ուսմին ու հնարամտութեան։ Արշալոյս բացուած, Ռուբին արդէն նեմբութի պուրակներուն մէջն էր։ Մէկ կողմը Վանի կապոյտ ծովը, միւս կողմը Մլոյ ծով դաշտը։

Վեց օր անցուց այդ լեռան բարձունքներուն վրայ։ Առտին օրը կրծկեցաւ պուրակներուն մէջ եւ ուսումնասիրեց ճամբաները, շրջապատը, դիտեց գիւղերէն բարձրացող ծուխը ու մնաց անօթի։

Յաջորդ օրը, Զրհուրի հովիւները երեւցան այդ պուրակներուն վարերը։ Ռուբին, յանկարծակի, անոնց առջեւն էլաւ։ Հովիւներէն մէկը պատանդ պահեց, միւսը գիւղ ղրկեց որ կոմիտէին յայտնէ, թէ Ֆետայիներու խումբը հասած է այս շրջանը եւ պաշարի պէտք ունի։ Քանի մը ժամ ետք, Զրհուրի մարտականները առատ պաշարով լեռան կողին էին, Ռուբինի դիմաց ու անճամբեր էին խումբը տեսնելու։ Ռուբին խումբ շուռէր, ու սուտը խորհուրդի վերածեց։

— Ռումբին տեղը զաղանի պիտի մնայ, ղէպը կրնայ պատահել։ Դուք վերադարձէք գիւղ, եւ այս երկտողը հասցուցէք Գէորդ Չավուչին։

Երկտողին մէջ Ռուբին գրած էր, որ դիմաւորողները այս պուրակներէն անդին ճերմակ դրօշակ պիտի կախն ծառերէն, որպէսզի մենք հաւատանք, թէ դիմաւորողները մեր հաւատարիմ ընկերներն են։

Գիւղացիները հեռացան։ Հովիւները ուրիշ կողմ գարձուցին հօտերը։ Ռուբին մինակը մնաց եւ իր տեղը փոխեց։ Հիմա պաշար ունէր ու պիտի սպասէր լարուած ուշադրութեամբ։ Ամէն օր խուզարկու հայեացքով մօտն ու հեռուն աչքէ կ'անցնէր։ Քանի մը օր անցած, ճերմակ կտորներ կախուած անասն ոգիացի պուրակի ճիւղերէն։

Ռուբին, ձեռքը ղէնքին՝ մօտեցաւ այդ պուրակին։ Թուփերու մէջէն դուրս եկան Մլոյ տարազ հագուած հինգ զինուածներ ու համարձակօրէն կանգնեցան Ռուբինին առջեւ։ Անոնց առաջնորդը հին Փետայի Յակօն էր, որ երկտող մը բերած էր Սարհատէն։

— «Ս. Ռ. Յակոբիմ վստահէ, ու շարունակէ մամբադ ղէպի մեզ»։  
ՅԱՐՀԱՏ

Տղաքը մէկ Ռուբինին կը նայէին, մէկ ալ շրջապատը կը խուզարկէին։ Վերջապէս Յակօն հարցուց․

— Խումբը ո՞ւր է, ժամանակ չկորսնցնենք...

Ռուբին կը զգար, թէ ապահով խումբ մը ունի։ Լարուած զիղերը հանդարտեցան եւ ընդհանուր թուրութիւն մը եկաւ վրան։

Հնարած սուտը խոստովանեցաւ: Մրտանց խնդացին, ու մութը իջնելուն, բռնեցին Մուշաղչէնի, Վարդէնիսի, Արտօնքի, Յրօնքի ճամբաները ու երբեմն ալ լեռներուն ապաւինեցան: Գիւղէ գիւղ, շրջանէ շրջան նոր ճարտական խումբ մը առաջնորդ հանդիսացաւ, վստահ, ճկուն: Ֆետայական աշխարհի կազմակերպութեան պրկին մէջն էր մինակ մնացած ճամբորդը, ու կիտան կելվէզի կոշմարը կը փարատէր Ռուբէնի մաքէն:

Գիւղէ գիւղ, նոր միջավայրի մը, նոր նկարագրով տեղական մարտիկներուն հետ պործ ունեցաւ Ռուբէն: Զօրաւոր կազմակերպութեան մը պահանջի ցանցը կար ընդարձակ դաշտին եւ լեռնաշխարհին մէջ: Գիւղերանց եղած ճամբորդութիւնները ցոյց տուին որ գիւղերային ճամբաները գաղտնի կազմակերպութեան տիրապետութեան տակն էին:

Ռուբէնը փոխադրող վերջին խումբը այդ պիշիւր կը հասնէր Արածանի եզերքը, Սուլուխ պիշիւրի մօտերը:

Կու կուի ձայներ փոխանակուեցան: Թուփերուն մէջէն սպառազէն երեք Ֆետայիներու հասակը բարձրացաւ:

- Տղամ'յ, Յակօ, ձայն տո'ւր:
- Արամ, դա՞ւն ես:

Պեմբերն իրարու մօտեցան: Զերմ բարեւ մը, ու անմիջապէս կարպազրութիւն: Ճամբորդին ճամբան պիտի շարունակուէր:

Արամին հետն էին Մանուկ Փեթարին եւ Մեխիք:

Յակօն դարձաւ անոնց:

- Արամ, ձեզի կը յանձնեմ Սարհատի աւանդը, տալ-սալաւաք: Աստուած հետեւնիդ:

Յակօն իր մարտիկներով դաշտին արեւելքը կը դառնար եւ խաւարի մէջ կը կորսուէր: Անոր հետն էին Հասէն ու Հասանօն: Անոնց ներկայութիւնը պիտի առաջնորդող խումբին մէջ գարձանքի մատնած էր Ռուբէնը:

Ռուբէն հիմա հին Ֆետայիներուն հետն էր: Հիացմունքով կը նայէր այս վիճակաւ մարդոց, որոնք հեքիաթային ուրիշ աշխարհէ մը ծնունդ առած կը թուէին:

Անոնք անցան Մեղրապետը, բարձրացան Կուրախիկի կողերը, անցան Բարձորի բարձունքներէն եւ ուղղուեցան դէպի Ղլլաղաճի անտառը:

Արդէն անտառի մէջն էին, երբ ձայն մը բարձրացաւ, որ թրքերէն կը հարցնէր.

- Այդ ո՞վ է:

Ձեռքը բլթակին՝ Արամը կանդ առաւ:

Մանուկ օրուան նշանաբանը ձայնեց.

- Տուն չէք:

- Տնուոր ենք, ձայնեցին միւս կողմէն:

Անոնք իրարու մօտեցան: Զօլօն ու Շէնիկի Ղազարն էին հսկողները: Մանուկը Զօլոյին.

- Տեսէ՛ն, թրքերէն ինչո՞ւ ձայն տուիր: Քիչ կը մնար գնդակ մը ուսէիք:

- Այս դեպի կտուցները գնդակ է որ նետե՛ն... - Զօլօն վրդովուած՝ խօսքը պիտի շարունակէր, երբ Ղազար ականջին փոփոսաց.

- Կոնէ՛, ուրիշ մարդ կայ հետեւին:

Ու անոնք յառաջացան դէպի անտառի կեդրոնը, ուր Ֆեռայինները կը հանգստանային:

Ֆեռայինները թիկնած էին ծառերուն, դուխնին ձեռքին յենած, կը քնանային, կամ կը մրափէին: Անոնց ջովերէն անցան: Ոմանք գլուխնին վերցուցին, ու նորէն հանգչեցան:

Արամ Ռուբէնին ցոյց տուաւ մեծղի ծառը...

- Սարհատն այն ծառին տակն է...

Ռուբէնը ձայներէն Սարհատ իր տեղէն լարուեցաւ:

- Արամ, էդ դո՞ւն ես, մինա՞կ ես թէ զոյգ...

Արամ առաջացաւ եւ զեկոյց տուաւ:

Սարհատ տեղէն ելաւ, արագ անցաւ քնացած Ֆեռայիններու ջովէն, Ռուբէնն առաւ իր զրկին մէջ:

- Բարո՞վ եկար դուն, զարի՞ր ազբէր:

Սարհատ, այդպէս Ռուբէնը զրկած տարաւ ծառին տակը:

- Տղա՞ք, դուք գացէք եւ հանգստացէք:

Սարհատն ու Ռուբէնը մինակ մնացին:

- Տղա՛յ, գուն յողնած ես ու անօթի, ահա՛ քեզի քիչ մը կոնեակ, ու այս հացին մէջ փաթթուած հաւի միս, կեր ու խօսէ: Ի՞նչ լուրեր կոմկասէն, հոյ-թաթարական կռիւնները ս՛րբ հասան, ի՞նչ կ'ընեն Սրամն ու Իշխանը, Շամի շրջանը ե՞րբ պիտի բանայ Դատվանի դռները:

Ռուբէն զոյգի ախորժակով կ'ուտէր ու կը պատասխանէր Սարհատի հարցումներուն:

Հանդիպումը ընկերական, պարզ ու անմիջական եղաւ: Ռուբէն կարծես տասնեակ տարիներու ծանօթ ու մտերիմ եղած ըլլար Սարհատին: Անծանօթութեան սահմանը ջնջուած էր, ազատագրութեան ելած այս մարդոց երակներէն նոյն արիւնն էր որ կը հոսէր:

- Ռուբէ՛ն, դուն քու սուպրակը դատարկէ, վաղը մեր շրջանի գործերուն կը ծանօթանաս:

Անոնք խորհրդաւոր ու մեծղի ծառերուն տակ զրոյցը շարունակեցին, մինչեւ արշալոյսը բացուեցաւ, ու նոր մրափեցին:

Ռուբէնի յեղափոխական կեանքին վրայ նոր արշալոյս մը կը բացուէր...

Կ. Ս.

(Շար.)

### ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԵԿԱՆ

Քեզ փնտոնցի ցայց ու տխր խենթի մը պէս յարածամ,  
Այլ մնացիր հոգւոյս դէմ զերթ անաղարտ սրբութիւն,  
Լռչսիդ ծիծաղն աչքերուս՝ դարձայ մոլոր ու անհուն,  
Անմատչելի կոյս եթեր՝ երջանկութիւն հոգեկամ:

Համբուս վըրայ գոհեցի հագար սերեր քեզ համար,  
Բագում պահեր բերիբառիք, սրտիս հրայրքը վարար-  
ես, տարփանփիդ համբոյրիմ կարօտաբաղձ նոյն տղամ՝  
Զուր պատրանքներ հիւսեցի՝ երջանկութիւն հոգեկամ:

Ծաղկամանէն վառ յոյսիս ժպտացիր օր մը յանկարծ  
Մակնախանի պէս քննոյշ. նուրբ բերքերով դիրբագաց,  
Որուն նայուածքն ազուական ամայփին մէջ օրերուս  
Հատագայթներ արձակեց սիրտանփի կենսալոյս:

Հպայ հազիւ երբ սակայն ծաղկամարմին հոգիիդ՝  
Թառամեցար դուն աւա՛ղ, ինկան բերքերդ շիբ առ շիբ  
Եւ քեզի հետ առյաւէտ իղձերս ամէն քօշնեցան,  
Իմ անմատոյց սին երազ՝ երջանկութիւն հոգեկամ:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ



## ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՐԴԱՅԸ

«Բագինի մէջ առաջին անգամ երեւոյց այս անունը՝ Գրիգոր Յարսեան, միշին տարիի մտաւարական մըն է, որ վերջերս ձեռագրեցի մէջ յայտ ընծայած «Գահակիտոյ Թուրքիան» խորագրեալ ընդարձակ յօդուածաշարեով յայն անուա- րըբրոսքիւն տեղեկոց մեր իրականութեան մէջ:

Երկիրները եւ անոց ընկերային կենսիչ ուսումնասի- րելու շնչաւած հսկում մը ունի Յարսեան եւ այդ ուղղու- քեանք կատարած իր ճանրորդութիւններուն ու նրպատումն- րուն ընթացի՛ն՝ որոսցած ու գրի տած է գրական մկարտ- ցիր ունեցող այլազան միտքեր, որոնք պարբերաբար պիտի մերկայացնենք «Բագինի» ընթերցողներուն:

### ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ

Ա.

Բժիշկը հազիւ դուրս ելած՝ Օսման ազան կանչեց իր զաւակները, Մուրատն ու Իպրահիմը: Անենակին դուռը փակել տուաւ:

Աղային վիճակը յուսահատական էր: Մասնաւոր հիւանդութիւն մը չունէր: Դե՛ր ալ չէր, Ղիզերը գէշ կերպով յոգ- նած, մարմնին գիժալքական ուժը ջլատու- ած էր: Հակառակ հուժկու, չարքաշ մէկը ըլլալուն՝ ներքին ինքնախորտա- կումը, ժամանակի ընթացքին, դանդաղ- օրէն հիւժած էր գինը:

Իր ծանօթները գինը կը ճանչնային իրբեւ լռակեաց մէկը, որ անտառներու մէջ ժամերով պատիւ կ'ուզէր մինակը՝ թաղուած իր խոհերուն մէջ: Այդ խոհերը զողանքներ էին: Ոչ ոք կրցած էր հա- յօրդակից ըլլալ իր մտքերուն հետ, ոչ

իսկ իր զաւակները:

Կը սիրէր անուսուն կամ երեկոյ- եան՝ զաւաթ մը կաթ խմել տան դի- մացի հսկայ կազմախիի բունին կըռթ- նած: Այս ծառը միայնակ կը հսկէր խոր ձորի մը վրայ, ուրկէ կ'ընկնէին կրիկ- կան զաւուները, մինչև Ատանա:

Այս ծառի շուքին խոչոր քաբ մը կար, ժայռի կտոր մը: Օսման ազան բնու չէր մտնար ցուցամատի ծայրովը, երկու զծով նշան մը ընելու, այդ ժայռին վրայ՝ խաչածնէ, շրթներու մեղմ, հա- զիւ տեսանելի շարժումներով բառեր մը մըթմըթալով, գրեթէ ամէն օր, տաքե- ներէ ի վեր:

— Քու հիւանդութիւնը՝ սպրիւ չու- գելը է, — կ'ըսէր իրենց բարեկամ բժիշ- կը, որ յաճախ Ատանայէն այդ շրջան- ները կու գար որսի համար:

Այցելու բժիշկը Օսման աղային հետ

կը նստէր ու զանազան նիւթերու շուրջ կը խօսէին ու միասին կը ճաշէին:

- Պէտք է վայելի վիտամուս կեանքի հաճոյքները,- կը խօսէր բժիշկը,- մինչ դուն, ընդհակառակն, ինքզինքդ փնայընելու ընձանքովն ես:

Սակայն, ո՛չ ոք, ոչ մէկ ձեռով կըրցաւ վերակիրտել այս մարդուն հոգիին տանարը: Աստուածները չկրցան յարութիւն առնել իր մէջ, կեանքի իմաստը արժեւորելու համար:

Այս անգամ բժիշկը տարբեր տրամադրութիւն մը ունէր: Սեննակէն դուրս ելլելուն՝ երկու երիտասարդները դիմաւորեցին զինք, հարցական ակնարկներով:

- Գրուածք չի ջնջուիր: Ճակատին այսպէս գրուած է եղեր: Թող զթասէր-նորու զթասէր Աստուած իր նախընտրուածներու շարքին դասէ զինք: Աղօթենք Ալլահին, եւ իր մարգարէին եւ փառք տանք, որ ձեր հայրը որպէս հաւատացեալ միայնիման պիտի մեռնի:

Բ.

Աղան պահ մը դիտեց զաւակները:  
- ձեռտիլ կ'ուզեմ: Ետկեցէք զիս,- աստջարկեց:

Տղաքը կատարեցին փափաքը: Բարձ մը դրին կանակին:

Միձուանջ մը կը նեղէր այդ մահա-մերձ մարդուն սիրտը: Խորունկ շունչ մը ասու: Փակեց աչքերը: Յանկարծ զէմ-քին միանները շարժիլ սկսան: Արեան հոսանք մը անցաւ դալկացած մորթին տակէն: Ճակատը փայլ ասուաւ:

Աչքերը բացաւ ու ծոցէն պզտիկ կապուց մը հանեց... Մուրատին երկնցուց, որ բանայ:

Նշանտուքի մատանի մը եւ բանալի մը դուրս եկաւ:

- Ասիկա միակ յիշատակն է, որ ունիմ մօրմէզ: Իսլամանայէս ի վեր պահած է այս թաշկինակին մէջ... Հետզ վերջուր... բանալիով բաց ընկայիք սնտուկս... մէջինները ինծի բեր:

Ընկոյղէ սնտուկը այդ տան խորհրդաւոր առարկան էր, տնեցիները անձանօթ պարունակութեանը, զանազան աստապելիներ կը պատմէին իրարու, խըզպալու համար: Մուրատ բանալ Գանաց: Այսօր զեցաւ: Մտիպուած կտրեց վրայի սոսկախ կղպանքը: Դուրս հանեց սեւ պղեւտ մը, որ տարիներով՝ փոշիի տակ կորսնցուցած էր դոյնը, չափիկ մը, զոր մը կօշիկներ... փայտէ տուփ մը... տարու այդ ամէնը:

- Այս այն հագուստն է, որ հագած էի կոտորածի օրը, երբ, տակաւին հայ քրիստոնեայ էի... մաքրէ, ու, ես՝ սնտուկին մէջը դիր... մահէս ետք այս պիտետով կը թաղէք զիս կաղամարիի շուքին տակ դանուռը բարեկամի՝ Պողոսին զովը, խոշոր զարին տակը:

Բացաւ տուփը:

- Այս խաչը Երուսաղէմէն է, Հայրս բերած էր: Մեր սենեակի պատէն կախած էինք... Այն օրը, թուրքերը այս խաչն ալ կոտորած նետած էին... ես զըտայ... փակցուցի կտորները...:

Երկիւղածութեամբ համբուրեց մի-թենիի փայտէ խաչը... Իպրահիմի երկարեց:

- Պահէ այս խաչը... Տունիդ պարախաչը անպակաս կ'ըլլայ... Հրաշա-դորձ է...:

Տուփէն դուրս հանեց թօշնած, վրտա-սած թուղթերու ծրար մը:

- Այս մեր տան սուրբ գիրքն էր... Նազելին ամէն գիշեր, քնանայէ աստի, զլուխ մը կը կարդար... Մեր տան քահանայի մեղքովը գրուած է Հոն մեր ամուսնութեան թուականը, նաեւ ձեր ծննդեան թուականները:

Լռեց:

Պատուած, գունաթափ, հարկաբ-ւոր թուղթի կտորները ափերուն մէջ սեղծեց եւ շրթներուն տարաւ:

- Հայր մեր... որ յերկինս ես...:

Զկրցաւ շարունակել:

- Որ յերկինս... ես... - Զանաց ան-պամ մ'ըն ալ:

- Ար... յեր...:

Կոկորդը սեղմուեցաւ:

Հոգիին մէջ կուտակուած, քարայրացած, տարիներու տառապանքովը աղի - արցունքի հեղեղ մը յանկարծ գուրու վազից աչքերէն:

Հիւանդը չկրցաւ շարունակել իր «Հայր Մեր»ը: Զկրցաւ խօսիլ: Բառերը խոյս կու տային լեզուին տակէն: Բառերը արցունքի կաթիլներու կը փոխակերպուէին: Քսանդերեք տարիներէ ի վեր արցունքի կաթիլները կապուէրէ զընդիկներու նման կը ճնշէին սրտին վըրայ... Կ'ուզէր լալ... սակայն արցունքները գուրու չէին զար:

Քսանդերեք տարիներէ ի վեր չէր կրցած խօսիլ իր Աստուծոյ հետ... սիրտը թեթևացնել... «Հայր Մեր»ով մը աղօթել:

Սըրբատու թերթիկներու ծանրութեամբ՝ ձեռքերը վերձակին վրայ ինկան: Գլուխը ետ առաւ, բարձին կոթընցուց:

Փ.

Քսանդերեք տարիներ առաջ՝ ինք Միհրանի էֆէնտի մըն էր, երեսուննոց առոյշ, հուժկու, յաղթանդամ երիտասարդ մը, թխադէմ, անուրի նման սեւ աչքերով, սեւ մազերով, ճակատէն կախած հաստ յոնքերով: Թաւ, երկար, նետի մը նման սրածայր պերիերով՝ իւր ըրիտ քալուածք մը ունէր: Զի՞նչ կոնակին, Ատանայի սալայտակուած փողոցներէն անցած միջոցին՝ հրամանատարի մը տեսքն ու վեհաբարներն ունէր: Մարդիկ ակնածանքով եւ համակրանքով կը դիտէին իր անցքը: «Պէտքերէն մարդ կը կախուի...» «Աստուած չար աչքերէն հետեւ պահէ...», կը զովէին զինք ու իր արեւին համար կ'աղօթէին:

Հօրը մահէն ետք, սրպէս միակ ժառանգորդ, ստանձնած էր զեկամարութիւնը ամբողջ հարստութեան: Անծայրածիր ազարակը՝ նարինջի պարտէզներով ու բամպակի եւ ցորենի արտերով՝ Քաղաքին կից՝ բլուրներուն վրայ՝ պարտէզ մը, պողպատու ծառերով ու որթա-

տունկերով, տուներ ու խանութներ, նաև խան մը՝ քաղաքին մէջ:

Ատանայի կուտակայն ու ստիկանայեալ յաճախ սեղանակից կ'ըլլային իրեն: Ի՞նչու միշտ բաց էր բարբարարան-լանութեանց առջեւ: Աստուած տուած էր իրեն, իր ձեռքն ալ միշտ զրոյանն էր՝ օգնելու եկեղեցիներուն եւ շպրոցներուն, նոյնիսկ՝ մզկիթներուն եւ մատրանալեւան: Աղքատներուն հայրն էր, իր մօտ ուղիտարիլը մեծագոյն բախտաբերութիւնը կը նկատէին քաղաքի բանօրները:

Ամուսնացած էր անուսկան ընտանիքէ՝ Նազնիիին հետ, զարգացած, զեղնցիկ աղջիկ մը: Երեք զաւակներ ունէին, անդրանիկը Մուրաթն էր, հօրը նման թխորակ՝ եօթը տարեկան, Արթուրն էր՝ մօրը նմանակը, իսկ երեք տարու Տիրուհին՝ հօրը սաթէ մազերը ու աչքերը ունէր, իսկ մօրը ձեռնապարտակ մօրթը:

Միհրանի էֆէնտիի հարստութեան մաս կը կազմէին նաև Ատանա եւ Մերսինի գրամատներու մէջ պահ զրուած հնչուն ոսկի զոսթարները, ինչպէս նաև Հանի աղայի հսկողութեանը յանձնարարած աւելի քան երեք հազար դուրի արջառը:

Հանի աղան սերտ բարեկամ կղած էր Միհրանի հօրը, ներկայ գտնուած անոր ամուսնութեան, ծանօթ՝ Միհրանի մանկութեան: Ինք, որ մանչ զաւակ չէր կրցած ունենալ, այս հայ սեւուլիկ մտնչուկը կը սիրէր, հայրական սէրով: Հանիի միակ աղջիկ զաւակը այրի մնացած էր իր երիտասարդ տարիքին ու մերժած այնուհետեւ ամէն առաջարկ վերամուսնութեան: Այս երիտասարդ վերամուսնութեան: Այս երիտասարդ կիները իր ծեր հօրը տան ընդհանուր կառավարին էր: Նոյնպէս աղջիկ զաւակ մը ունէր ձեռնիկ նման աչքերով, սրացիկ յասակով: Գիւղացիները «Էհոնքերու ալ ծեծամը» կը կոչէին զինք: Արդէն հասուն աղջիկ մըն էր:

Ատանայի հիւսիսային շրջաններուն տարածուող Տաւրոսեան լեռներուն մէջ՝ մինչև Կիւլիկ Պողազը, մինչև Պողա-

թը՝ Հաճի աղայի ազդեցութեան գօտին կը նկատուէր: Իր հովիտի գաւազանովը կ'իջէր այդ լեռներու Սօրիւհներուն: Սպիտակ ձորուքը ափին մէջ առած՝ Սոզոմոնի դատաւարութեանը նման դատեր կը տեսնէր:

Հաճի աղայի խօսքը մէկ էր, երկու չէր ըլլար, նոյնիսկ կուսակալին կամ աստիկան-գինուորներու, սպաներու առջեւ:

Միւսրան էֆէնտի իրմէ երիտասարդ ընկեր մը ունէր, Պօղոսը, որ Տարսուհի Ռոպերթ գոլէճը աւարտած էր: Ըօրը մահէն ետք, պարոն Պօղոսը լաւ պայմաններով էր գործերուն ընդհանուր վերահսկող կարգած էր, անոր նուիրելով էր երկու մեծարժէք ու հուսկու ձիերէն մին:

Պարոն Պօղոս նրբակազմ, մտաւորականի տեսքով երիտասարդ մըն էր, նըլանուած՝ Մերսին հաստատուած կեսաւարացի ծանօթ վաճառականի մը աղջկան հետ եւ այդ տարուայ հունձքին կը սպանէին, որպէսզի Միւսրան էֆէնտի կնքաւարութեամբ ամուսնանան:

Օսման աղան, այժմ, կը վերջէր այս բոլորը: Ակնթարթի մը խնդիր էր այդ բոլորին վերջումը, սակայն կ'անիծէր այդ բոլորի մասին մտածելը:

Դ.

Քսան եւ երեք տարիներ...

...Գարնանային օր մը, պարոն Պօղոս զինք զուէն կ'արթնցէր: Տակաւին մութ գիշեր էր:

Մըկու օր կ'ընէր որ Ատանայէն հեռացած էին ու կը գիշերէին ազարակը: Ստիպողական գործեր կային կարգադրելիք:

Մոմ մը ձեռքին՝ պարոն Պօղոսի ետեւէն ներս մտաւ ազարակին պահակը:

— Խեղ ըլլայ, պարոն Պօղոս, հարցուց Միւսրան:

Պատասխանի փոխարէն Պօղոս ճամբայ բացաւ պահակին, որ զիտցածը

խօսի:

— Աղա... ես ձեր ազն ու հացն եմ կերեր: Ես թուրք ալ չեմ: Ձէի ուզեր որ ազաններուս զիւրուն վտանգ մը գայ:

— Խօսէ՛ տեսնեմ, է՞նչ է:

— Արդէն երկու օր է գէշ լուրեր կուրին... Ամբողջ գիշեր ամէն կողմէն թուրքեր, քերտեր, չէրքէզներ եւ ուրիշներ զէպի Ատանա կը վազեն... Աղա, կ'ըսեն՝ թէ ամբողջ քաղաքը պիտի թաւանեն... կ'ըսեն՝ թէ ամէն ինչ պիտի այրեն... կ'ըսեն՝ թէ մէկ հատ հայ պիտի չձգեն... բոլորն ալ պիտի մորթեն... զհրկեղի աղջիկները հետերին պիտի տանին... Աղա...

— Դուն երա՞զ տեսար, մարդ:

— Երազ չէ, աղա... Ինծի ալ եկան... ըսի՛՜ զաղաները զէնք ունին ներսը: Առաւօտուն անպայման յարձակում կը գործեն ձեր վրայ:

Պարոն Պօղոս հաստատեց, թէ ինքն ալ տեսած է մութին մէջ զէպի Ատանա գացող ձիերու թուրքեր:

— Ձիերը թամբէ:

— Ձիերը թամբած եմ, աղա՛, կերան եւ ջուր ալ խմեցին: Ձիեր համար ալ լաւա՛շ հաց, պանիր, խորոված, միս ծրարեցի:

Միւսրան էֆէնտի Պօղոսի աչքերուն նայեցաւ:

Պօղոս զգաց բարեկամին միտքը, հաւանութեան նշան մը ըրաւ:

Ե.

Քառորդ ժամէն ճամբայ ինկան զէպի Ատանա:

Գարնանային գոյ գիշեր մըն էր:

Տասը ժամուայ ճամբայ ունէին կտրելիք՝ ձիերու հանգիստ քայլածքով: Վաղքը ժամանակը կրնար կարճեցնել, սակայն քաղաք չհասած՝ ձիերը պիտի յոպնէին, վտանգի մը պարագային կենդանիները ի վիճակի պիտի չըլլային վազելու: Պարոն Պօղոս առաջարկեց որ

մինչև լոյս միջին արագութեամբ ընթանան, լոյսը բացուելուն՝ աւելի կ'արագացնեն վաղըը:

Հակառակ մթութեան, ամէն կողմէ յարկային ստուերներ կը տեսնուէին: Ձիւտորնէր, սայլէր, էշէր:

Թուրքեր տոնական օրուայ տրամալրութիւն եւ երեւոյթ ունէին: Կարելի էր շտի անոնց բարձրաձայն խօսակցութիւնները, կատակները: Մէկը իրենց ուղղելով խօսքը՝ «Աստուած ուժ տայ ձերուն»: Գացէ՛ք: Մենք ալ կը հասնինք ձեր Լտեւէն», պոռայ: Ուրիշ մը իր իշուն խօսելով՝ «բալէ, քալէ, այսօր կոտորած կայ, կոզոպուտ կայ, Աստուած թուրքին դանակը սուր պահէ»:

Միհրան սարսուռ մը ունեցաւ: Արագացուց ձին:

Մութը փարատած էր արդէն: Երկու ժամուայ ճամբայ կտրած էին: Պողոս ժօտեցաւ բարեկամին ու՝

- Մենք ալ թրքական հազուաանկում ձգտուելու էինք: Վտանդի մը պարագային պէ՛նք իսկ չունենք ինքնապաշտպանութեան համար:

- Այդ ուղտոտ լաթերը վա՞ն պիտի առնեմ: Քալէ՛: Մեր առջեւէն եկող չըկայ, ետեւէն եկողն ալ դիւրին-դիւրին չի կրնար ձիւ հասնիլ:

Ոտում մը թուրքեր մօտէն կ'անցնէին...

- Կեա՛վո՛ւր, պոռաց մէկը ու ձեռքի հաստ դաւազանը շարտեց դէպի հայերը:

- Ձգէ որ երթան խոզերը: Ո՛ւր որ երթան պիտի բռնուին, խրատեց ուրիշ թուրք մը, այսօր փախուստ չկայ այդ խոզերուն:

- Օրը, այսօրն է թրքութեան համար, ձայնակցեցաւ երրորդ մը, ալբատ կ'երթանք, հարուստ պիտի վերադառնանք:

- Օրը այսօրն է, եհօ, այսօր ալ խարճ պիտի մաքրուի անհաւատ խոզերէն:

Երկու ձիւտորներ քառասորակ կը

սուրային արդէն, առանց նկատի առնելու աջն ու ձախը: Արևը ծագած էր. Այս ընթացքով կրնային կէսօրէ առաջ ի՞նչ Ատանա հասնիլ:

- Մեզմէ մէկը թող առաջ անցնի, որ սուրբալու դիւրութիւն ըլլայ, պոռաց Միհրան, - Եթէ որեւէ դժուարութեան մը մէջ դռնուիս մտրակէ դէժդ էլլողին երեսը ու անգլէ անցիր:

Պողոս առաջ անցաւ:

Հակառակ երկար վազքին՝ ձիւրը լուս վիճակի մէջ էին: Ձով օդը մեծապէս օդնած էր, սակայն քանի յատմանային ամբոխը աւելի ու աւելի կը շատնար... Եւ ասոնք ուշ մնացողներն էին անպայման... Ի՞նչ պիտի ըլլար վիճակին քաղաքի մերձեկայ շրջաններուն մէջ... Կապա կամո՞ւրջը... կամուրջը թուրքերու կողմէ փակուած պիտի ըլլար... Ետ յիսկ աստիկաններու կողմէ... Անկէ ալ պիտի կարենային սրարշաւ անցնիլ: Այս մասին մտածած չունէին երկու բարեկամները: Իրենց համար էականը Ատանա հասնին էր:

Պողոս դանդաղեցուց ձին:

Միհրան հասարակեցաւ բարեկամին:

- Ոտում մը ձիւտորներ կան:

Աւելի դանդաղեցան:

Մօտ երկու հարիւր քայլի հեռաւորութեան մը վրայ նկատեցին, թէ առաջ անցնելու ճամբան փակուած էր իրենց համար, թուրք ձիւտորներու կողմէ:

Միհրան ձիւն զլուխը ալ շարձուց, ձամբան երէք ոտք բարձր էր ալ կողմի դաշտերէն:

Ձին մէկ ոտուամով վար նետուեցաւ:

- Բանեցէ՛ք խոզերը, աղաղակեց թուրքին մէկը՝ եւ ծանր, լայնաշոր Լաթաղանը օգին մէջ ճօճելով՝ առաջ բռնեց ձին:

- Բանեցէ՛ք անհաւատ հայերը, այր-ձագանդեցին շորքը մէկ ու հետեցան առաջինին:

Գարնան դաշտերը կանանչ հողած կ'ըլլան: Արդարեւ կակուղ հողն ու կանաչութիւնը, տեղ-տեղ ալ ցեխը անձնարնտու կացութիւն մը ստեղծած էին ձիւտորներուն համար:

Մի՛րան ակնարկ մը նետեց գէպի  
թշնամին: Երեք հարիւր քայլէ տարբե-  
րութիւն մը ունէին իրարմէ:

- Առուակ մը... պտուղ Պօղոս:  
- Նետուէ՛... մա՛հ կամ ազատու-  
թիւն, - պատասխանեց Մի՛րան, - դան-  
դաղէլ չ'ըլլար:

Ձիերը մէկ ոտուամով ջուրին վրա-  
յին անցան:

Թուրքերն ալ հետեւեցան փախչող-  
ներու օրինակին:

Մի՛րան յղացում մը ունեցաւ:  
Յիշեց Հաճի աղան:

- Անգ ա՛ն, Հաճի աղայի վրաննե-  
րը մէկ ժամուայ ճամբայ է: Կա՛մ այս  
թուրքերը մեզ կը լքեն յուսահատ՝ եւ  
կամ հոն հասնելով կ'ազատենք մենք  
մեզ:

Վերելքը շատ շուշացաւ:  
Ճամբան օձապտոյտ կը վալարուէր

լեռներու կողին փաթթուած՝ անընդհատ  
վեր բարձրանալով: Կարելի չէր երկու  
հողիով ձիավարել ջով ջովի: Մի՛րան  
առաջ անցաւ:

Արդէն միթեմիտի անտառներուն մէջն  
էին:

Առաջին վերելքներէն ետք տափու-  
րակ դաշտադեմանի մը մէջ գտան ինք-  
զինքնին: Մի՛րան դանդաղեցուց ձին:

- Պէտք է շրջան մը ընել զիմացի  
լեռը բարձրանալու համար: Ես պիտի  
նախընտրեմ անտառին մէջէն ուղիղ  
բարձրանալ լեռան կատարը: Անկէ ետք  
15-20 վայրկեանի գործ է:

Ուղիղ վերելքով կը յառաջանային:

Կարելի չէր նման սեպ վերելքի մը  
վրայ ձին վազցնել: Արդէն կենդանիները  
սկսած էին քրտնիլ, հակառակ լեռներու  
պարնանային գոյժ օդին:

Գազաթին հասնելու վրայ էին:

Բարձրութեան վրայ երեք ձիերու  
պոլսիններ դուրս եկան:

Երեք թուրքեր նկատած էին իրենց  
ձօռեցող հայերը:

Երեք մետաղեայ շեղբեր փայլեցան  
օդին մէջ:

- Գէմդ ելլողին շաշեցուր մտրակդ:  
Փախչելու նայի՛ր, - պտուղ Մի՛րան:

Նորերը արդէն վար կ'իջնէին, դի-  
ւին սրսի մը ցնծութեամբը:

Չորս ոտքի տարբերութեան վրայ  
Մի՛րան օդին մէջ շաշեցուց մտրակը ի-  
րեն ձօռեցող առաջին թուրքի կրտսին:

Տաճիկը չկրցաւ զիմադրել: Մտրակի  
հարուածէն կորսնցուց հաւասարակը-  
նութիւնը: Ձիուն սանձը ընդզարար  
քաշելով կռնակին հակեցաւ:

Վայրէջքին՝ անակնկալ զսպումը  
պատճառ եղաւ, որ ձիու ետեւի ստեղծ  
կէին ու դեմնի խոնաւ խոտերուն վրայ  
սահի:

Թուրքը ինկաւ Պօղոսի ձիուն առ-  
ջեւ:

Անփորձ երիտասարդը՝ չկրցաւ մար-  
դուն վրայէն արագ ոտուամով մը ազա-  
տիլ:

Արդէն երկու ուրիշներ պաշարած  
էին զինք:

Սուր խրտիչը մը արձակեց ձին՝ առ-  
ջէի ոտքերը վեր առաւ:

Ահաբեկած՝ Մի՛րան ակնարկ մը  
նետեց իրեն: Պիտի պտուղ, բայց ձայն  
չկրաւ կոկորդէն... Ախարհ խաւարեցաւ  
ալքերուն առջեւ:

Ծոծրակին տրուած ետքադի  
ծանր հարուածը Պօղոսին վիզը կտրած  
էր...

Գլուխը կախուեցաւ կտրձիւն առ-  
ջեւ:

Գոհունակութեան աղաղակ մը բար-  
ձրացաւ շուրջը:

Հետապնդողներու խումբը կը ձօռե-  
նար միւսներուն, ճիւղայայտ պողտուք  
ներով:

- Բռնեցէ՛ք փախչողը, - պտուղ  
մէկը:

Մի՛րան հասած էր լեռան կատարին:  
Հաճի աղայի վրանները տեսնելի  
էին արդէն: Մարակը ձիուն կռնակը:  
մարմինը հակած կենդանիի վրին:

Հուժկու ձին նոր սլացքով մը սկսաւ  
սուրալ, իր ետին փոշիի ամպ մը ձգելով:

Քանի մը շուտեց հաջեցին:  
- Հաճի՛, կենսքս փրկէ՛, - ըսելով իր  
ձիին վար նետուեցաւ հայը:

Հաճին եւ իր աշխատանքները նկատած էին քառասամբակ սուբապոզ ձիերը, սակայն Միհրան էֆէնտի երեւումը անակնկալի բերած էր զիբենք: Ժամանակ կորսնցնելու առնելը չէր, քանի որ հալածող վեց ձիաւորներ հասնելու վրայ էին: Մերուներն կրցաւ լուծումը գտնել:

— Միհրան էֆէնտի, ջուտ սնունդ Ուժան է ասկէ ետքը: Հաւ միաքաղ պահէ, Օսման:

Ապա դառնալով սպասաւոր երիտասարդի մը.

— Այի՛, շուտ իմ վրանս մտիք Օսման աղային հետ, իմ հագուստներս հագցուր իրեն:

Երկու ձեռքերը գէպի երկինք բարձրացնելով աղօթեց:

«Այ հաւս-ըլլահ Բապ-պըլ-ալա-մին»:

Պոհունակութիւն տիեզերքի արարչին:

— Հաճի աղա, սէլամ ալէյքո՞ւ:

— Ալէյքո՞ւ սէլամ, դաւաններս: Մո՛, բորոտ Այի, ի՞նչ գործի վրայ ես: Այս աղաները ովքե՞ր են:

— Հաճի, այսօր Մարգարէի հաւատացողներուն օրն է: Գոտորած կայ: Լերան միւս կողմի սեպ էջքին վրայ անհաւատ մը մաքրեցինք, իր ընկերը հոս կկաւ: Մեզի յանձնէ:

Մերուներն աջ ափը տարածեց աչքերուն առջեւ, ապա, դանդաղօրէն զիթին ու բերնին վրայէն վար զսահմաններով՝ բռնեց ձիուն սպիտակ մօրուքը ու մօլլտաց: «Պիտիլա՛ ըստձան ուլ ըստիմ»:

Ապա, խօսքը ձիաւորներուն ուղղելով՝ — Ձաւակներս, ես 85 տարեկան եմ եւ ձեզի նման մաքուր հաւատացեալ: Թուրքի մը առջեւէն փախչող խոց մը չի կրնար սպաստան դանել իմ վրաններուն մէջ...

— Հաճի՛, հիմա մտաւ...

— Գիտեմ, զուտեմ, գիտեմ: Դուն Օսման աղան կ'ուզես: Հիմա՛ կուգայ — ձայնը բարձրացնելով — Այի՛, ու ուրան Այի՛...

Ային ձայն տուաւ: Իսկոյն ուշար մը բեր, որպէսզի

Օսման աղան վրանէն դուրս պալում՝ ստքին զոհեաւ:

Ային շատ չաւաքաւ: Վրաններու շուրջ պտտող սչխարներէն մէկուն կատուէն բռնելով Հաճիին ջովը բերաւ:

Հաճին վրանէն ներս մտաւ:

Միհրան թուրքի տարագով, կորսւած մէկու մը նման կեցած էր: Հաճին համբուրեց զայն ճակտէն, ինչպէս սովոր էր տարիներէ ի վեր:

— Փառք Ալլահին, արու զաւակ շունէի, դուն իմ զաւակս կղար, — ապա ականջին խօսելով — այդ մարդիկը գուրսն են: Պէտք է կլլես... վախնալու պէտք չունիս:

Օսման աղան դուրս ելլելուն՝ սչխարը պտկեցողին զետին... կենդանիին արիւնը դուրս թայթեց դանակին տակէն... ուրախութեան բացազանչութիւններ եղան... Թրքացած հայը մեռակը անցաւ զոհին վրայէն... ներկաները եկան ողջագործելու զինք:

Հայրդէին ապրեցաւ այդ վայրկեանները, գիշերաւընկի մը երևոյթով: Խոյս տուաւ իրմէ իր հպարտութիւնը, իր եւր: Իրերը կորսնցուցին իրենց բընայթը: Ուրիշ աշխարհի մը մէջը գտաւ ինքզինք: Ո՛չ երազ էր, ո՛չ ալ իրականութիւն: Ուղեղին դրութիւնը կազմալուծուած էր: Զգաց՝ թէ ուժերը կը լ՛քէին զինք, ստքերը սկսան կքատի... Աշխարհ սեւցաւ աչքին, հոկայ մարմնով գետին ինկաւ...

2.

Յաջորդ առաւօտ, Օսման աչքերը բացաւ զլիսու ցաւով մը: Զեռքը ճակտին տարաւ, ճակտին թաց լաթ մը դրուած էր: Հաճի աղան իրեն կը նայէր, աչքիկը՝ Պահարը՛ նոյնպէս:

— Օրդ բարի, Օսման տղա, — խօսեցաւ ծերունին: Ամբողջ գիշերը շերտ-թիւն ունէիք, զլիսուք թաց լաթիք դրինք սր զովանաս:

Օսման չպատասխանեց: Ուղեղին մէջ զամուսած բան մը կար: Ուտերէն

վար՝ մինչև ողնայարը, թեւերուն եւ արունքներուն ոսկորները՝ խուլ ցաւով մը կը տառապէր:

Հաճին զբաւանէն սիկարէթի բարակ թուղթէ տետրակ մը հանեց ու մէջէն թերթ մը փրցուց: Կիսեց:

Ի՞նչ անկիւնը գրուած անտուկի մը մէջէն ծալուած թուղթ մը բերաւ, դանակի ծալքովը զգուշութեամբ բացաւ: Ի՞նչէ՞ր ճերմակ, փայլփրուն փոշիէն վերցուց սիւետի ծաւալով մաս մը ու կիսած թուղթին վրայ գրաւ: Ապա, այս թուղթի շրջս անկիւնները իրարու միացուց: Ուրեք՝ գնդիկի մը ձեւը տուաւ:

— Ատիկա անդիտական սօլֆաթօ է, խօսեցաւ... Վերմութեան համար միակն է, դանակի պէս կը կտրէ, մէկը զրկեցի, որ քինա-քինայի ճիւղ մը բերէ, կը խաւօ տերեւները, ջուրը կը խմես:

Ային դոյլ մը թան բերաւ ու հիւանդին քովը դրաւ:

Կինը թաս մը ջուրին մէջէն լաթի կտոր մը հանեց եւ Օսմանի գլխուն վրայ դրաւ, նախկին լաթը վերցնելով:

— Այս աղջկան հազար անգամ ըսած եմ, որ մինակը ձոր չի՛րայ, մանաւանդ տառու կանուխ: Ձեռ գիտեր ի՞նչ կըլլայ-լըլլար այս դէշ օրերուն: Պահար կը բողբոջէր հօրը՝ իր աղջկանը՝ Սուսամին համար: Այս աղջիկը միայն քեզմէ երես կ'առնէ:

— Աղջիկս, ես մանչ զաւակ մը շունեցայ: Գո՛ւն ալ շունեցար: Սուսամ մեր տան մէջ թէ՛ աղջիկ է եւ թէ՛ տղայ:

— Այդ բանը քեզի համար է: Լեռներու մէջ զեզերող անուպանրն ալ այդպէս կը մտածե՞ն: Գնա՛, մէյ մ'ալ անո՛ց հարցուր:

Սուսամ, հակառակ ժօրը կամքին, սափորը ուսին նետած, ձորը իջած էր, սկիւն ջուր լեցնելու՝ Օսմանին համար:

Տաւրտեան լեռները, հինէն ի վեր, վտանգաւոր եղած են: Անդնդախոր ձորեր, գոթաւորամտոյց բարձրութիւններ... Հոն, անառակներուն մէջ՝ բանակներ կրնան կորսուիլ: Օրէնքէն փոխաւորները տարիներ կապրին այդ անտառ-

ներու մէջ: Պահար հանրմ իրաւունք ունէր մտահոգուելու: Աղջիկ զաւակ էր Սուսամը:

— Այի՛, ձիս թամբէ, — հրամայեց Օսման, յանկարծ:

Հաճին զգուշացուց հիւանդը, գոն օր մըն ալ հանգիստ ընէր: Օգուտ չըրաւ: Օսման ճակտին դրուած լաթը վերցուց, կնոջ տուաւ ու վճռական շարժումով մը ռաքի ելաւ:

— Հաճի՛, պարոն Պօղոսի դիակը պիտի բերեմ, որ հոս, տեղ մը թաղեմ: Ձեռ ուզեր որ ազոտաներու եւ շուններու կը զառնայ, — լոնց պահ մը: Գլուխը կախեց: Ու՛ մոայլ, — Հաճի՛ այդ տղան իմ պատճառաւս մեռաւ:

Հաճին ձեռքը դրաւ երկտասարդ ուսին:

— Տղա՛ս, չեմ ուզեր որ այս վիճակովդ դուրս ելլես: Բարեկամիդ դիակը կ'ուզես: Ես երկու հոգի կը զրկեմ, որ բերեն: Գոն տեղը որոշէ միայն: Ո՛ր կ'ուզես սր թաղեմք:

Օսման կանակին վերարկու մը առած՝ վրանէն դուրս ելաւ: Հաւատաց իր անկարողութեանը: Հակառակ լեռներու կազդուրիչ օդին՝ մեղի, յոգնած վիճակ մը ունէր:

Վրաններու առջեւը ընդարձակ տարածութիւն մը կար: Այդ տարածութիւնը կտրեց-անցաւ: Հոս կը սկսէր դէպի ձոր սեպածեւ էջքը: Հսկայ կազմամախի մը մինակը կը խոկար: Կոնակը առաւ բունին: Քանի՛-քանի անգամներ այս ծառին տակ ճաշած էր, իր ամէն այցելութեանը զառնուկ մը կը մորթէր: էր, վարեակներ կը մորթէին: Կրակ կը վառէին այդ ծառին տակ... երջանիկ օրեր էին:

Յիշեց իր զաւակները, իր կինը... Ով պիտէ ի՞նչ վիճակի մէջն էին անոնք այդ վայրկեանին: Մտածեց Հաճի՛ մարդոցմէ մէկը զրկել քաղաք... Բայց կարելի բան չէր, որ տունը գտնուէին ինքը իջնալու էր Ատանա... Ձէ՛, կարելի բան չէր: Ձունէր այդ ուժը: Երեսները կ'ալրէին:



Ես դարձաւ Վրասներուն: Ալին կան- լեց, յանձնարարեց, որ կազմաձևի հո- վանին տակ փոս մը փորեն:

Սուսամ թաս մը լեցուն զինա-զի- նայի ապք շուրք ու բերաւ հիւտնդին որ խմէ: Տարբեր տրամադրութեանց տակ աղջկան մաղկերը կը քաշէր՝ հակոտակ հասած, հասունցած աղջիկ մը ըլլալուն: Ան ալ տղուն ձեռքին կը փակէր ու չէր ձգեր, մինչև որ սուր ակունկերուն մէջ առած խածնէր տղուն մխոթ, մինչև որ մէկն ու մէկը իր պարտութիւնը հռչա- կէր, զգացած ցաւին չդիմանալով: Ընդ- շանրապէս տղան կ'ըլլար տեղի առողջ, կը ձգէր աղջկան մաղկերը:

Տղան զգուանքով խմեց այդ լեղի հեղուկը:

- Նայէ՛, այս խաշածոն ես պատրաս- տեցի զեզի համար, թոյնի համ ունի, սակայն լաւ է: Գիշերն ալ՝ գլխուդ թաց լաթերը փոխողը է՛ս էի: Ժամերով քովդ նստած էի: Դռն ջնացած միջոցիդ բար- ձրամայն կը խօսէիր: Մի քանի անգամ վախցայ: Մայրս չէր ուզեր որ քովդ մնամ, միշտ դուրս կ'ուղարկէր, գործ մը տալարկելով: Ես չէի ուզեր քովէդ հե- աանալ: Անգամ մը ուղեցի ձեռքդ խած- նել, սակայն մեղքացայ: Բայց մայրս տե- սաւ ձեռքդ բերնիս տանիլս... դուրս վրանեց զիս վրանէդ:

Սուսամ աւելին ունէր գուցէ պտա- մելիք, սակայն չյանդգնեցաւ: Պարպը- ւած թաւը առած՝ փախաւ:

Է.

Պողոսի մարմինը, նոյն տողարակով, ինչպէս որ բերած էին, փոսին մէջ իջե- յուցին:

Հաճի աղան իր կարճ իշուն վրայ սարն ի վեր ելած էր մեռելը բերողները գիմաւորելու համար: Անոնք պատմած էին, թէ զոհին գլուխն ու շորս անդամ- ները ըստնուած էին իրանէն մերկաց- ւելէ հաջ ու կենդանիներ զրեթէ լա- փած էին մխոթ: Մարմինն ամէն մէկ մասը տեղ մը քաշկոտուած էր ու իրենք

ազուաներու եւ անոնց կոկոտցէն հասկը- ջած, գտած էին մնացորդը:

Օսման լատ խնդրեց որ մարմինը ցոյց տան իրեն, զոնէ ակնարկի մը հա- մար, սակայն Հաճին շուտեց տեղի տալ:

Վրաններէն դուրս դալով՝ հոն հա- լաթուած էին մեծ ու սղորիկ: Բուրն ալ մասնակցեցան թաղմուն:

- Ճակատագիրը այս է եղեր, Աստ- ւած ներէ՛ իր մեղքերուն: Աստուծոյ կը պատկանինք եւ անոր պիտի վերադառ- նանք... աղօթեց Հաճին, ու նշանով մը ցրուեց բոլորը: Ինչն ալ հեռացաւ:

Օսման մինակը մնաց իր բարեկամի շէրիմին առջեւ: Սիրտը պիտի պայթէր կարծես, կ'ուզէր պոսալ, պոսալ ու լալ, սուկայն արցունքները կը մերժէին դուրս գալ: Արցունքները ցամաք էին: Մրտին մէջ դաշոյն մը կար մխրճուած: Ակոտ- ները կճոտալէն սեղմեց: Ձեռքերը բզըկ- տելու աստիճան սկսաւ շփել...

«Հայր մեր... որ յերկինս ես...»

«Որ... յերկինս... ես...»  
...Այլքերը երկնքին ուղղած, կոր- սըւած, անորոշ ակնարկներով իր Աստ- ւածը կը փնտռէր, ըրթներու տակէն թա- խանձազէն պաղատելով...

- Տէ՛ր... զիս մինակ մի՛ ձգեր... Սակայն չկրցաւ իր աղօթքը լարու- նակել, իր Աստուծոյն հետ խօսիլ...

Հողիին հետ՝ խորտակուած էր նաեւ Աստուծոյ խորանը:

Ձգաց՝ թէ լքուած է նաեւ Աստուծ- մէ:

Ը.

Պաղ, սառեցնող գոյ մը անցաւ ե- ռիտասարդի մարմնէն: Ակունքերը սկսած կափկափէլ: Ձկրցաւ դիմադրել: Անկո- ղին մտաւ, վերմակը գլխուն քաշեց: կծկուեցաւ:

Ոչինչ օգնեց: Աղան պարտք զգաց միտթարական քանի մը խօսք ընելու: Օսմանի վրանը մտաւ: Նկատի առաւ անոր վիճակը: Կանչեց Ալին, պէտք եղած հրահանգները տուաւ:

Ուղտի մազէ պատրաստուած Հասարակաց մը տարածեցին Հիւանդին վերայ: Մեծ կրակարան մը եկաւ: Կըզմինարը տաքուցին ու Օսմանի սուքբուռն քով շարեցին: Թէյաման մը ջուր դրին կրակին վրայ, մէջը գինա-գինայի տերեւ, զանազան դառնահամ արմատներ ու փոշիներ խառնեցին, որ միտտեղ ետայ:

— Ետալէն ետք այս ջուրէն դատարի մը տուէ՛ք ու թող տաք-տաք խմէ: Վրան յաւ մը ծածկեցէք, որ ջրանի, — հրամայեց աղան ու զուբո ելաւ:

Մուսամ վրանին մէկ անկիւնը կըմկուած, հետաքրքիր, կը հետեւէր անցուղարձին:

Երեկոյեան նախը վերադարձաւ: Հովիւները շրջապատեցին տղան: Մէկը միւսը գերազանցելու նախանձախնդրութեամբ՝ մանրամասնութիւններ կու տային խելայեղ խանդավառութեամբ, Ատանայի ու շրջաններու մէջ պատահած կողոպտանքներու, ատուանդուներու, ոճիքներու մասին, պահանջելով, որ՝ գոնէ՛ մէկ օրուայ համար՝ թող սրտի իրենց այդ բացառիկ տոխթէն օգտուելու: Արջառը կրնար օր մը փակուած մնալ:

Հոնին լսեց բոլորը, խոր շունչ մը առաւ: «Պիտիլիտիս բահման ուլ բահիլ!» Ըսաւ սրտին խորէն, այլ ձեռքը ճակտին տարաւ, Փակեց աչքերը: Զեռքը վար իջաւ, ծնօտին վրայ բռնեց մօրուքը, Երկունքին նայեցաւ:

— Մեր դիտուն կրա՛կ պիտի տեղայ... Գա՛ր պիտի տեղայ:

Առաջ անցաւ, առանց նայելու զինք շրջապատող մարդոց: Յանկարծ կանգ առաւ: Ընկիւն մը ունէր, իր շուրջը համախմբուած արքաներ:

— Ամէ՛ն մարդ, — յայտարարեց կրտսուկ ու վճռական, — ազա՛տ է ընելու ի՛նչ որ կ'ուզէ...

Յնձութեան ալիք մը անցաւ ներկաներու մէջէն:

— ...Սակայն... մի՛ որ... իր դործին գլխուն չըլլայ... իրաւունք չ'ունենար մ'տք զնելու կալուածներու մէջ...

ոչ ա՛լ երես տեսնելու փորձ կ'ընէ այնուհետեւ...

Թ.

Հանին այդ օրը չուզեց մէկը տեսնել: Կանուխէն իր վրանը մտաւ, երկրադիր աղօթեց ու պառկեցաւ: Սակայն իր մարդերը ճաշէն ետք լեռ բարձրացան, Ատանայի հրդեհը գիտեցու:

Մուսթ գիշեր մըն էր, երկինքը ծածկուած դարնանային ճերմակ ու թեթեւ մայերու քողով մը, որով քաղաքին հրդեհը յատուկօրէն տեսանելի չէր, սակայն հայոց տուններէն դէպի երկինք բարձրացող հրդեհի բոցը երկնքի աստղերուն մէջ կը ճառագայթէր աշնանային վերջալստի մը կարմիրով:

Հոն էին Մուսամն ու իր մայրը:

Լեռան կատարին հաւաքուած խումբեր մեծ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր օրուայ նորութիւնները: Խօսիլ դիպացողները հերոս էին դարձած:

Մուսամի համար հաճոյալի չէին այդ բոլորը: Առանց նկատուելու, մութին մէջ կորսնցուց իր հետքը ու վար իջաւ վրանները:

Օսմանի վրանին մօտեցաւ: Այնի մազէ Հիւսուած վարադորին ծայրը բացաւ: Ներս մտաւ: Կեդրոնի սիւնէն կտրուած քարեղէի պատիկ յամբարի պատրոյ դը վեր բարձրացուց:

Հիւանդը խաղաղ կը զննար: Ունեխով կրակը խառնեց:

Վերմակի տակէն կղմինտրները հաւաքեց եւ զզուշուքեամբ կրակին վրայ շարից դարձեալ:

Օսման արագ շարժումով մը շրջեցաւ, զառանցեց:

Այս ձայնը սարսափ պատճառեց երիտասարդ աղջկան, ուզեց փախիլ: չկրցաւ: Միտը կը տրոփէր: Անկողնին կեց՝ բազմոցի մը վրայ նստեցաւ:

Տղուն ձեռքը վերմակին քովէն դուրս կրած էր: Եօշօտեց: Տաք էր: Երկու տփերուն մէջը առաւ, մեղմօրէն շոյեց: Յիշեց այդ ձեռքը խածած օրերը: Ան-

դուստր պահանջ մը դինք կը մղէր խած-  
նին: անգամ մըն ալ... այնքան ու-  
սով, այնքան ուսով...

Հողին կ'ալիսին: Մուսարած էր:  
Մանրութիւն մը կը ճնշէր սրտին վրայ:  
Պիտի պայթէր:

Հինք մատնէր՝ իրենց մէջը առին  
այլկան նուրբ դէմքը: Երբնէրը սկսան  
այրի տղուն ափին մէջ... սակայն չը-  
կրցաւ խածնել... ոչ թ'ակ համարել:

Հիւանդը դարձեալ խօսեցաւ: Անո-  
րոչ, անկապակից բառեր էին:

Աղջիկը մօտեցաւ իմանալու, այն-  
քան մօտեցաւ, որ դէմքին վրայ զոսց  
Պողոսն շունչը: Երկու բերաններ իրարու  
միացան:

«Նազենի... հողիս...», շնջաց  
մարդը, երբ բնազդաբար սկսաւ ծծել  
անոր շրթները, որոնք աղջկայ մը ա-  
նարատ սէրը կը ծօրէին, տառապազին  
դաւարուններով:

Բնութեան ծոցին մէջ մեծցած աղ-  
ջկան երակներուն մէջ տրինը անընդ-  
հատ կ'ետար: Անէացած էր:

Այդ մըջոցին Հիւանդը տչքերը բա-  
ցաւ...

- Նազենի... Նազենի, ո՞ւր են պղզ-  
տիկները...

Սառած մնաց:

Նազենին չէր:

Եզնիկի երկու սեւ աչքեր, լայնորէն  
բացուած, վախով ու պաղատազին իրեն  
կը նայէին: Բարակ, արեւային թխացած  
դէմք մը ուրուադժուեցաւ, առատօրէն  
թափուած սեւ մազերու շրջանակին մէջ:

- Մուսարժ, ի՞նչ կ'ընես հոս, - հար-  
ցուց:

Աղջիկը չկրցաւ պատասխանել: Յան-  
ցանքի վրայ բռնուած ըլլալու վախը  
չուարձակ մատնած էր զինքը:

Երկու կիսաբաց շրթներ տակաւին  
իրենց շունչը կը հեւային, տղուն բերնին  
մէջ, ինքզինքնին մատուցանելու տեն-

չունքովը զինովցած:

Տղան ըմբռնեց երիտասարդ աղջկան  
կացուցիւնը: Սնոր դէմքին վրայ թափ-  
ւած մազերը ձեռքերովը ետ ըրաւ՝ մին-  
չեւ ծոծրակը, կրկին հարցուց.

- Ինչո՞ւ մինակդ ես... ինչո՞ւ չես  
պատկած:

- Ձե՛մ ուզեր... կը վախնամ...  
Ձե՛մ ուզեր քեզ մինակ ձգել...

Յանկարծ փղձկեցաւ: Գլուխը ձգեց  
տղուն դէմքին վրայ:

- Մի՛ վշտանար... Կ'ուզէի քեզ իը-  
նամել... Կ'ուզէի միշտ հետդ ըլլալ...  
Կ'ուզեմ քեզի ծառայել... Կ'ուզեմ բո-  
ւարուկդ ըլլալ, հնազանդիլ քեզի...

- Լա՛ւ, լա՛ւ... Բայց պէտք է կա-  
նուխ պատկիս, որ կանուխ արթննաւ ու  
ինձի ուտելիք պատրաստես... վաղը Ա-  
տոնա պիտի իջնեմ:

Աղջիկը ստքի ելաւ տխուր: Վերցուց  
կրակին դրուած կղմիւնները: Մէկ-մէկ  
փաթիլեց զանոնք եւ շարեց տղուն վեր-  
մակին տակը: Կ'ուզէր մեկնիլ: Ձկրցաւ:  
Բազմօցին վրայ ծերազրեց, արագ  
չարժումով մը տղուն թեւէն խածաւ:

Հիւանդը չհակադէմք, սակայն աղ-  
ջկան սուր ակունքը մսին մէջը կը  
թողուէին ծակելու, ծակեկելու աստի-  
ճան:

Քսածնիկն յոգնած, ձգեց տղուն  
ձեռքը, լայն շունչ մը առաւ ու թոքերու  
պարունակութիւնը դուրս տուաւ «ս'իս»  
մը բաշելով:

- Ինչո՞ւ մազս չբաշելիր, - հարցոց  
յանկարծ:

- Չուզեցի ցաւցնել քեզի, մեղքը-  
ցայ...

- Ես սպասեցի որ մազերս բաշէիր,  
ցաւցնէիր ինձի: Տե՛ս ինչպէս խածայ  
թեւերդ, ի՞նչ ուսով... Կ'ուզէի որ շուն  
ալ ինձի ցաւցնէիր:

Ու, առանց պատասխանին սպասե-  
լու, այժեամբ նման սրացաւ, փախաւ:

(Վերըն յարդողով)

ԱՐԱ ՍԵՒՈՒՄԵԱՆՊ Ա Ր Տ Է Ջ Ս

Կ'անձրեւէ մեղմիկ... :

Աշունը տխուր, մետած է իր գորշ սաւանը, բնութեան գուարք գոյ-  
ներուն վրայ, ու իր քաիծարայր լուսօքանը մէջ, պահած խորհուրդը ան-  
ծանօք կեանքի... :

Քաշուած պարտէզիս հին կամարին տակ, հեռու անձրեւի գով կա-  
թիլներէն, անխօս կը դիտեմ վտիտ վարդենին, որուն շուքին քոչուն մը  
սէր կ'եքզէր երէկ: Իսկ այսօր չկան փերքերը վարդին, այլ միւղ մը մի-  
այն, դողացող ու մերկ, գարնան հին երգին դարձին սպասող... :

Կ'անձրեւէ մեղմիկ... :

Ու այդ նշենին, որուն բունին շուրջ կանաչ գարունը աննոզ կը դառ-  
նար, ուր կար ճշկոց, ծիծաղ մանուկի, ու քիթեռի վազ ծաղիկէ ծաղիկ,  
հիմա քրջուած, քեւերը կախած, դարձած է լալկան ուռենի մը ծեր... :

Կորսուած խորքը բարի պարտէզիս, այդ մաքմարեայ հին նստարա-  
նին մօտ, սիրահար գոյցեր կը փափայտին գգուանք ու կարօտ, ու կը գըր-  
կէին աշխարհն երագի, համբոյրի մը խենք տաճարեան մէջէն... :

Հիմա պարտէզիս խորքը մոխրագոյն, մարմարեայ ներմակ նստա-  
րանին մօտ, անձրեւը կը ծծէ գետինը յոգնած, որուն ակամբին տակաւ  
կը հնչեն սիրահարներու երդումները սին... :

Պարտէզս է խռով առանձնութեան մէջ... :

Կ'անձրեւէ մեղմիկ... :



Հանդարտ վար իջնող կաթիլներուն հետ, կ'իջնէ քալիծը յոգնա-  
սանց սրտիս, ու ես կը վանեմ դառնութեամբ անհուն գարունը կեանքի:  
Կը դիտեմ քափուզ գով կաթիլներու խաղերն անհանդարտ...: Կը լսեմ  
անոնց ազմուկը խորհուրդ:

Երկինքը կու լայ...: Ձի թափիր այլեւս անձրեւի կաթիլ, այլ տափ արցունքներ կ'իջնեն մեզմօրէն յոգնած աշխարհի ուսերում վրայ: Երկինքը կու լայ բնութեան դժբախտ դէպքերում վրայ, ու ամէն կաթիլ պահած է իր մէջ, սիրտ մը՝ սեղմուած աշուն տխրութեամբ...:

Արցունքներ մեղմիկ կ'իջնեն երկինքէն...:

Ա՛հ, այդ կաթիլը կայտուած մերկ ճիւղէն, կարծես արցունքն է ազ- փառ մանուկին, որ Նոր Տարիի ուրախ գիշերով, ցուցափեղկին մօտ, կը դիտէ անյագ, կարօտ աչքերով, աշխարհ մը յեցուն առասպելներու...:

Այս կաթիլը ջինջ, չորցած սերունդն գրկին մէջ սահած, կարծես ար- ցունքն է այն պատանիին, որ եին դպրոցի մամուտած պատին գուգահեռ կը ֆալէ տխուր, իր եղունգները սեղմած, մխրճած արհեստագործի հաստ ասկերում մէջ:

Այդ փոքրիկ կաթիլն, պարտեզիս պատին եզերքէն սահող, կարծես արցունքն է կեանքի պայտարին ու կռուին փարած հէ՛ք երիտասարդին, որ դաժան կեանքի խաղերու մէջէն կ'ուզէ ընթանալ, պահել գոյութիւնն յուսահատ կեանքի...:

Այդ բարակ կաթիլը, մերկ ֆարի մը չոր փսփմ մէջ մինակ, յանձ- նրած հովի ֆմահաճոյքին, այնպէս կ'երբայ ու կը դողդոջայ, որ կար- ծե՛ս... կարծես... արցունքն է անտր, բշուառ ագֆատին...:

Ու այս բազմաթիւ կաթիլներն դուրս, կը տեսնեմ ահա երկու կա- թիլներ միւսներէն հեռու, առանձին, մինակ, որոնց գողարիկ անկիւննե- րուն մէջ կայ աշխարհ մը ջինջ, աշխարհ մը լեցուն գոհարեութեամբ, գգունմէովն սիրոյ անշահախնդիր: Ան սիրոն է բարի, արցունքներով լի, տառապած մօրը...:

Կ'անձրեւէ մեղմիկ բնութեան գուարթ գոյներում վրայ, ու ամէն կաթիլ պահած է իր մէջ արցունք, տառապանք...:



Աչքերս յառած լացող երկնքին, կը դիտեմ անվերջ դաժամ ամպերը ու կը մտածեմ, թէ ինչո՞ւ Աստուածն այդ մարդանման – կամ Մարդն հո- ղաշէն աստուածանման – ամպեր ստեղծեց սրտերու մօտիկ...: Ինչո՞ւ անձրեւի այրող կաթիլներ թարթիչներու տակ...: Ինչո՞ւ տառապանք անհատում, անվերջ, այս փոքրիկ ու կարն խենթ կեանքին համար...:



Ահա կը տեսնեմ ցառագայթ մը ջինջ, որ կ'ուզէ ճեղքել պատնէշն ամպերում, հասնիլ պարտեզիս խոհաւարեան մօտ, ջնջել արցունքները կարմիր վարդերում...:

Խաժող ամպերը կը շարժին դանդաղ, կապոյտ երկինքը կը բացուի ահա, կը թափի այլեւ ու գարնան ծիծաղ, պարտեզիս խոհրած գոյներում վրայ...:

Ամպեր ու արեւ, շողեր ու անձրեւ, մերթ ժպիտ մը խենթ, մեքթ արցունք վտիտ...: Այսպէս է կեանքը, արցունք ու ժպիտ...:

Այլ չկայ անօրելի...: Շուգերն արեւի գրկած են հիմա, կաթիլներն քափուած՝ պարտէզիս վրայ, ուր ես կը տեսնեմ ժպիտը մանկան ար-  
ցունքներու ջինջ հայելիին մէջ...: Կը տեսնեմ ճնճուշ հրկու ժպիտներ՝  
պահ մ'առաջ բաժան սիրահարներու...: Նշեմիս վառ աչքերուն մօտիկ՝  
կը տեսնեմ գարնան ժպիտը յուսի: Ու մանուկներու կանչերու մէջէն,  
կ'ըմբռնեմ ժպիտն մայրերուն քարի...:

Քիչ առաջ մութ էր, ամպամած աւ գարշ, հիմա ծիածանն աւ գալուս  
երկինք...: Այսպէս է կեանքը, արցունքն աւ ժպիտ...:



Սիրտս է նման խնու պարտէզիս, ուր կեանքի խաղերն գտած են  
դարպաս, աւ տէն անկիւն ծլած աւ ծաղկած նար գգացումներ...: Հոն  
մերք կ'անօրելի անքիծ կամ ցեխատ մեծ կաթիլներով, մերք հոն կը գծուի  
ժպիտ մը անհագ...: Մերք կ'ուզեմ սիրել, շոյել աւ գգուել, մերք կ'ու-  
զեմ ասել աշխարհը բոյր...:

Մարդ եմ, հազածին, սիրասալիք, կրքոտ...:



Բայց, անկիւն մը փոքր խոցուած սրտիս մէջ, պահած եմ մաքուր,  
կեանքի հասարակ դէպքերէն հեռու, անկիւն մը գոգտրիկ, ուր միշտ կ'ան-  
օրելի կաթիլներով ջինջ, անկիւն մը՝ ուր ես կերտած եմ խոքան աւ դրած  
սկիւն, անկիւն մը՝ ուր կայ կարօտ, տառապանք, սէր աւ սպասում, անկիւն  
մը բարի, որ ես կոչած եմ «նշխարի պանդուխտի...»:

Հոն չկայ գարուն. ժպիտ աւ ծիծաղ, առօրեայ սլայտք, կիրքեր հա-  
սարակ...: Հոն չկան կեղծիք, ետասիրութիւն, չկայ սին կռիւ աւ աստի-  
քիւն...:

Ըլլայ գով գարուն. բարիքներով լի, թէ ըլլայ ամառ՝ յայտնով  
բերրի, մէն թէ աշուն կ'իջնէ հոն մեղմիւ, անձրեւը հանդարտ, անձրեւը  
մազուող...:

Կ'անօրելի՛ լալկան, կ'անօրելի՛ անվերջ, կարօտով վառուած պան-  
դուխտ սլտիս մէջ...:

Ա. Ս.

«Պանդուխտի նրգեր»



# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐՎՈՒՆ

## ՍՈՍԿԱԼԻ ՀՈԿՏԵՐԵՐ

Այսպէս որակեցին ֆրանսայեաները այս տարուան Հոկտեմբերը և անարգար լէշ այդ որակումը:


Միայն Հոկտեմբերին, իրարու ետեւէ հինգ գրողներ յանձնեցին անուշ հոգին, որոնցմէ երկուքը, Անրի Մորան և Մարտէլլ էյմէն, Ժանաւանդ Մորան, Համախորհրդային գործի մը կը վայելին:

Հոկտեմբերը մեզի համար ալ քաշի ամիս մը չէ եղան, չեղաւ նաեւ այս տարին: Այդ ամսուան մէջ էր, որ ժողովրդական Զօրեան և շատ շանցած՝ անոր ետեւէն զնաց ունիլ համեա վաստակով ուրիշ գրող մը՝ Քր. Փափալցեան:

«Սոսկալի Հոկտեմբեր»:

Հոկտեմբերին յաճարող օրերուն ու ամիսներուն գրողներուան միանումուն յարգանքը, սակայն, Ժանաւանդ Մորանի տակնով, շափով մը ճոռնել տուաւ «Սոսկալին» ու արժանատիքին վերադարձուց իր նախկին սեղը, սեփական գինեքը, կենդանութիւնը: Իրապէս, ժանց արհամարի գրուող մըն է ճակատագիր մը իրազարման ժարգոց պարագային, երկրորդ կեսը մը սպրիտ: Իրատունը եւ անան ընտրութեան համար, որոնցմէ էր, անտարակոյս, բոլոր կիլմաներն ընդունուան սկիզբաներուն հեղինակը:

Կու տանք իր կենսին ու զորին վրայ Ց. Ոսկունիի նուան արագ մէկ ակնարկը և գրականութեան մէջ ժողովրդին իր ուղարտու լուսամտութիւնը...



**ԱՆՆԵՏԱՑՈՂ ԳԷՄԲԵՐ**

**ԱՆՏԻ ԿՈՐՈՒԱ**



Իր մահուան առթիւ, Փրանսացի քննադատ մը կը գրէր. «Պէտք չունինք սպասելու յետ-մահու դատաստանին: Անտի Կորուս եղաւ քանի որ զարու պարկեշտ մարդը: Մաղթենք որ եղած չըլլայ վերջինը իր տեսլիմ մէջ»:

Պարկեշտ՝ Կորուս եղաւ մանաւանդ իր գրական կոչումին հանդէպ, երբ բոլոր առիթները տրուած էին իրեն՝ դիտողաբանու վաղահաս յաջողութեամբ մը եւ հռչակով, որուն տիրացաւ առաջին իսկ գործով, ուր անգլիացի արտասովոր գնդապետ մը իր լուսնային կը լեցնէր ստորեային պարապը:

Պէտք է ընդունիլ սակայն, թէ արհամարհելի նպատակ մը չէ մէկու մը համար, որ բնածին յատկութիւններով օժտուած է, ունենալ Այէնի նման ուսուցիչ մը, որ առաջին օրը, հազիւ դասարան մտած, Կորուս իւր ընկերներուն դարձազական նայուածքին առջեւ, գրետախտակին վրայ կ'արձանագրէր իր պատ-

գամը. «Պէտք է նշարտութեամբ երթալ ամբողջ եղիւով»:

Ճշմարտութեան այս որոնումը, պարկեշտութեան հետ, այլապէս իմիջ կերպով դարձուցին քանի որ զարու Փրանսացի մեծագոյն գրողներէն մէկը, որ փորձեց գրական բոլոր սեռերը ու հասարակապէս յաջողեցաւ, մասնաւորաբար հանդիսանալով մարդկային հողի իւր վերլուծող մը, նուրբ դպարտութիւններու ճարտար վերծանող մը:

Անտի Կորուս անունը առաջին անգամ գրական շրջանակներուն հիացումին ընծայուեցաւ կրասէի մօտ հրատարակուած գործով մը, որ առաջին աշխարհամարտի ընթացքին՝ Ճրանսայի օգնութեան եկած անգլիական բանակին թարգմանը - իմիջ կերպով - կը պատմէր լուսնային գնդապետի մը տարօրինակ կեանքը, մարդ մը, որ շարունակ մտիկ կ'ընէր հնամալ Փրոնտիւրի մը խաղաղ երգը, անտարբեր՝ լուրջը պայթող ուժերուն:



Քիչ անգամ հեղինակ մը առաջին իսկ գիրքով զրազդտի հուշակ կը շահի, մանաւանդ Թրանսայի մէջ, ու յատկապէս այն օրերուն, երբ Փրուսթ, Թրանսրուս Մորիսը եւ Փոլ Մորան կը թաղաւորեն:

Առաջին այս գիրքը պործարանատէր Էմիլ Լերցովը կը վերածէ հոչակաւոր պրագմա Անտրէ Մօրուայի (Անտրէ՝ Հանպուցեալ զարմիկի մը անունը, Մօրուա՝ այն գիւղը, ուր կայան հաստատած էր անդիլիական պորաբաժինը):

Շատ շահագած, Մօրուա կը հրատարակէ այլ գործեր ու կը ստիպուի լքել ճարտարարուեստը՝ նուիրուելու համար միայն գրական ասպարէզին: Շուտով կը գրուէ արժանի տեղ մը ժիտի, Մարթէն Տիւ Կարի եւ այլոց կողքին, որոնք յետպատերազմեան Թրանսայի գրական վարպետներն են:

Մօրուայի աստուածը Պալպաքն է: Կը հետեւի անոր օրինակին: Կ'ապրի՝ գրելէ առաջ: Կեանքը, իր ամէնօրեայ հանդիսներով եւ զօրուարութիւններով, անտարբեր չի թողուր երիտասարդ գրագէտը, որ հակառակ երեւութական երջանկութեան մը գրոնրեւոյթին, Կ'ապրի իսր վիշտը մանկամարդ հասակին մեռած կողակիցի մը՝ Ժանիկի, գեղանի բոլոնուհի մը, որ երեք զաւակով այրի կը ձգէ գինք:

«Կիլմաներ»ը, որ Մօրուայի գլուխգործոցը կը նկատուի իր տեսակին մէջ, կը բերէ ցուրբը այս ողբերգութեան, նոյն ատեն հանդիսանալով կնոջական հոգիի նրբարուեստ վերլուծում մը, հոգեբանական իրաւ արձագանգներով:

Կը վերամուսնանայ եւ այս անգամ, Սիմոն տը Քայպէ, շերտաւա, վակ-Անրեամ, բահաստեղծութեամ սիրակար» աղջիկը կը դառնայ Մօրուայի գործին մղիչ ուժը, Հաւատարիմ գործակիցը, որուն կը պարտի Մօրուա հետագայ իր գործերը, որոնց բոլոր աղբիւրները կը հոգայ անձնազոհ այս կինը, իր օրերը անցընելով Քրանսական մատենադարաններու մէջ:

Սիմոն իր հոգեբանական վերլուծումներով եւ գաղափարներով ներկայ է մանաւանդ «Կիլմաներ»ու մէջ, ուր յաջորդաբար կը արուին խարուած ամուսինի մը եւ խարուած կնոջ մը տըրտալանքները եւ տաղանայները:

Երկրորդ աշխարհամարտին, Մօրուա կը հեռանայ Թրանսայէն, ուր գերմանները կ'այրեն հրեայ Լերցովին Նէօյի բնակարանը: Կը հաստատուի Միացեալ Նահանգներ, ուր դասախօսութիւններ կու տայ: Պերնախա զասախօսը կը յաջողի իր ամերիկացի ունկնդիրներուն պարզի Թրանսայի զարմանալի պարտութեան պատճառները եւ կը յաջողի համոզել քանոնք:

1946-ին, կը վերադառնայ Հայրենիք, ուր կը սկսի Մօրուայի գրական սպասարկչին մէկ նոր եւ հարուստ շրջանը: Իրար ետեւէ լոյս կը տեսնեն իր կենսավէպերը՝ «Շէլլէ, Տիրաէլլէ, Պայրըն, Քուրկենեւ, Շաթոպրիան, Փրուսթ, Ժորժ Ման, Վիքթոր Լիւիօ, երեք Տիւմաները, Ֆլեմինկ, Մատամ տը լա Պայէթ ու վերջապէս՝ Պալպաք, ցայտուն գիծերով կը մատուցուին հասարակութեան, որ պատկառանքով կը դիմաւորէ Մօրուայի իւրաքանչիւր գործը, անոր մէջ տեսնելով գրական, քաղաքական եւ գիտական աշխարհի հակներուն հարազատ մեկնիչը:

Իր յուշերը, որոնց վերջին ձեռագիրները մահէն քանի մը օր առաջ յանձնուեցան Հրատարակութեան, գրական հարուստ շրջանի մը թանկագին վկայութիւնն են: Յետադարձ նայուածքը մարդու մը, որ ճշմարտութեան անխոնջ որոնողը եղաւ, ապրեցաւ իր դարուն մէջ, լեցուց իր դարը եւ միջազգային գրական գանձարանը հարստացուց իր մտքին ու հոգիին գանձերով:

Իրմէ ետք, մատի վրայ կը համբուրեն ներկայացուցիչները այն սերունդին, որ գրականութեան տաճարէն ներս կը մտնեն քուրմի մը երկիւղածութեամբ:

ՏԻԳՐԱՆ ՈՍԿԱՆԻՆ

### ԱՂԷՆ ԲՈՒՆԵՑ ԱՄԷՆԷՆ ԵՐԿԱՐ ՃԱՄԲԱՆ

Տասնրկից տարեկան էի, երբ հանդիպեցայ Մարգուն, — աշպէս կը կոչէին զայն իր աշակերտները: Մօտ յիսուսն տարի անցած է այդ հանդիպումէն ասդին: Բայց, իր հանճարին եւ նկարագրին հանդէպ հիացումս նոյնը կը մնայ: Ատկէ ի վեր ճանչցայ բազում դէմքեր՝ պետական մարդիկ, հռչակաւոր զորավարներ եւ մեծ դրազէտներ, բայց բոլոր անոնց մէջ ինծի համար իսկապէս «անմոռանալի» մնացողը Ալէնն է:

Բուանի ճեմարանին փիլիսոփայութեան աշակերտները, Հոկտեմբեր 1901-ի այդ առաւօտուն, հետաքրքիր էին տեսնելու իրենց նոր ուսուցիչը: Աւելի բարձր դասարանի աշակերտները հիացումով իօսած էին այս երիտասարդ ուսուցչի մասին, որուն ստղանդը իր դասերը այնքան ցայտուն կերպով կը զանազանէր միւսներէն: Ներս մտաւ յանկարծ տրազ եւ վճռական քայլերով՝ բարձրահասակ էր, առոյգ եւ էպպէս կենդանի: Պահ մը նայեցաւ մեզի, առանց խօսելու: Ապա՝ կտոր մը կաւիճ տոնելով, սեւ տախտակին վրայ գրեց Պզատոնէն երկու նախադասութիւններ. — ՊԷՄԷ Է ՅՂԱՐԱՐԱՅԻՆԱՅ ԵՐՔԱՂ ԱՄԲԱՂ ԻՈՂԻՈՂ ԵՒ ԱՂԷՆ ԵՐԿԱՐ ԵՒ ԲՈՒՆԵՑ ԵՐԿԱՐ ԵՒ ԲՈՒՆԵՑ ԵՐԿԱՐ:

Այսպէս ոկտաւ այն զեղեցիկ տարին, զոր միասին պիտի անցնէինք Շարթիէի հետ, փիլիսոփան, որ հռչակաւոր դարձաւ Ալէն անունով: Իւրաքանչէր զատ եղաւ անակնկալ մը: Երբեմն մեզի հետ կը նստէր նստարանի մը վրայ եւ դասի կը հանէր աշակերտ մը, շտրտգրութեան նախագիծ մը պատրաստ

ուելու համար: Երբեմն կ'առնէր առարկայ մը, կազմարը կամ կաւիճի առփը եւ այդ պատկերին շուրջ կը վերակերտէր ամբողջ փիլիսոփայութիւն մը: Երբեմն մեզմէ մէկուն կարգաւ կա տար Մօնթէյնիէն կամ Հոմերոսէն էջ մը եւ մընացեալ ժամանակը կը յատկացնէր մեկնարանութեան: Հէկէլ կամ Բանթ, որոնք դժուար եւ վերացական կը թուէին մեզի, շատ մօտ կը դասնային, երբ մեր ուսուցիչը կը բացատրէր: Ալէն երբեք չէր հակաճառեր իր հիացումին արժանացած հեղինակներու. Ժխտելը իրեն համար թշուառագօյն զատուած կը թուէր: Մեզի կը սորվեցնէր իւրաքանչիւր գործի մէջ տեսնել ա'յն, ինչ որ ճշմարտութիւնն է:

Երբեք գրութիւն մը ըպարտադրեց մեզի: Երբեք չըսաւ. «Ճիշտ այսպէս պէտք է մտածել»: Իր մեթոտը աւելի մեզի կասկածիլ սորվեցնելը եղաւ: Երբեմն, երեւութապէս անժխտելի ձեւով մը, ցոյց կու տար փաբատագի մը ճշշմարտութիւնը, ապա՝ կը կը մղէր որ մենք երեւան բերենք իր պարզաբանման տկար կէտերը:

Գրթական մարդին մէջ անձնական եւ անդիշող դատաւարներ ունէր: Կը խորհէր, թէ աշխատանքը պէտք է ըլլայ աշխատանք եւ ոչ թէ խաղ. մթութիւնը, որ խնդիրներ կ'արծարծէ եւ ուշադրութիւնը կ'արթնցնէ, լաւ դատարակ է. եւ թէ՛ աւելի լաւ է քիչ բան կատարելապէս գիտնալ, քան շատ՝ մակերեսային կերպով: Կ'աւելցնէր, թէ ինչ որ դիւրութեամբ կը սորվուի, դիւրութեամբ կը մոռցուի, եւ, լաւ գատարանի մը մէջ աշակերտը ուսուցիչէն

ուելի կ'աշխատի. «Ռասարանին մէջ, - կ'ըսէր ան, - պէտք է լսել երիտասարդ հայներու հունչը. ոչ թէ ուսուցիչին մեծախօսութիւնը»:

Կը սիրէր զօրծածել սեւ տախտակը, որովհետեւ զբաւոր նախադասութիւնը եւ ճանաչանդ տարազը, որ արդէն բանաստեղծութիւն է, կը հաստատեն ճտածումը եւ կ'օգնեն յիշողութեան: «Բանակի մէջ, - կ'ըսէր ան, - հրացանի մասին գոտախօսութիւն չեն տար. իւրաքանչիւր զինուոր պէտք է քակէ եւ վերաշինէ իր գեմքը, գործածելով նոյն բաները, ինչ որ իր դաստիարակը: Քսան փարձ ետք, զինուորը գիտէ, թէ ինչ է հրացանը եւ ունի քառամթերք մը՝ ըսելու համար գիտցածը: Նոյն ձեւով ալ, մտածել կարելի չէ սորվիլ ունկնդրելով մարդ մը, որ լաւ կը մտածէ: Պէտք եղածը սեփական պատճառաբանութիւնները քակելն է, այսպէս զանոնք վերակերտելը, մինչեւ որ ճիւրջ եւ քառամթերք մաս կազմեն ձեզի»: Նոյն բանը կ'ըսէր Փօլ Վալէրի հետեւեալ ձեւով. «Պէտք է մարդ ինքն իր վրայ աւելցնէ ինչ որ կը գտնէ»:

Երբ իրեն ըսի, թէ կը փոփաքէիմ զրեւ, խորհուրդ տուաւ որ ծայրէ ի ծայր ընդօրինակեմ Սթանտալի Լա Շարքըրտեօ տը Փարմի ութ հարիւր էջերը:

«Արվելալ արուեստը, - կ'ըսէր ան, - կը պահանջէ երկար ատեն նմանցնել եւ ընդօրինակել, ինչպէս կ'ընեն երածիւտները եւ նկարչները...»:

Ինծի սորվեցուց շարժամարհել հասարակ տեղեքները:

«Միայն յիմարները, - կ'ըսէր ան, - կը կարծեն ինքնատիպ ըլլալ, անտեսելով գիրծնք մախարդող սերունդներուն գազափարմները: Իսկական ինքնատպութիւնը կը կայանայ հասարակ տեղիքները ձեռակերպելուն մէջ»:

Յը պահանջէր, որ մեր փիլիսոփայական շարագրութիւնները ներկայացրենք օրինակներով եւ պատկերներով: «Ձեր նախադասութիւնները պէտք է լեցում ըլլան այրերով եւ կիներով, քա-

րերով, մետաղներով, սքռոներով, սնդաններով եւ կենդանիներով: Եարուճակ վերացական մե մը գէշ մե է. միայն շօշափելի օրինակները մե կու տան...»:

Պէտք է սորվիլնք նաեւ խոսանալ.

«Միշտ դիւրին է երկար ըլլալ, - կ'ըսէր ան, - բայց կարճ ըլլալը ժամանակի կը կարօտի»:

Երբեմն կը պատահէր, որ զժողովրդի մը մասին յիտեն տող շարագրութիւն պահանջէր մեզից: Պարտականութիւններու լուսանցքին վրայ, կը գըրէր.

«Սեղմէ, խոսացուր եւ վերացուր քունցքի հարուածով»:

Մեզի տուած շարագրութեան նիւթերը ուրախութիւն կը պատճառէին. մանկամարդ կիմ մը, անճանաչան ըլլալու համար, կը պատրաստուի Արուեստից կամարդէն ցատկել. փիլիսոփայ մը, որ անկէ կ'անցնէր, փշլէն կը բռնէ: Տիպակ: Եւ կամ. տիպակ՝ արեգակի մը եւ երշէլ հարիւրապետի մը միջեւ, Աստուծոյ գոչութեան մասին: Ուրիշ անգամ մը. Գոլէթը իւրօրինակի երկրին մէջ: Գարելի է երեւակայել, թէ ճեմարանականները ինչքան բան կ'ընային ըսել վերոյիշեալ նիւթերուն մասին:

Քաղաքականութեան մէջ զանազանութիւն կը զնէր ի բնէ քաղաքականութեան, որ արհեստ է, ինչպէս ձիւմարգրութիւնը, եւ որուն մասին զատ կուտար Պալլաքէն, Օկլաթ Քոնթէն եւ Նափոլէոնէն, եւ մտքի քաղաքականութեան միջեւ, որ կը փրկէ դատումի ազատութիւնը եւ, հնազանդութիւն շնորհելով հանդերձ, կը մերժէ յարգանքը:

«Մտայնել գեղեցիկ է, - կ'ըսէր, - կուրօրէն ծառայելը, կը դադրի գեղեցիկ ըլլալէ»:

Ալէն, արժատական, կը պահանջէր, որ քաղաքացիները եւ անոնց երեսփոխանները երբեք չըբն իշխանութեան հակակշիռը.

«Հնազանդիլ դիմադրելով. ունաւմարդ գաղտնիքը: Ինչ որ կը քանգէ հնազանդութիւնը, անիշխանութիւն է. ինչ որ կը քանգէ դիմադրութիւնը՝

բռնակալութիւնն :

Այս մասին մեզի կը խօսէր ոչ միայն ճառերով, այլ օրինակներով : Համալսարանին իշխանութեանց հանդէպ իր վերաբերումը մեզ կը հրապուրէր : Ուրովհետեւ անթերի քաղաքավարութիւն մը, բայց բացարձակ անկախութիւն մը կը ցուցարբէր այդ մարդոց հանդէպ, որոնցմէ կախում ունէր իր ասպարէզը : Ի պոստի Փրանսական վարչութեան, պէտք է ըսել, թէ այդ վերաբերումը պատճառ չեղաւ երբեք որ Ալէնի բարձրացումը նուազ արագ ըլլայ :

Երբ ուսումս աւարտեցի, ուզեցի երթալ Փարիզ՝ գրադէտի կեանքի մը սկսելու համար : Հայրս, որ զործարան մը ունէր Նորմանտի, կը պնդէր որ զործի անցնիմ : Շատ զարմացայ, երբ Ալէն համաձայն եղաւ հօրս . «Երբ անմիջապէս գրելու սկսիս, ըսաւ ինծի, մարտոց կեանքէն բան պիտի չգիտնաս : Պիտի մասնակցիս բուռ մը մտաւորականներու անիրական գայութեան, Փարիզի սրճարաններում եւ արաններում մէջ : Այդպէսով չէ որ վիպասամ կ'ըլլայն : Պայքա՛մ ֆուտարի գրագիր էր, Սքանալ եւ Թոլսթոյ բանակի մէջ ծառայեցիմ . Գոնրատ Բուսսարի էր : Եթէ զարծաբանի մը մէջ աշխատիս, հոն պիտի աքլիս ֆուսքով՝ պիտի ապրիս : Ապրիլէ հոս միայն, իրաւունք պիտի ունենաս տալու կեանքը...» Հետեւեցայ իր խորհուրդին եւ երբեք չեմ զոյլար :

Սակաւաթիւ գիրքերու մարդը՝ Հաւատարիմ էր Պլատոնին, Տեքսթին, Սփինոզային, Հեկելին, Օկուսթ Գոնթին : Աւելցուցէք Թաւիթ, Հիւլօ, Սեն-Սիմոն, Ռեց, Մոնթէնը, Ռուսօ, Վոլթէր, բնականաբար՝ Սթանտալ եւ Պալզաք, Ժորժ Սան, աւելի ետք՝ Փրուսթ : Ապա բանաստեղծները՝ Հոմերոս, Հիւլօ, Վայերի :

Երկու պատերազմներու միջեւ, զըրեց իր գեղեցկագոյն գիրքերը :

Այդ օրերուն կ'ապրէի Փարիզ եւ յաճախ կ'երթայի տեսնելու զինքը : Ամէն

անգամ որ նոր զործ մը հրատարակէի, կը տանէի իրեն, ոչ առանց երկչոտութեան, եւ իր գատումին կը սպասէի յոյսի եւ վախի խոտն զբացումով մը, ինչպէս այն օրերուն, երբ Ռուանի մէջ իր աշակերան էի : Կը պատահէր որ բռնակալ Վալու էր, ու ես ուրախութեամբ եւ հպարտութեամբ կը լեցուէի : Ռուսիչ անպամներ, իհաս էր . «Գլուստ է, գիրք չէ» : Ու զրտէի, թէ իրաւունք ունի :

Վերջապէս, ստիպուեցաւ հանգըստեան կոշուէի : Ու չզղջաց : Թէեւ ցուերը դինք ի վերջոյ զարձուցին հաշմանդամ մը, բայց չդադրեցաւ զործունեայ ըլլալէ : Կը զրէր, կը կտրուար, մասնաւոր իր օրինակով ցոյց կու տար, թէ ինչ է իրական փիլիսոփան : Ինքզինքն եւ իր արուեստէն դժգոհ ամէն մարդ պէտք է կարգայ Ալէնի հօտի կրթանկարծան մասին զործը : Հոն պիտի սորվի, թէ երջանկութիւնը պարտականութիւն մըն է : Ով որ ծիտամանակ պիտէ տարակուսի եւ հաւատալ, տարակուսելու եւ զործել, տարակուսելու եւ ուղեւ՝ վերջուած է : Սոկրատ մեռած չէ : Նստած է իր սեղանին առջեւ, արուարձանի իր փոքր տան մէջ :

Հայն հասարակութիւնը քիչ ծանօթ է իրեն, բայց մենք քանի մը հողի ենք մտածող, թէ հարիւր տարի ետք, այս գործը, մեր ժամանակի գրական պատմութեան մէջ, պիտի գրաւէ այն տեղը, որ Լե-րոզ դարու պատմութեան մէջ, վերապահուած է Մոնթէնի Լանկրուն :

Երբ Փրանսական Ակադեմիայի անդամ ընտրուեցայ, լրագրող մը հարցուց տպաւորութիւններս :

— Առաջին տպաւորութիւնս այն՝ որ ուրիշներ աւելի արժանի էին այս անօրին :

Այդ պահուն կը մտածէի ծերունի ուսուցիչիս մասին, բայց գիտէի, որ եթէ այդ երջանկութիւնը ընծայուէր իրեն, զայն պիտի մերժէր միւս երջանկութիւններուն պէս :

ԱՆՏՐԷ ՄՕՐՈՒԱ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԼՈՒԻՃԻ ՓԻՐԱՆՏԷԼԻՕ



Բ.

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Արուեստի ամէն գործ ճշմարիտին ու զեղեցիկին շուրջ կը դառնայ: Արուեստի գործը ճշմարտութեան մը փնտրու-տուքն է, զեղեցկորէն արտայայտուած: Ճշմարտութիւնը կրնայ զեղեցիկ թուիլ մեզի, կամ ոչ. բայց երբ արուեստի գործ մըն է՝ անպայման պիտի թուի բնական, իրական. նոյնիսկ երբ տարբեր է մեր ճշմարտութենէն:

Արուեստագէտը արդէն կը բերէ կեանքին իր ճշմար-տութիւնը, եւ ատով է որ նորութիւն է ու արժէք:

Փիրանտէլլոյի արուեստին հիմնական փնտրուողը ոչ թէ ճշմարտութեան մը, կամ իր ճշմարտութեան փնտրու-տուքն է, այլ բուն, նշմարաւորին բառին յարաբերակա-նութիւնն է:

Ո՞րն է ճշմարիտը, ո՞րն է իրականը կեանքի մէջ... Ահա հարցում մը, որ անպայման կը շարշարէ մտա-ծող միտք մը, զգայուն հոգի մը, մանաւանդ երբ կեանքը անոր կը բերէ Փիրանտէլլեան բաժին մը:

Անթոնիէթթայի խելագարութիւնը տասնըութ տարի շարունակ, առաջացուցած էր իր կողքին տարբեր աշխարհ մը, մեր տրամաբանութենէն տարբեր հիմքերով, տարբեր տրամաբանութեամբ աշխարհ մը, ուր ամէն ինչ կը համա-ձայնուէր ենթակայի գլխաւոր մտանկետումին՝ նախան-ձին: Երեւոյթները, դէպքերը, մարդիկ, ինքը Փիրանտէլլոն այդ աշխարհին մէջ ունէին համապատասխան տեղը, հիմ-

նրանք մեզի համար զանհատաորակիչն», ենթակային համար շատ բնական, եւ իրական զգայնութեանց ու մտածողութեան վրայ:

Ո՞րն էր ճշմարիտը, ո՞վ էր ինք, ո՞րն էր ինք: Անթոնիէթիայի պատկերացուցածը, թէ իր սեփական պատկերացումը...

Եթէ խելագարութեան պարազան բացատրութիւն համարելով զանց առնուի, դարձեալ կը մնայ տարբերութիւն մը պատկերացումներու, ըմբռնողութեանց, զգայնութիւններու, մտածողութեանց ու տրամաբանութեանց: Ամենաբնական թուացող մարդն անպատճառ միեւնոյն գրգռէն տարբեր զգայնութեանց հասնել, եւ բնականաբար՝ տարբեր եզրակացութիւններ հանել: Ո՞րն է ճշմարիտը, որո՞ւն զգացածն ու մտածածն է ճշմարիտը:

1917-ին գրուած «Ամէն մէկուն իր ուշադրութիւնը» թատերակին մէջ, այս հիմնական հարցը դրած է Փիբանտէլլո:

«ԱՄԷՆ ՄԷԿՈՒՆ ԻՐ ՃՇՄԱՐՈՒԹԻՒՆԸ»

Իտալական քաղաքի մը մէջ, ընկերութեան վերին շրջանակները մեծ յուզումի մը մասնակցած են ի տես նոր մամանած պաշտօնեայի մը՝ պրն. Փոնդային, որ իր կիներն ու զոքանչ մայրը իրարմէ հեռու կը պահէ, անջատ բնակարաններու մէջ, տանց արտօնելու ու իրար սոյնելին: Կը թուի, թէ տիկին Փյօրա կը թղթակցի իր աղջկան հետ, եւ ամէն առաւօտ անոր բնակած շէնքին բակը երթալով, վարէն վեճ, մինչեւ հինգերորդ յարկը, աղջկան հետ կը խօսակցի ու դամբիւղով մը վար իջեցուած նամակը կը ստանայ, եւ իր գրածը աղջկան կը շրկէ:

Այս անմարդկային վերաբերումէն ընդզգած՝ հասարակութիւնը կ'ուզէ իմանալ պատճառները, որպէսզի ըստ այնմ վարուի ենթակային հետ: Բնականաբար քիչ մըն ալ հետաքրքրութիւն կը խառնուի կանացի այս փնտռութիւն մէջ. ըսի-ըսուի առատ նիւթ կայ:

Փնտռութիւնները կու տան հետեւեալ արդիւնքը՝ զգանչ մայրը կ'ըսէ, թէ ինք համաձայն է անջատ ապրելու այս պայմանին եւ իր աղջիկը տեսնելուն ոչ մի դրուած արգելքին, որովհետեւ շատ կը սիրէ իր աղջիկն ու փեսան, պրն. Փոնդան: Հոգեկան ցնցումի մը հետեւանքով իր աղջիկը ժամանակ մը հիւանդանոց դրուած է. փեսան, չկարենալով տանիլ այս իրողութիւնը, այնքան խորապէս ցընցըած է, որ կարծած է, թէ կիներ մեռած է: Այն աստիճան որմատացած է այս երեւակայութիւնը իր մէջ, որ երբ կիներ հիւանդանոցէն գուրս եկած է առողջացած, պրն. Փոնդա շարունակած է կարծել, պնդել, թէ ան իր կիներ չէ, իր կիներ մեռած է: Որով՝ երկուքին կենակցութիւնը որպէսզի

վերստին կարելի դառնայ, հարկ եղած է երկրորդ ամուսնութեան մը պատրանքը տալ փեսային, որ այդ օրէն այս կողմ կը պնդէ, թէ իր կինը տիկին Ֆլորայի աղջիկը չէ, երկրորդ կին մըն է, թէ իր առաջին կինը մեռած է: «Անվրնաս ու բարեխիղճ մարդ մըն է փեսաս», - կ'ըսէ տիկին Ֆլորա ու կը խնդրէ որ նեղը շղենն դաշն. մանաւանդ որ ինք դո՛ւ է իր ապրելակերպէն, հետուէն հետու իր աղջիկը տեսնելէն:

Պրն. Փոնգա, տեղեկանալով որ իր մեծաւորին՝ քաղաքապետին ընտանիքը հետաքրքրուած է իր պարագայով, եւ իր զոքանչ ժօր հետ տեսնուած է, ինքզինք ստիպուած կը զգայ պատմելու անոնց, թէ դժբախտաբար իր առաջին կնոջ մայրը, տիկին Ֆլորա, չկարենալով տոկալ իր աղջկան մահուան, խորապէս ցնցուած այդ լուրէն, ինքզինք կորսնցուցած է, ուղեղի հաւասարակշռութիւնը խախտած է, եւ իրենք, գլխաւով անոր վրայ, զայն կրկին կեանքին կապելու համար, համոզած են դինք, թէ աղջիկը մեռած չէ, թէ Փոնգայի այս երկրորդ կինը, տիկին Ֆլորայի աղջիկն է: Սակայն կը վախնայ, որ եթէ շատ մտէն ցոյց տալու ըլլայ տիկին Ֆլորային իր երկրորդ կինը, եթէ արտօնէ որ շատ մտէն եւ յաճախ յարաբերին, հաւանական է որ նըշմարէ, թէ այս մէկը իր աղջիկը չէ, եւ շղիմանալով այս երկրորդ ցնցումին՝ կեանքը կորսնցնէ: Որով՝ դուք մըղւած՝ ինք կը խաղայ այս կատակերգութիւնը:

Հասարակութիւնը կը փորձէ քաղաքապետական տոմարներէն, փաստաթուղթերով ստուգել, թէ որո՞ւն ըսածն է ճշմարիտը: Դժբախտաբար պրն. Փոնգայի նախկին քաղաքը երկրաշարժէն հիմնադատակ կործանած է, քաղաքապետարանը այրած, փոքր այդ քաղաքին ժողովուրդը մեծ մասով զոհ զոցած է երկրաշարժին, մնացեալները անհետք ցրուած են, որով՝ կարելի չէ ձեռք բերել եւ ո՛չ մէկ փաստաթուղթ կամ վկայութիւն առաջին կնոջ մահուան մասին, կամ երկրորդ ամուսնութեան մը մասին:

**ԽՆՆ ԸՆԵՂ:**

Վերջին յոյսը կը մնայ պրն. Փոնգայի կինն ու մայրացուն (կամ մայրը) դէմ դիմաց հանել:

Տիկին Ֆլորա աղջիկը տեսնելով ուրախութենէն մըղւած ու սիրտ պատռող ճիչ մը կ'արձակէ՝ «Լիմա, Լիմա», կը վազէ ու գիբկը կ'առնէ գայն: Պրն. Փոնգա, ներսի սենեակէն լսելով այդ ճիչը, կը վազէ ու «Ժիլիէթ, Ժիլիէթ», կը պոռայ:

Երբ ամուսինը տիկին Ֆլորան դուրս կը տանի, կիւնը ներկաներու հարցումներուն ի պատասխան, կ'ըսէ՝

Տիկին ՓՈՆԳԱ.— Ձեր այս տեսածէն ետք տակաւին ի՞նչ կրթաւ ուզել, ի՞նչ կը սպասէք ինձմէ: Կը տեսնէք, որ դժբախտութիւն մըն է, որ պէտք է գաղտնի մը: Յայ, որպէսզի գուրբ բերող դարմանը ազդու ըլլայ:

ՔԱՂԱՔԱՊԵՏԸ.- Տիկի՛ն, մե՛նք կը յարգե՛մք գութի այդ զգացումը: Ի՞նչ որ կ'ուզե՛մք պարգայէս իմանալն է...

Տիկի՛ն ՓՈՆՁԱ.- Ի՞՞նչ, ճշմարտութի՛նը: Միակ ճշմարտութիւնը այն է, որ այն՝ ես տիկին Փլորայի աղջիկն եմ:

ԲՈՒՈՐԸ.- (Գոհունակութեան հասաչանքով մը) Ա՛հ...

Տիկի՛ն ՓՈՆՁԱ.- Եւ՛ պլը. Փոսկայի երկրորդ կիճն եմ:

ԲՈՒՈՐԸ.- (Թուախարուած, եւ ցած ձայնով) Ինչպէ՛ս կ'ըլլայ:

Տիկի՛ն ՓՈՆՁԱ.- Այո, եւ ի՛նչս ի՛նծի համար՝ ես ոչ ոք եմ:

ՔԱՂԱՔԱՊԵՏԸ.- Ոչ, տիկի՛ն, դուք ձեզի համար թէ՛ մէկն էք, եւ թէ միւսը:

Տիկի՛ն ՓՈՆՁԱ.- Ոչ, պարտնէր, զառով ի՛նծի, ես այն եմ, որ կը կարծեմ որ եմ: (Երեսը ծածկող շղարչին տակէն հարա նայուածք մը նետելով բոլորին, կը հեռանայ):

ԼՈՏԻՁԻ.- Ահաւասիկ տիկիճներ ու պարտնէր, ինչպէ՛ս կը խօսի ճշմարտութիւնը: (Հնդնական նայելով շուրջիններուն) Գո՞հ էք հիմա: (Կը պայթի խնդալէն) Հա, հա, հա, հա...

Ու վարդոյրը կ'էջնէ թատերակի վերջին տեսարանին վրայ:

*Տիկին Փլորա եւ պրն. Փոնզա, երկու ասորեր պատմութիւններով... Երկուքն ալ կը հաւատան իրենց տրամաբանութեան կառուցածին որպէս բացարձակ իրականութիւն, եւ որպէս միակ ճշմարտութիւն: Ո՞րն է ճշմարտութիւնը: Ա՛հ մէկ մէկը ունի իր ճշմարտութիւնը: Ընկերութիւնը գործերը բոլորին բարոնելի եւ ընդունելի դարձնելու համար, առաջացուցած է փաստաթուղթերու ճշմարտութիւն մը, որ կը փակցուի ենթակային, եւ առանց որուն ապրել կարելի չէ, որ սակայն ճշմարտութիւնը չէ:*

Որովհետեւ իրականութիւնը հոգիին մէջ է. ամէն մէկուն համար ի՛ր իրականութիւնը, ի՛ր ճշմարտութիւնը: Իսկ մարդոց մեծամասնութեան փնտածը հանդրատացիող արտաքին ճշմարտութիւն մըն է միայն, որ կը գիւրացնէ կեանքը՝ փաստաթուղթերու ճշմարտութիւնը, կամ ընդհանուրին ընդունած, ընդհանուրին ըսած ճշմարտութիւնը:

*Մինչդեռ հարցը այն չէ թէ փաստաթուղթերը կը պակսին, որովհետեւ երկրաշարժ եղած է կամ հրեծ, փաստաթուղթերը կրնան գոյութիւն ունենալ, սակայն չհամապատասխանեն ճշմարտութեան, որովհետեւ ենթակաները իրենց իրենց հողին մէջ փճացուցած են ընկերութեան ծանօթ փաստաթուղթերը, եւ առաջացուցած են իրենց յատուկ, մեր կոչումով երեսակայական, իրենց զգայութեամբ բացարձակապէս իրական եւ տրամաբանական իրո-*





Լուիսի Փիրանուլլո՝ երկու անձնատրուքիները

զուգույն ձը, որ իրականին թանձրութիւնը ունի իրենց համար. որով՝ կ'ապրին կատարեալ համայնութեան ձը մէջ:

«Իրենց այս իրականութիւնը, կ'ըսէ ԼԱՏԻՉԻ, — եւ ոչ մէկ փաստաբազր կրնայ խորտակել. կը շնչեն գայն, կը տեսնեն, կը շօշափեն, կը հոտուեն: Փաստաբազրերը կը բնան միայն ձեզի ծառայել, յիմարական հետաքրքրութիւն մը գտնուցնելու համար»:

Մարդիկ կը սիրեն ուրիշներու մասին կարճ ու կըտրուակ գատողութիւններ յայտնարել, որոնք չեն համապատասխաներ իրողութեանց: Եւ եթէ մինչեւ անգամ համապատասխանէին իրողութեանց, դարձեալ սխալանքի պիտի առաջնորդեն կարծիքը արտայայտողն ու շարժիչները, որովհետեւ այդ գատողութիւնները ծայրայեղ կանխապա-

չարամենքով, յուզականութեամբ, ծայրայեղ պարզացումներով այնքան աղուաղուած են, այնքան կեղծուած, որ կարելի չէ ճշմարտութիւն զտել անոնց մէջ:

Դարձանք... միակ դարձանք սկեպտիկութիւնն է, մտային պատուաւոր բծախնդրութիւնը, ուղղամէտ կեցւածքը, անխնայ սկեպտիկութիւնը:

Փութն ու ծիծաղը իրարու հետ պէտք է զարկն: Քիչ պէտք է հաւատալ ըստածներուն. եւ մանաւանդ շատ աւելի քիչ պէտք է գատել ուրիշները:

Կեանքը ինքը ողբերգական կատակերգութիւն մըն է, կամ Իսմիէ ողբերգութիւն մը:

Պէտք չէ մտնել նոյնպէս, որ մարդը նաև մէկ հաս չէ: «Վեց անձնաւորութեանց» մէջ, Հայրը կ'ըսէ.

- Տաւը քստ ինձի հոն է, որ մեզմէ ամէն մէկը այն գիտակցութիւնը ունի. բէ ինք «Մէկ» է, մինչդեռ հարիւր է, հազար է, այնքան անգամ մէկ է, որքան կարելիութիւններ կան իր մէջ: Ասոր հետ մէկն է, որքիշի մը հետ միւսն է... Եւ այս, միշտ պահելով պատրամքը բոլորին համար, նայը մտացած քլլալու, քլլալու այն «Մէկը», որ մեմէ կը կարծենք որ ենք մեր բոլոր գործերուն մէջ»:

Փրէօյտը ծնած է, կայ, կը զբէ, սկսած է շանալ արդէն մարդկային հոգիին ներքին, մթին ծալքերը, մարդուն բազմաթիւ երեսները, մէկէ աւելի հսկում գոյութիւնը: Փրբանտէլլոյի թատերակներուն մէջ արուեստի ճշգրտութեամբ ու զննչկութեամբ, երկուութիւնը կամ բազմաթիւ էութիւնները մարդուն, կը զտեն իրենց ամբողջական արտայայտութիւնը, ցնցող, տպաւորող, ու կենդանի մանաւանդ:

«Այսպէս կամ այնպէս» թատերակին մէջ՝ ՏիէԿՕ կ'ըսէ տեղ մը.

ՏիէԿՕ.- Գիտակցութիւնը, որում մասին կը խօսէինք քիչ առաջ, առաձգական ցամք մըն է: Թաղ քիչ մը բացւին ցամքին նադիրը... ու ահա, մեզմէ ամէն մէկուն մէջ նստած խեղճութիւնը կը սլօնի դուրս գալ բացւածքներէն:

ՏՕԲՕ.- Իմ մասի՞ն է կը խօսիս:

ՏիէԿՕ.- (Ինքն իրեն խօսելով) Դիմացդ կը սկսին քափառիլ անկապակից պատկերներ, պատկերներ՝ որում մէջդ ամբարտաւած էին տարիներ, տարիներ շարունակ. կեանքի պատահիկներ, արձմէ քերուա տարածես, եւ արձմէ պահուած մեացած են, արձկներու հաւանաբար չես ուզած, կամ չես կրցած ցոյացնել գանձ մէջդ, գիտակցութեանդ լայսին տակ դերել: Երկիմաստ շարժումներ, ամօքալի սուտեր, պակշտ ցանկութիւններ, ներքին ամենախոր անկումներու մէջ մտածուած ռիթմեր, իրենց ամենաթղթիկ մանրամասնութիւններով եւ յիստոլոգիայուած ցանկութիւններ... ամէնը, ամէնը դէպի վեր կը բարձրա-

համ, դէպի երեսը կ'ելլեն... գարշամբ կը պատնա-  
ռեն ճեզի եւ կը դիտես զանոնք քարստփահար, ըզ-  
գիտնուած նոյն ատեն»:

*Մեր մտային ու յուզական կենքի մեծ մասը կը հո-  
սի անտեսանելի: Ձրէջոյտէն այս կողմ այս մասին ոչինչ  
մէջ չկայ: Մենք կ'ապրինք ուրեմն կրկնակի կեանք մը՝  
գիտակցականն ու անգիտակցականը:*

*Գիտակցականը յաճախ կը զննէ այն միւսը, անգի-  
տակցականը, ու այնտեղ կը դտնէ տարբեր աշխարհներ,  
տարբեր անձնաւորութիւններ, քան այն՝ ինչ որ կ'երեւայ  
արտաքին աշխարհին, կամ նոյնիսկ ինքն իրեն, իր գիտակ-  
ցական աշխարհի լոյսին տակ:*

*Եւ դեռ, գիտակցութեան այն մասը, որ կը զննէ ան-  
գիտակցական մեր աշխարհը, կը փոխէ զայն, գիտուած  
այդ մասը:*

*Ու դեռ կայ, շարունակ կայ, միշտ կարելի է յայտ-  
նարբեւի չգիտուած նոր մաս մը մեր ներքին իրականութե-  
նէն. ներքին միւս ետերէն, որոնք մութին մէջ են, սա-  
կայն կը մղեն, կ'ազդեն գիտակցուած եսին վրայ:*

*Ուրեմն, մարդու պատկերին հին ըմբռնողութիւնը  
որպէս մէկ տրամաբանական ու տրամաբանող ամբողջու-  
թիւն, որպէս միակ հոգի, մէկ հատիկ անձ, տեղի տուած է  
անձնաւորութեան նոր ըմբռնողութեան մը, որ այլեւս անբա-  
ժանելի ամբողջութիւն մը չէ, չի կրնար ըլլալ: Անհատ բա-  
ուր, իր ծագումով, ներկայ, մէկ անձնաւորութիւն իմաս-  
տէն առաջ, ունի զանհատի, անհատանելի, անբաժանե-  
լի մէկ ամբողջութեան իմաստը: Նոյն բառը կը դործած-  
էր նաեւ Երվանդի Համար, անբաժանելի կորիզ, անբա-  
ժանելի միաւոր որպէս: Այսօր Երվանդ ալ կը բաժնուի  
մասերու: Անհատն ալ ունի իր մէջ կրկնակներ:*

*Ջրտղարութեանց գիտական ուսումնասիրութիւնը ե-  
կաւ լըացնելու արուեստագէտին տեսածն ու գգացածը,  
ցոյց տալով միեւնոյն անձնաւորութեան մէջ մէկէ աւելի  
անձերու գոյութիւնը:*

*Ուրեմն, եթէ մեր սեփական խառնուածքը, անձնա-  
ւորութիւնը այսպէս անկայուն բաղադրութիւն մըն է, ո՛ւր  
կը մնայ ճշմարտութիւնը... ի՞նչ կրնան գիտնալ ուրիշնե-  
րը մեր մասին, եւ մենք՝ ուրիշներու մասին: Մեզմէ սովէն  
մէկը փաստօրէն ուրիշներուն համար կը վերածուի լուսի-  
նի մը, որուն մէկ երեսը տեւաբար մութին մէջ պիտի մը-  
նայ իրենց համար:*

*Կը նմանինք զնդամուզի զնդակներուն, որոնք այս  
ու այն կողմ կը մագնն ու երբեմն ալ կը հանդիպին իրա-  
բու, կը զարնուին իրարու, կը համբուրեն իրար, սակայն  
միշտ ալ իրենց մակերեսին մէկ չնչին մասն է որ կրնայ  
դպչիլ միւս գնդակի կամայատուալտուն չնչին մասին, յա-  
րաբերութեան մէջ եզոյ մասերը աննկան մասերն են միայն,  
երբեք ամբողջութիւնը:*

Մարդոց ոչ ըսածները, ոչ ալ ըրածները կը բաւեն ճշմարտութիւնը յայտնարհելու համար: Դէպքերը, կ'ըսէ Փիբանսէլլօ, (Վեց անձնաւորութիւններ) կը նմանին տոպրակներու, եթէ դատարկ են, ոտքի չեն կրնար կենալ: Որպէնզոք իմաստ մը առնեն եւ կանգուն մնան, անհրաժեշտ է անոնց մէջ լեցնել պատճառներն ու զգացումները, որ դիրենք առջացուցած են:

Այսինքն անհրաժեշտ է ներքին զրդապատճառներուն ծանօթ ըլլալ, ներքին ճշմարտութեան հասնել, կարենալ դէպքը արժեւորելու համար այնպէ՛ս, ինչպէս ենթակայի ճշմարտութիւնը կ'առաջացնէ զանոնք:

Արտաքին երեւոյթները խարուսիկ են: Եւ խարուսիկ են ո՛չ միայն որովհետեւ դժուար է մեղի համար հասնիլ դիմացինի ներքին ճշմարտութեան, այլ նաեւ որովհետեւ մարդիկ զեմակաւոր կ'ապրին:

Ընկերութիւնը մեր ծնունդի իսկ բողբոջէն մեղի պետակ մը կը փակցնէ՝ մեր անունը, կրօնքը, հպատակութիւնը: Մեր մերկութիւնը կը ծածկուի հագուստներով, որոնք դուրսէն կը պարտադրուին բոլորէս: Մեր տեղը ընդմիջտ ճշդուած է ընկերութեան մէջ, առաջուց արձանագրուած են այն զգացումները, որոնք արտօնուած են մեղի, այն հաճոյանքները, որոնք կրնանք ճաշակել: Եթէ բողբոջ մը իսկ հեռանանք ասոնցմէ, օւրիշերուն կարծիքը եւ դատապարտութիւնը շուտով մեղի կը յիշեցնեն զանոնք:

«Երբ կ'ըսեմ գիտակցութիւն չ'արտօնեք. իրակաւնութեան մէջ կ'ըսեմ ուրիշները չեմ ձգեք, աշխարհ չ'արտօնեք: Գիտակցութիւնս, ի՞նչ կը կարծես որ է սա հասարակարգ գիտակցութիւնը: Գիտակցութիւնը բոլոր միւս մարդիկն են, որոնք իմ մէջս են: Այդ գիտակցութիւնը կը կրկնէ ինձի ա՛յն, ինչ որ ուրիշներ կ'ըսեն իրեն»: (Լ'Էֆօլիւ, ինչպէս նաեւ «Այսպէս կամ այնպէս» թատերակին մէջ՝ Տիէկօ):

Մարդկային գիտակցութիւնը ինքզինք կը ձեւէ ըստ այն պատկերին, որ ուրիշներ կը կառուցեն իր մասին: Այսինքն ի վիճակի է հայելիին մէջ նայած սառն անպամ ինքզինք տեսնելու այնպէս, ինչպէս ուրիշներ կը տեսնեն: Եսին այս ճկունութիւնը զխաւոր նիւթն է Փիբանտլլոյի, իր հիմնական մտածողութիւնն է:

Ծաղր մըն է կիսանքը, ուր ամէն մէկը դէր մը կը խաղայ, իր դէմքին անցուցած ընկերութեան պարտադրած պիմակը:

Պատիւը, օրինակի համար, կամ պատուախնդրութիւնը ճակատն է, դուրսէն երեւցողը: Ի՞նչ կ'անցնի կը զառնայ ճակատին հտին... որո՞նք հոգը: Էականը ամէնուն ներկայանայն է իրենց պահանջած պատկերով, որպէսզի կարենանք տեղ գրաւել այն շրջանակին մէջ, որ կառուցուած

է սովորութիւններով եւ անփոփոխելի է: Այնքան կաղտ-  
պարուած ենք ընկերային միջավայրով, ընկերութեան մե-  
զի պարտադրածով, որ ամէն փոքր պատահու պատասաը՝  
կ'առաջացնէ մեծ սքանտալ:

Իրականութեան մէջ երբեք չենք կրնար ուրիշներուն  
ներկայացնել մեր զէմքը մերի, այնպէս ինչպէս որ է, ա-  
ռանց զիմակի: Ի յառաջագունէ փչելի պիտի ըլլար ատի-  
կա բոլոր յարաբերութիւնները, որոնք հիմնուած են այն  
թատրոնին վրայ, որ կը խաղանք մենք իրարու, փոխա-  
դարձաբար: Կեանքի անհրաժեշտութիւն է պատասխանել  
ուրիշներու հրահրին, եւ ներկայանալ անոնց այն զիմա-  
զծով, որ անոնք կ'ուզեն մեզ տեսնել:

«Պատուայնորութեան հեշտամբք» թատերակին մէջ,  
Պուտոլինո տեղ մը կ'ըսէ. «Մենք զմեզ կը կառուցեմք, ան-  
խուսափելիօրէն: Բացառեմ միտէս. կը մտնեմ ներս այս  
սենեակէն, ու վայրկեանապէս ձեր դիմաց կը դառնամ այն՝  
որ պէտք է ըլլամ, այն՝ որ կրնամ ըլլալ, այսիմէն ինքզինս  
կը ներկայացնեմ ձեզի, ձեզի հետ իմ ունեցալի յարաբե-  
րութեան յարմարող ձեւով սակ: Ուրեմն ինքզինքս կը  
կառուցեմ, կը կերտեմ:

Դուք ալ նոյնը կ'ընէք, երբ զիս ներս կ'ընդունիք:  
Խորքին մէջ, սակայն, մեր կերտած անճանարութեանց  
ներքը, փնդկերուն ծոխն, լաւ մը պահուրտած կը մնամ  
մեր ամենագաղտնի մտածումները, ամենամտերիմ զգա-  
ցումները, այն ամէնը, այն ամէն ինչը որ մեմք ենք ան-  
կայտարար այն յարաբերութիւններէն որ որոշած ենք ձեզ  
հետ ունենալ:

Ընկերութեան կազմաւորման իսկ համար զոյսութիւն  
ունի ընկերութեան պարտադրանքը զիմակաւորումի, եւ  
անկարելիութիւնը հասնելու ճշմարտութեան. մինչև ան-  
գամ ո՛չ թէ բացարձակ, այլ յարաբերական, անհատական  
ճշմարտութեան: Մարդկային փոփոխական յարաբե-  
րութիւնները կարելի դարձնող զիմակներով մենք կը չըջինք  
ամէն օր, ամէն բոլորէ: Եւ ողբերգականը կը սկսի հո՛ն, ուր  
կը պատուի զիմակը, եւ մենք ականատես կ'ըլլանք կա-  
ռուցուած ձեւին քայքայումին:

Ընկերութեան մեզի նուիրածը զէթ զերասանին զի-  
մակը ըլլար, որ կարելի է տեսարար վերանորոգել... Ո՛չ,  
ընկերութեան պարտադրածը մերի յիմալ մըն է, զիմակ  
մը, որ կը փակչի զէմքին, որ զէմքն իսկ է: Հանեցէք զայն  
ու բան չի մնար: Փիթանտէլլոյի գրուած քննիչն մէկուն  
մէջ՝ (էնսօր), կայ այս պատկերը, ծիծաղելի ու ցաւազին  
նոյն աստե՛ն: Տիպարներէն մին շարունակ իր զէմքէն կը  
փրցնէ զիմակներ, մէկը միւսէն ծամածուռ, խնդուքի կամ  
արցունքի տրամադրող. մինչև որ, վերջին զիմակին տա-  
կէն կ'երեւայ՝ կ'ախիք մը միայն:

«ՊԱՏՈՒԱԽՆԴՐՈՒԹԵԱՆ ԷՆՇՏԱՆՔԸ»

Պոլտոփինո տարօրինակ մարդ մըն է. կեանքի սովորական, նիւթական կողմէն դրեթէ կտրուած, սիրտ ըսւածը իր կեանքէն դուրս նետած, պաղարիւն ու սիմիֆ դարձած մարդ մը, որ կրնայ վերէն նայել իր ասպերջանիկ անցեալին, եւ նաեւ ներկային վրայ, դործածելով զուտ իմացական աշխարհի տրամաբանութիւններ: Ժպտուն Հեղնանքով մը կը տանի իր թշուառութիւնը, իր մասին կատարուած անպատիւի, խաբէրայի մեղադրանքները, խանութպաններուն մերժումը իրեն ասպտիկ արանք տալու, իր նսիտը պարտքերը վճարած չըլլալուն համար:

Նոյն այս մարդը յանկարծ կը հրաւիրուի պատուաւորութեան, պատուախնդրութեան սքեմը հազցնելու Հեւորդհեաէ տնօր տնօթանքի մը: Մարքիզ Ֆապիօ Քոլլի դրկած միջնորդը կ'առաջարկէ իրեն ամուսնանալ մարքիզին յղէ մնացած սիրուհիին, Ակաթա Բէննիի Հեա, որուն Հեա մարքիզը չի կրնար ամուսնանալ, քանի որ ամուսնացած է, թէեւ կ'ապրի կնոջմէն բաժնուած: Եկեղեցին ամուսնալուծում չի տար արդէն: Պէտք է Պոլտոփինո ամուսնանայ Ակաթա Բէննիի Հեա, որպէսզի թէ՛ իր յղութիւնը, եւ թէ ծնելիք երեխան պատուաւոր անուն մը ունենայ:

Կացութեան Հեղնական կողմը կը շարժէ Պոլտոփինոյի Հեաաքքբութիւնն ու թերեւս դուրսը: Կ'ընդունի առաջարկը. պայմանով որ առկէ ետք իրենց յաբարբութիւնները պէտք է պատուաւորութեան Հիմերու վրայ ըլլան:

Շուտով կ'անդրադառնայ, թէ մարքիզն ու Ակաթի մայրը կը ծրարին երեխան ծնելուն պէս ազատուիլ իր ներկայութենէն, այս կամ այն մեւով: Երեխայի անունին մաքրութեան իսկ համար Պոլտոփինո կ'որոշէ մնալ:

Պոլտոփինոյի անկաշառութիւնը Ակաթի յարգանքը կը գրաւէ: Երբ կ'անդրադառնայ այս իրողութեան եւ Ակաթի հանդէպ հետզհետէ իր մէջ ծնած սիրոյ զգացումին, Պոլտոփինո կ'որոշէ Հեոանալ տունէն: Իմանալով այդ մտադրութեան մասին՝ Ակաթ կը յայտարարէ, թէ պիտի Հետեւի ամուսնին:

Պատիւն ու պատուախնդրութիւնը իրենց վերացական, Հանրային դիմապարտումի սահմանէն դուրս կու գան, եւ դիտակցութեան մտրակումով, սիրոյ ջերմութեամբ տաքցած, կը դառնան երկուքը իրար միացնող իրաւ սպրում:

Պատիւը, սակայն, այնպէս ինչպէս ընկերութիւնը կ'ըմբռնէ, արտաքին բան մըն է միայն. փոխառնուած այն հապուտն է, որով կը զարդարենք մենք զմեզ. այն արժէքն է, որ ուրիշներու դատումը մեզի կու տայ: Աթէ ուզես դուրս դալ արտաքին միայն եղող, դիմականման ըմբռնու

մէն պատիւին, (կամ այլ որեւէ պարտադրուած ըմբռնողութեան ու դիմակի) կթէ ուղես զուտ տրամաբանութիւնը, բացարձակ տրամաբանութիւնը զործածել, այդ պարագային պիտի դառնաս ՔԱՐԱՅԱՆ ԱՐՁԱՆ ՄԸ՝ ՍԿՋԻՌԻՆՔԻ ԱՐՁԱՆԸ՝ ինչ որ Պոլտովինո կ'ընէ «Պատուախնդրութեան հեշտանքը» թատերակին մէջ:

Ի՞նչ բանի համար կը դիմեն իբրէն, ընկերային պատրանք մը փրկելու համար, պատուախնդրութիւնը փրկելու համար, պատուաւորութիւնը պահպանելու համար... Հասլաւ, իմէ կը դառնայ այդ պատուաւորութեան մասնաճումն իսկ, Էրացած սկզբունքը պատուախնդրութեան, որմէ ոչ մէկ շեղում չ'ընդունիր:

Քարացած այս կեցուածքը, զուտ տրամաբանութեան վրայ հիմնուած այս կեցուածքը կը բաւէ արդէն, որ իսկոյն նշմարելի դառնան բոլոր սուտերը, բոլոր քամփրմիները, մինչեւ իսկ զգացումներու կեղծիքը: Միակտուր բարոյականին դիմաց, կառուցուած բարոյականը կը ճաթըտի, իր վրայ լայն ճեղքեր կը սկսին երեւալ:

Այստեղ կը սկսի Փիրոնակէլեան զեղազիտական տրուելու մը առաջնակ: Պոլտովինոյի այս ծայրայն դժգոհութիւնը, պահանջկոտութիւնը ի՞նչն ալ արդեօք կառուցուած կեցումներ մը չէ՞, ներքին ջղայնութեան մը տրտայտութիւնը չէ՞ արդեօք: Պոլտովինո արտաքսուած մըն է աշխարհէն, վրէժ ունի լուծելիք զինք արաւազող աշխարհէն: Արհամարհանքին պիտի պատասխանէ արհամարհանքով, դիմակին դէմ դիմակ. ասոր համար ալ պիտի ծածկէ սէրը անո՛ր հանդէպ, որ իր կէնը ըրած է: Դերերը փոխուած են արդէն եւ կոմսը դարձած է մրցորդ մը. Պոլտովինո իր դիմակին տակ դժուարաւ կը պահէ իր նախանձի զգացումը:

Ինչպէ՞ս պատուելի դիմակները եւ հասնել ճշմարտութեան, երբ դիմակի մը վերացումը, ողորդութիւն մը կ'առաջացնէ արդէն:

Միւս կողմէ, պէտք չէ մտնալ նաեւ, թէ մարդիկ տեւարար կը փոփոխուին: Ինչպէս Փասքալ կ'ըսէ. «Ոչ ոք այնքան տարբեր չէ արիշտ մը, որքան նայն մարդը: Ինքն իրմէ, ժառանգակի ընթացքին»:

Այսօրուայ բոլոր իրականութիւնները վաղուայ պատրանքներն են: Կեանքը ամէն տարի այս դասը կու տայ ունեց, որոնք զիչ մը ժամանակ կը տրամադրեն մտածելու համար իրենց երէկուայ եւ այսօրուայ ճշմարտութեանց մասին:

Այս բոլորէն ետք կը մնայ նաեւ այն իրողութիւնը, որ մարդիկ իրար հասկնալ չեն կրնար, իրենց գործածած բառերուն իսկ պատճառով, հաղորդակցութիւնը անկարելի է, մտկերեսային է, կիսատ, ու տեւարար սխալի առաջնորդող:

«Մտահայտմանն Եղած է, - *կ'ըսէ Փրփրանտէլլո*, - քէ ինչպէս փոխադարձաբար իրար հասկնալ ուզելով հանդերձ, մարդիկ կը խարտին, բառերու դատարկ վերացանկանացման առաջացուցած անդարմանելի սխալին պատճառով»:

«Վեց Անճնաւորութիւններ» *Թատերակէն մէջ, Հայրը կ'ըսէ*.

ՀԱՅՐԸ.- Ամբողջ չարիքը ստիկ էր գայ: Բառերուն մէջ է: Ամէնքս մեր մէջ ունինք աշխարհ մը, եւ ամէն մէկուս համար տարբեր աշխարհ մըն է ան: Ինչպէ՞ս կրնանք իրար հասկնալ, պարո՞ք, եթէ իմ արտասանած բառերս իմաստ մը եւ արժէք մը ունին իմ մէջ գոյութիւն ունեցող տիեզերքին հետ համեմատած, մինչ զիս ունկնդրողները, անխուսափելիորէն, անոնց կու տան իմաստ մը եւ արժէք մը, համեմատելով իրենց մէջ կրած իրենց տիեզերքին հետ: Կը կարծենք զիրար հասկնալ, եւ երբեք չենք հասկընար:

*Երբ այս է իրականութիւնը, երբ ամէն մէկը ունի իր ճշմարտութիւնը, երբ կարելի չէ ամբողջովին յարաբերիլ իրարու հետ, հասկնալ, ու հասկցուիլ, ի՞նչ կը մնայ անդին մարդկային կեանքէն: Ի՞նչ կը դառնայ կեանքը, անհատը, անհատի կեանքը:*

*Կեանքը լարելութիւն մըն է, որուն մէջ ամէն մարդ դատապարտուած է թափառիլ: Անեւ մըն է, եւ ամէն ինչ կը նպաստէ ուելի անել դարձնելու զայն: Ընկերութիւնը, որ մեզի պիտակներ կը փակցնէ մեր ծնունդէն իսկ, եւ որոնցմէ ազատիլ չենք կրնար, առանց որոնց ազբիլ չենք կրնար (հանդուցեալ Մաթիաս Փասքալ): Դիմակները որ ընկերութեան պարագրանքին տակ մենք կը հաղնինք, եւ այլեւս հանել չենք կրնար: Տրամաբանութիւնը անոր, որ խենթ է, եւ խենթութիւնը անոր, որ ինքզինք տրամաբանական կը կարծէ... ու մթին ու ճակատագրական ուժերը, որոնք մարդուն չորս կողմը կը դառնան, կը խեղդեն զայն, առանց օգնութեան կարելիութեան...»*

«Հանրի Զորորդին» *մէջ, Հանրի Դ. կ'ըսէ*. «Ոչ ոք կ'ուզէ ընդունիլ մթին, ճակատագրական ուժի գոյութիւնը, որ կը սանձափակէ մեր կամքը: Եւ սակայն... քանի որ կը ծնինք, քանի որ կը մեռնինք... ծնիլ մոնսէնիտոր... միթէ՞ դուք պահանջած էք ծնիլ, ուզած էք ծնիլ... Ես՝ ո՛չ: Եւ այս երկու պատահումներուն միջեւ՝ ծնիլ, մեռնիլ... երկուսն ալ մեր կամքէն անկախ դեռ ինչքան բաներ կան որ մենք պիտի չցանկանայինք, եւ որոնց սկստայ կը համակերպինք...»:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

(Շար. 2)



### ԳՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՓ

#### 1.- ԵՐՐ ԾՆԱԾ ԷՐ ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ

Այո՛, ե՛րբ ծնած էր մեր մեծ երգի-  
ծարանը՝ Յակոբ Պարոնեան: Այս հար-  
ցումին պատասխանը, մինչև 1960 Դեկ-  
տեմբեր, մէկ շէր, երեք էր: Ձեռքի տակ  
ունիմ երեք տարբեր ազդերներ: Հա-  
մաձայն այս ազդերներուն, Պարոնեան  
ծնած էր, ծնած պէտք էր ըլլար

- ա.- 1843-ին:
- բ.- 1842-ին:
- գ.- 1840-ին:

Մեր առաջին ազդերն է Հրանտ Ա-  
սատուրի արժէքաւոր մէկ դործը՝ «Դի-  
մաստուէրներ», հրատարակուած՝ Պո-  
լիս, 1921-ին: Գրագէտի եւ բանասէրի  
խառնուրդ մըն է գրականութեան երբեմ-  
նի այս դասախօսը, յամենայնդէպս՝ բա-  
րեիկո՞՞՞ ճշտախօս մը, որ նախ կը քննէ,  
«մանր կը մտղէ», ապա միայն կը վճռէ:  
Ահա՛ էր վկայութիւնը Պարոնեանի ծը-  
նըդեան թուականի մասին:

«1843-ին ծնած, աւաւմը առած է  
Էտիրմէի հայոց վարժարանը, ուր կեցած  
է մինչև 1857. հոն կ'աշակերտէր Պօղոս  
վարժապետի, որ յետոյ պիտի կոչուէր  
Ներսէս վարժապետեան, եւ Ռուբէն  
վարժապետի, որ յետոյ պիտի կոչուէր  
Բարթողիմէոս Չամչեան» («Իմարստ-  
ւերներ», էջ՝ 171):

Ուրեմն, ըստ Հրանդ Ասատուրի,  
Պարոնեան ծնած էր 1843-ին, Խախիճ  
(Ատրիանուպոլիս):

Մեր երկրորդ ազդերն է Պարոնեա-

նի «Ընտիր Երկեր»ը, հրատարակուած՝  
Երեւան, 1954-ին: Գ. Ստեփանեան գը-  
րած է մեծ երգիծարանին ընդարձակ  
կենսագրութիւնը (էջ 5-36): Ահա՛ նաեւ  
իր վկայութիւնը:

«Յ. Պարոնեանը ծնուել է 1842 թը-  
ւականիմ, Թիւրքիայի Ատրիանուպոլիս  
քաղաքում: Նախնական կրթութիւնը ըս-  
տացել է ծննդավայրի Արշակունեան  
դպրոցում» («Ընտիր Երկեր», էջ՝ 5):

Այսպէս, համաձայն Գ. Ստեփանե-  
անի, «Ազգային ջոկեր»ու Հեղինակը  
ծնած էր 1842-ին, բայց ո՞ր ամսուն,  
ճշգրտած չէ այս պարագան:

Մեր երրորդ ազդերն է Հ. Եփրեմ  
Պօղոսեանի մէկ ուսումնասիրութիւնը՝  
«Յակոբ Պարոնեան իր ժամանակակից-  
ների դիտում» խորագրին տակ: Հայր  
Եփրեմ կը դրէ.

«Հայ երգիծարանութեան տիտանը –  
Յակոբ Պարոնեան – ծնած է Ատրիանու-  
պոլիս (Էտիրմէ) 1840-ին: ... Ուսումն  
ու կրթութիւնը ստացած է քաղիմ Ար-  
շակունեան վարժարանը, 1855-58»:

Ենթադրելով, որ շորս կամ Հինգ  
կորդ ունեցող նախակրթարան մըն էր  
Արշակունեանը, որեւէ աշակերտ 13-14  
տարեկանէն աւելի չէր կրնար ըլլալ այդ  
վարժարանին շրջանը աւարտած ատեն:  
Ըստ Հայր Եփրեմի՝ Պարոնեան 15 տա-  
րեկանին սկսած էր յաճախել իր թաղին  
վարժարանը եւ շրջանաւարտ եղած էր  
18 տարեկանին, ինչ որ ո՛չ ճիշդ է ան-  
շուշտ, ո՛չ ալ տրամաբանական է: Ուս-  
տի՛ կրնանք վստահօրէն ըսել, թէ սխալ

է Հայր Եփրեմի նշանակած տարեթիւը՝ 1840, իբրև Պարոնեանի ծննդեան թը-  
ւական:

Ճշգրտ. ե՞րբ ծնած էր ուրեմն մեր  
անդուզական երգիծարանը, 1843-ի՞ն,  
1842-ի՞ն, թէ 1840-ի՞ն:

Կարօ Գեորգեանի 1961-ի «Ամէնուն  
Տարեգիրքը»-ին մէջ տրուած է մեզ հե-  
տաքրքրող այս հարցումին պատասխա-  
նը: Պարոնեանի քրոտղին՝ Մաքսուտ  
Մանտալճեան 1891 Յուլիո-Դեկտեմբեր  
ամիսներուն Հրանդ Ասատուրի ուղղած  
է եօթը երկար նամակներ, մանրամասն  
տեղեկութիւններ տալով դժբախտ երգի-  
ծարանի կեանքին, մասնաւորաբար անոր  
ծննդեան թուականի մասին (նամակները  
կը մնան ի պահ՝ Փարիզի Նուպարեան  
մասնադարանին մէջ):

Իր երրորդ նամակով, Մանտալճեան  
կը գրէ 1891 Սեպտեմբեր 28-ին:

«Անձամբ գացի քննելու մեր եկե-  
ղեցոյ մարդահամարի տամարը. Պարոնե-  
ան ծննալ արձանագրուած է եան 1843  
Դեկտեմբեր 2-ին: Բայց որովհետև այս  
արձանագրութիւնք ժամանակաւ երկիս-  
յին մկրտութեան օրը կը կատարուէին,  
յայտնի է որ Պարոնեան ծնած է Նոյնեմ-  
բերի սէշ»:

Ըստ երևոյթի՛ն՝ Հրանդ Ասատուր  
չէ գոհացած այսքանով եւ ուզած է բուն  
խնդ արձանագրութիւնը: Մ. Մանտալ-  
ճեան 1891 Նոյեմբեր 3-15-ին կը գրէ  
զարմեալ իր չորրորդ նամակով.

«Մեր եկեղեցին կը կրէ «Ս. Թորոս»  
անունը: Պարոնեանի մկրտութիւնը ար-  
ձանագրուած է հետեւեալ կերպով.

«Պպիկ. աղայի որդի Յեննէս. ազա-  
յի որդի Յակոբ, որ՝ կնէհչր. Եսայի  
Զօրպանոյ որդի Յակոբ, 1843 Դեկտեմ-  
բ. 2»:

Այս վկայութիւնը, աւելի ճիշդ՝ «ե-  
կեղեցոյ մարդահամարի տամար»ին ար-  
ձանագրութիւնը վերջապէս կը հաստա-  
տէ, թէ Յակոբ Պարոնեան ծնած էր 1843  
Նոյեմբերին: Սխալ է ուրեմն Գ. Մտե-  
փանեանի տուած տարեթիւը՝ 1842, սը-

խալ է մանաւանդ Հայր Եփրեմ Պօղոս-  
եանի նշանակած թուականը՝ 1840:

Այսպէս ուրեմն՝ «Ազգային Ընդհարու-  
անմոռանալի Հեղինակը ապրած է ընդա-  
մէնը 48 տարի, ո՛չ իսկ լրիւ 48, այլ մի-  
այն 47 տարի եւ վեց ամիս: Մեւսած է  
թոքախտէ, 1891 Մայիս 26-27-ի գիշե-  
րը: Օրթագիւղի իր տնակին մէջ, եւ  
թաղուած է նոյն արուարձանի հայրց  
զերեզմանոտան մէկ անկիւնը, 1891 Մա-  
յիս 28-ին: Աւելցնենք, որ Պարոնեանի  
մահէն օր մը առաջ, Օրթագիւղի մէջ  
մեռած էր նաեւ իր կնոջ մայրը, նոյնպէս  
թոքախտէ: Մանտալճեանի կարծեքով՝  
ան վաբարկած էր տարաբախտ երգիծա-  
րանը:

Եփրեմ մը շունեցաւ Պարոնեան իր  
վերջին կայանին մէջ, բայց արձան մը  
եւ իր անունով փողոց մը ունի հիմա Ե-  
րեւանի մէջ:

2.- Ռ՝ԻՐ ԾՆՆՄ ԷՐ  
ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

1954-ի վերջերք, Երևանի մէջ լոյս  
տեսաւ, 15,000 տպաքանակով եւ 617 մե-  
ծադիր էջերով, Եղիշէ Զարենցի «Ընտիր  
Երկերք», խմբադասական «կոլեկտիւ» մը  
հսկողութեան տակ:

Հատորին սկիզբը զետեղուած է «կո-  
լեկտիւ»ի անդամներէն էդ. Թոփեանի  
եւ Հ. Մալախեանի ուսումնասիրութիւ-  
նը՝ «Եղիշէ Զարենցի Պսէգիան» խորա-  
գրին տակ:

Թոփեան եւ Մալախեան կը գրեն.  
«Եղիշէ Զարենցը (Եղիշէ Արգայի Ազգ-  
մոնեան) ծնունդ է 1897 թ. Կարս քաղա-  
քում: Բանաստեղծի հայրը գորգավա-  
ճատ, խիստ բնասութեամբ տէր մի  
մարդ էր: Ապագայ բանաստեղծի ման-  
կական ու պատանեկան տարիներն ան-  
ցան Կարսում» (էջ 4):

Այսպէս, ըստ «կոլեկտիւ»ի անդամ-  
ներուն, «Եղիշէ Զարենցը ծնունդ է Կարս  
քաղաքում»: Ճի՛շդ է ասիկա:

Զարենցը էնք, իր «Զարենցեան»  
պոեմին մէջ, կը գրէ.

«Ես եկել եմ Երևան՝ Իրանից: Հայրենիքս է - Խանի Մակուն: Իմ հոգում - արե՛մ Իրանի, Իրանի արեւն է իմ հոգում»:

Պարզ ու յստակ: Բանաստեղծը իր այս քառյակին մէջ կը հաստատէ, թէ իր հայրենիքն է «Յանի Մակուն», թէ «ծնունդ է» ուրեմն ո՛չ թէ «կարս քաղաքում», այլ Հեռո՛ւ Իրանի մէջ, «Մակու քաղաքում»:

Ի՞նչ մը աւելի վարը, իր նոյն պոեմին մէջ, Չարենց կը կրկնէ, կարծես նախազարգ, որ օր մը կրնայ շփոթուիլն ստեղծուել իր ծննդավայրի մասին.

«Ծն ծնունդ եմ Մակու քաղաքում,  
Արեւի տակ ոսկեղէն, հասուն,  
Շագ շնչի տակ Օրմուզդի քեր -  
1897 թուին»:

Բայց ահա՛, եղբարախա քերթողին իսկ կողմէ, երբորդ հաստատում մը, որ կը ծառայէ աւելի լոյս սփռելու մեզ հետաքրքրող խնդրին վրայ.

«Ես անգոյն կարսում մեծացայ՝  
Հայրենիքս Երևան քաղաք»:

Ուրեմն՝ կարտի մէջ մեծցած է, բայց ծնած է Մակուի մէջ: Դեռ մանուկ, թերեւս մէկ կամ երկու տարեկան, ծընողքին հետ փոխադրուած է անգոյն կարս» քաղաքը, ուր եւ անցուցած է իր մանկութիւնն ու պատանեկութիւնը:

Չարենց անշուշտ շատ լաւ գիտէր, - գոնէ մեզմէ աղէկ գիտէր, - թէ ո՛ւր ծնած էր ինք, «Մակու քաղաքում» թէ «անգոյն կարսում»: Այսքան բան մը պէտք է գիտնային նաեւ իր կենսագիրները: Մակայն ինչո՞ւ չեն յիշատակած նոյնինքն բանաստեղծին վկայութիւնը իր ծննդավայրի մասին, զէթ իբրեւ

պարզ սեղեկութիւն: Մածկելիք բո՞ն մը կար...

Չոյզ կենսագիրները կը գրեն.

«Եղիշ Չարենցի վաղամամ մտեր 1937 թ. Նոյեմբերին մեծ կարուստ էր ամբողջ ոռլիտական գրականութեան համար, որի ակտիւ գործիչներից մէկն էր ակամուտը հայ բանաստեղծը»:

Բացառութեան կարօտ կէտ մըն այլ այս է. «1937 Նոյեմբերին»: Նոյեմբեր քանի՞ին, ո՛ւր, ի՞նչ պայմաններու մէջ...

Արդարեւ, ո՛չ մէկ յիշատակութիւն այն մասին, թէ անկանաւոր Հայ բանաստեղծը ո՛ւր մեռաւ, ինչէ՞ն մեռաւ, ճշգիւ ո՞ր ամուսն եւ ամսի քանի՞ին: Ատենին՝ արտասահմանի մէջ լուր ստացուած էր, թէ Չարենց բանտին մէջ մեռած էր 1937 Դեկտեմբերին, հաւանաբար Դեկտեմբեր 23-ին կամ 24-ին: Չոյզ կենսագիրները կ'ըսեն սակայն՝ «1937 թ. Նոյեմբերին»:

Մենք հնարաւորութիւն չունինք ըստուզելու ամիսը եւ օրը, բայց անշուշտ արձանագրութիւն մը պահուած է բանտի տոմարներուն մէջ: Կենսագիրները իրենք այլ հնարաւորութիւն չունէին այս կէտը ճշգրտել:

Չարենցի գյարութիւնն էր, այլ-եւս պէտք չկար ծածկելու, թէ անկանաւոր Հայ բանաստեղծը մեռած է բանտին մէջ, իբրեւ Հետեւանք ամի կողմիտ սխալի, ինչպէս սովորաբար կ'ըսեն Երևանի մէջ, նման պարագաներու:

Կենսագիրները ըսած չեն նաեւ, թէ տարբարախա բանաստեղծը զերեկման ունի, եւ ո՛ւր է իր գերեզմանը:

Օր մը անշուշտ այս եւ նման հարցումներու պատասխանը կու տան արագայ կենսագիրները:

Բ. ԹԱՇԵԱՆ

# ԼՂՎԱՐՆԵՐ

ԷԼԻ ՀՈՂ...

Երկրորդ աշխարհամարտէն ետք մանուանդ, գիտութիւնը հարիւրապատկեց իր դիւտերը եւ գրեթէ յեղաշրջեց տիեզերքը, տիեզերքի մասին ունեցած մարդուն նախկին բժշկականները: Աթոմ, հրթիռ, լուսին, սադուր: Հերոսները հիմա երկրի վրայ չեն, երկնքի մէջ են, տեսանելի միջոցներէն վեր, աստղերուն մօտ, լուսնին վրայ: Աշխարհը բանաստեղծի մը աչքերով չի նայիր հիմա վեր, կը նայի գիտութեան ընծայած շոյլ միջոցներով, լոյսով:

Բայց մարդը որքան ալ գիտական նուաճումներ ընէ ու սլանայ վեր՝ չէր մնում է մարդ, ինչպէս կ'ըսէր եղբարքաթա Չարենց: Հողէ կազմուած է մարդը եւ իր կազմուածքը թոյլ չի տար իրեն երկար ատեն հողէն հեռու ըլլալ ու մոռնալ հողանիւթ իր շինուածքին եռուզեռը, կարօտները, սէրերը:

Ասոր համար է Հաւանաբար, որ բանաստեղծները նոր մարդուն հետ, գիտութեան վերջին միջոցներով զինուած մարդուն հետ հեղ մը դէպի երկինք սաւաննէէ ետք՝ մէկ մէկ երկինքներէն վար կու գան եւ յուզիչ կարօտով մը կը կառչին երկրային բաներուն՝ փոքրիկ սենեակի մը, լուսամտուի մը, հողաւերտի մը: Օրինակ, Ս. Կապուտիկեան կը Հաւատայ, թէ մարդը լուսնին կը Հասնի, Մարտին կը Հասնի, բայց

Բայց նարից, նարից նրա սրտի մէջ  
Կը փռուի սիրայ կարօտն այս անբիծ,  
Ու ոլորտներում այս արեւամերձ  
Մեր բարի, մեր հի՛ն այս մոլորակից  
Փոփրիկ մի սենեակ, մի վառ լուսամուտ  
Նրա աչքի դէմ կ'երևա՛յ անշէջ:

Նոր նուաճումներու առընթեր Հին սրբութիւնները վերաթելորելու հակումը տեսանելի է յոյնպէս աւելի երիտասարդ բանաստեղծներու մօտ: Ահա Թագմիկ Տօնեանի Հաւատամքը.

Հող, քեզ սիրում է մարդն եագարանայ,  
Որքան էլ որ նա տիրի, բարձրանայ  
Նոր մի վայր գնայ,  
Քեզ երկրորդ դարձնի,  
Նորից էլի նազ սլտի ստեղծի:

Մենք կը յիշենք նոյն հաստատումը ուրիշ երիտասարդ բանաստեղծի մը՝ Արամայիս Սահակեանի մօտ եւս.

Տիեզերք տանող նամբէք են բացուել...  
Ու ես չզիտեմ՝ ինչու, իմ երկիր,  
Դու աւելի ես հարազատ դարձել...

Քննող է այս վերադարձը: Եւ թերեւս ալ մեծ արժանիք մը չէ: Իր հողին հետ անկեղծ ըլլալու առաջինութեամբ օժտուած անձը տարբեր դրսեւորում մը պիտի չունենար: Վերջին Հաշուով նորը Հինին բացարձակ յիշումը չէ: Նորը Հինին վրայ զուսմարուած յաւելում մըն է ու նորին անուսով միայն երգում ընող նորամոյները աւելի բան մը չեն արժեք, քան Հինին միայն կառչած համոյները:

### ՆՈՅՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Հայաստանի գրականութեան մէջ, վերջին տասնամեակին գրուող երկրաստորդ արձակագիրներէն անմիջապէս առաջ, յայտնուեցան մի քանի գրապէտներ, որոնցմէ մէկը, ամէնէն ուժեղ գէմքերէն մէկը, անկասկած Թափաշէլ Արամեանն է: Կը բաւէ միայն կարգաւ իր «Զթամբած ձիեր» անուն դործը ու արդէն ձեր մաքին մէջ կը գրոշմուի ինքնատիպ գէմքի մը անջնջելի գիծերը: Առանձնապէս ուշագրաւ են Արամեանի յիշեալ դործին բովանդակած համանուն պատմութեանը, «Անտառի տնակը» եւ «Նրանք իմ սրդիներն են» կտորը:

Թափաշէլ Արամեան ուշագրաւ է նոյնպէս իր բնւ. մտաւորական: «Իտալութեան հեղինակ» է, պիտի ըսէին իրենք: Միշտ գրականութեան մասին է խօսքը, ու իր գրչով արտայայտուած տեսակէտները, իրենց պատկերներով ու պարզութեամբ գինաթափող հանգամանք մը ունին:

Գրականութեան իրաւ սպրումն ու ըմբռնումը ունեցող միևս գէմքերուն պէս՝ Արամեան ինք եւս արտայայտուեցաւ նոր կեցուածքներու մասին ու գիտութեան ու մեքենաներու թռուտումով երդում ընող վատաւերածներու գէմ՝ ինք միշտ արծարծեց Վարդան մարդ պահելու խնդիրը: Մենք բնաւ պիտի չմոռնանք Հայաստանի պրոզաներու հինգերորդ համալուարի նախորեակին գրած «Երազը արարիչ է» խորագրեալ իր մէկ յոդուածը, ուր խորանալու, համեմատելու, պայծառակերպելու անհերքելի կարողութիւններով օժտուած այս գրագէտը վերլուծման կ'ենթարկէր մեր դարը, դարուն արագութիւնը, մեքենաները, հրթիռները, ասոնց ազդեցութիւններն ու ստեղծած շփոթը մարդոց մէջ, ու կը յանգէր պայծառ կարկաջութիւններու:

«Մի՞թէ արագացման հետ մեր սիրտը փոխել է իր գարկերի թիւը», պիտի հարց տար տեղ մը, ու նոյն գրութեան մէջ պիտի ըսէր նոյն պարզութեամբ ու նոյնքան դեղեցիկ հետեւեալ հաստատումը.


«Ավտամեքենաների գոյութիւնը ձիերին ոչնչացնելու իրաւամբ չի տալիս»:

Նորը հինին վրայ դումարուած յաւելումն է, կ'ըսէինք թէ առաջ, հինին ժխտումը չէ: Մեզի կը թուի, թէ այդ երկուքը իր էջերուն մէջ հաշտեցնող մարդը աւելի բախա ունի գրականութեան մէջ, քան մէկուն կամ միւսին բացարձակ կուտակիցը, որ մէկ պարագային պարզուած անձն է եւ միւս պարագային զարմացնելով ինքզինք օրորող դժբախտը:

Նորի եւ հինի այս հարցին մէկ տարբերակն է, կամ անոր յար եւ նման ուրիշ ինդիք մըն է գրականութեան ազգային յատկանիշներուն եւ միջազգային յատկանիշներուն փոխ-յարաբերութեանց կասկած վէճը, որուն մասին Արամեան զարմեալ արձանագրած է իր համոզումը.

«Էլաւին քոչոզ կրթիւններն անգամ ազգային եւ պետական պատկանելիութիւն ունեն, եւ ամէն ազգային գաղափար համամարդկային դառնալու հինց առաջին պահից ազգայնացում է»:

Կ'ուզէինք աւելցնել, որ այս թերթին մէջ մենք ուրիշ առիթներ ունեցած ենք արծարծուած վերի հարցերուն անդրադառնալու եւ տարբեր կարկաջութիւններու չինք յանգած...



**ՎԱՀԱԳՆ ԳԱԻԹԵԱՆ**

Մենք ընդհատեցինք նշմարները և արտագրեցինք Գալթեանի բանաստեղծութեան հետագայ հատուածը, որպէսզի ցմբուտփուննեքով եւ սխալք նախանշաններու սեւագրութիւններով շտապկացանք ընթերցողը, քիչ մը շունչ տանք ընթերցողին:

«Մովեսական Գրականութիւն» ամսաթերթի իններորդ քիւիճն ստանդերկու էջերը գրաւող ընդարձակ քերթուած մըն է «Ո՛ սայր ինձ»ը, որ կը կրէ հայ բանաստեղծութեան յաւաքայն աւանդները յատկաւ իւրացուցած յա բանաստեղծիմ շնչու կմիքը: Հայաստանի գրականութեան մէջ՝ վսեպմ Գալթեան քերտու սաայիմն է, որ առակազայն գուրգուրանով ու սքրալքեանք կը մտնեայ արուեստին, արուեստը ստիկ վսեպ գաքրերում՝ յեգիմ, սեիմ, հմարքիմ, երաշագործ միւս գորութիւններում՝ մարզում մարդկայիմ խոր արժանիքներում ու երազաւ հայրեանսրութեան, ինչպէս ցայց կու տայ ծըտամի ծախիմ ճգագութիւնը կախարչորէն քանճրացնող այս քերթուածը:

Իք վաստակիմ վրայ մմէն օր մար յանելու մը արձանագրելով կ'ընթանայ վսեպմ Գալթեան և վստանարար պիտի սրղալացնէ իրն կազուած մեծ բանաստեղծի մեծ յայտքը:

— Արձակեցէք շղթաները Արտարայի եւ հետացէք բարբոզ մէկ...  
Կլէոպատրան քայլ է անում

գորգի վրայ  
Ասեւ սահանք է կարապի,  
Կլէոպատրան խօսք է խօսում

տաք շուրթերով՝  
Եւ հնչում է ասեւ տաւիղ մի բաղմալար:

— Հայոց արքայ, Հպարտ արքայ,  
Ուղերիս տակ արքաներ եմ տեսել  
ես շատ  
Եւ ծարաւի եմ այրական Հպարտութեան,  
Քո այրական Հպարտութեամբ  
Արտիչ ուզածը պահանջեցիր:

— Կլէոպատրա, գեղեցկութիւնդ  
մարմնուտ  
Բաղմապատկիր քո հօգելօր  
գեղեցկութեամբ  
Եւ տուր ինձ ծո՛ւխն իմ ծխանի...  
Ու թագուհին սիզաց յանկարծ  
Եւ պատից պատ քայլեց ընդոսս,  
Ալիքուեցին քողերը նուրբ  
Ու ծփացին պիտերն ի վար:  
Յետոյ կանգնեց ջահերի տակ,  
Սօսեց, ասաց:

— Ով Արտարայ, նայիր դու ինձ:  
Նայեց Հայոց արքան արձանացած,  
Եւ թագուհու քողերն ալիք-ալիք  
Մածանուելով ընկան ու կիսամեռ  
Կանգնեց այնտեղ կիներ...  
Հրաշալի՛,

Հրաշալի, ինչպէս կիներ միայն:  
Հրաշալի կորերն իր կոներէրէ

Գալտր մէջըն հասած, իրար դալիս  
 Եւ ճօճում են մի պիբի, բարակ իրան,  
 Եւ կրծկալները ձիգ ու հուրհրան  
 Ասես պոսթիկան պիտի լոյս ու բոցով...  
 Եւ ողորկ են ուսերն ու վիզը ճօճ,  
 Շրթունքները խոնաւ են ու դողդոջ,  
 Եւ ոտնզերին դող կայ ու թրթում...  
 - Հայոց արքայ, Հայարա արքայ,  
 Քո այրական Հայարտութեամբ  
 Արտիդ ուզածը պահանջիր:

- Կլէոպատրա, գեղեցկութիւնդ  
 մարմնաւոր  
 Բարմապատկիր քո հոգեւոր  
 գեղեցկութեամբ  
 Եւ տուր ինձ ծո՛ւխը իմ ծխանի...  
 - Հայոց արքայ, Հայարա արքայ,  
 Ինչոր երգ է դալիս դրսից,  
 Մի պահ ականջ արա երգին...  
 Եւ գիշերուայ լուսթեան մէջ  
 Նրզն էր հնչում Նեղոսն ի վար...  
 - Կլէոպատրա թաղուհու դուռ,  
 Թէ մի գիշեր բացուես իմ դէմ,  
 Ես քեզ համար զո՛հ կը բերեմ  
 Հարիւր Հազար ամենի ցուլ...  
 Իսկ թաղուհու մի գիշերուան  
 Միայն մի զո՛հ ես կը բերեմ.  
 Պարանոցս կը տամ դահճին...

Կլէոպատրան կանգնեց կրկին  
 ջահերի տակ,  
 Քօսեց, ասաց.  
 - Ով Արտարազ, կրկին տեղամ նայիր  
 դու ինձ...  
 Նայեց Հայոց արքան արձանացած,  
 Եւ թաղուհու կրծկալը հուրհրան  
 Հուրհրալով պոկուեց, ու դողացին  
 Իր ստինքները զոյգ... Ու դողացին,  
 Ինչպէս ստինքներն են միայն դողում:  
 Կանգնած էր կինը մերկ,  
 Հրաշալի՛,  
 Հրաշալի, ինչպէս կինը միայն,  
 Եւ բաղձալի, ինչպէս կինը միայն,  
 Կանգնած էր կինը մերկ,  
 Կանգնած խոնարհ...  
 Կինը՝ արեան մբբիկ,

Կինը՝ արեան մոլուցք,  
 Կինը՝ արեան տենչանք  
 Ու հիացում:  
 Եւ թաղուհին խօսեց կրկին,  
 Եւ դողդոջ էր ձայնը նրա  
 Ինչպէս ձգուած լարի թրթում...  
 - Հայոց արքայ, Հայարա արքայ,  
 Քո այրական Հայարտութեամբ  
 Արտիդ ուզածը պահանջիր...  
 - Տուր ինձ ծո՛ւխը իմ ծխանի...  
 Կլէոպատրան վրան նետեց  
 Իր քօղեքը ալեծածան,  
 Եւ ցատում կար աչքերին մէջ,  
 Եւ ճակատին կնճիւր կար մութ,  
 Եւ վճիռ կտր դուստա շուրթին:  
 Կլէոպատրան կանգնեց Հայարտ,  
 անմատչելի,  
 Կանչեց՝  
 - Գահճ...  
 Քայլեց Հայոց արքան  
 գէպի կառափնարան  
 Ու գլուխը դրեց կոճղին արիւնաներկ,  
 Եւ կապոյտի, լոյսի, արջալոյսի մէջ պաղ  
 Կարծես յանկարծ հնչեց զարժանալի  
 մի երգ...  
 Ո՛ տայր, օ, ո՛ տայր ինձ ծխանիս  
 ծուխը սուրբ,  
 Ո՛ տայր առուօտը նաւասարդեան,  
 Եղնիկների վարզը Հայոց լեռներն ի վեր,  
 Եւ եղջերուաց վարզը ձորերն ի վար,  
 Ո՛ տայր, օ, ո՛ տայր ինձ...  
 Ո՛ տայր Արտաշատի ոսկեփռչի համբան,  
 Հնձանների բուրմունքն ու փշատի  
 փռչին,  
 Ո՛ տայր թոնիրների բուրմունքը սուրբ,  
 Ո՛ տայր, օ, ո՛ տայր ինձ...  
 Տխուր զնգում էին բամբիրները սակէ,  
 Կապոյտ ծուխն էր ծփում ու ծաւալում  
 անծայր,  
 Եւ ծխի մէջ՝ ճերմակ Արարատն էր  
 ցուլում,  
 Եւ խլչո՛ւմ էր, խլչո՛ւմ Արտաշատի  
 բարգէին...

### ԹԱԳԱՒՈՐԸ ՄԵՐԿ Է...

«Ճիկար» թերթին գրական բաժնի թղթակիցներէն մէկը, իր առաջին վէպը ստորագրած վիպասանուհիի մը՝ Քլէր Էլերեյիի հետ տեսակցութիւն մը ունեցաւ եւ կոտորելով վիպասանուհիին բացակայ կեանքին համար ապրած բուռն տապալակը, հետեւեալ տողերով կը շնորհակցի թերթին:

«Ճշմարիտ կեանքը բացակայ է», կը գրէր Բէմպօ: Ճիշդ ատոր ետեւէն է, որ բանաստեղծներ կան ու վիպասաններ»:

Ճրանասցի թղթակիցին այս մեկնարանութիւնը մեզի յիշեցուց Հայաստանի գրեթէ անծանօթ բանաստեղծներէն մէկուն՝ Հուրի Սահակեանի մէկ տողը, որ համարեալ նոյն միտքը կը բովանդակէ.

Քանի դեռ աշխարհում պոետներ եմ ծնում,  
Ուրեմն աշխարհում մի բան պակաս է:

Ի Հարկէ: Բանաստեղծներն ու վիպասանները կը ծնին յաւելում մը կատարելու համար, զոչացուած պակաս մը ամբողջացնելու համար: Կը նշանակէ, թէ գրականութիւնը անպատակ չէ: Առաջելութիւն մը ունի գրականութիւնը, ու իր սրբազնասուրբ նպատակներէն մէկը մարդուն ներքին քառսին վրայ ճրագ մը վառելու ճիգն է, «բացակայ» կեանքին փնտռուէրը ընելու եւ դրացուած «պակասը» ամբողջացնելու առաջնական երկունքը:

Մարդուն ներքին քառս այս ուժմնութեամբ չէր պեղուած երէկ, ու երէկ աւելի զգալի էր «բացական», պակասը զգալի էր աւելի: Բանաստեղծներն ու վիպասանները, անշուշտ անոնք՝ որոնք «ծնուած են», ջահերուն թիւը աւելցնելու ջանքին հաւատարիմ՝ կը շարունակեն իրենց պեղումները, իսկ ուրիշներ...

Ուրիշներ կ'աշխատին դարկ տալ քառսին: Անկապ ու անպատասխանատու կուտակումներու կողմնակից այս անորոշ խառնուածքներուն նմանակները, ինչպէս անգամ մը յիշեցինք, սկսած են գրուիլ ցցել նաեւ Հայաստանի մէջ, եւ, կը թուի, թէ ազմուկով եւ երեւութական գոհունակութիւններով ընդոծին տկարութիւններ գարմանելու ռազմավարութիւնները հոն եւս յաջողած են նպատաւոր լուծութիւններ ստեղծել...

Երեւոյ տարօրինակութիւններով հրապարակ եկած մեր «յառաջապահներ» մեծագոյն յաջողութիւնը, պէտք է խոստովանիլ, կարգ մը շրջանակներուն ու անձերուն մօտ ստեղծած այս լուծութիւնն է, իրենց դիպած անկարելի խառնիճաղանձին ապշահար նայող մարդոց պարզած պատկերը:

Երեւոյ թիւն անդրադառնալով, Հայաստանի ամէնէն ուժեղ քննադատներէն մէկը, Հրանտ Թադրազեան, այս տարուան սկիզբը կը գրէր.

«Ես պիտէ ե այս առիթով ասեմ, որ յուրջ մարդկանցից ոմամք մի տեսակ վախեցում եմ ստորինակութիւններից. չլինի՞ թէ նրանցում կան շատ արժանիքներ, որոմք մեմք չեմք նկատում: Իսկապէս, իրենց վիճակ: Հարկ կայ քերտու նրանց ասելու. մի վախեցե՛ք, ընկերներ, բանաստեղծութիւնը մնում է բանաստեղծութիւն, իսկ քաղաւորը մերկ է, ամբողջովիմ մերկ»:

Այդ է: Պարզապէ՛ս: Պարզապէ՛ս թաղաւորը մերկ է:





ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿՆԻՆ ԾԱՂԿԱՄԱՆԸ

Սիրող Ժանգակագործ՝ Մանակ՝ Սանտիանոս ստեղծած է միջնադարեան մամբանկարները յիշեցնող երեսուն հարթափունդակներով զարդարած պլանդել ծաղկաման մը:

Սանակ Մանակեան, որ 36 տարեկան է, աքզին անի շատ ճշ գործեր, արճճ Հռոմի աւ Սամ Փրոմէիակայի միջազգային ցուցմանդէմնրում մէջ ներկայացուած են: Անոր կտու Ժանգակները ողջմշտած են Յակոբ Պարանեանի, Յովհ. Թաւանանի աւ ուրի հայ գրասկաններու գործերէն եւ լայնօրէն ծանօթ են: Իր «Փրկիչ Մշակոյթը» կոչուած գործը՝ ուկի մետալի արժանացած է Հայաստանի երիտասարդութեան ցումախմբութեան մէջ: Մանակեանի արձանկները ուղարկուած են Մանքրէտի Միջազգային Յուշանմանքի» որպէս յաւանուէր:

ՏԱՂԱՆԴԱՌՈՐ ԶՈՒԹԱԿԱԼԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԳՈՂՆԵԱՆ

Լ Լուս Անճեղքի Ֆիլհարմոնիկ Նուագախումբը, ձեռն շրջապատուած էր ձեռնարկելով՝ վերջերս աչքիւն է Գրիգորէն, Լիւքսեմպուրկ, Վիեննա, Պերլին, Փարիզ, Միլան, Պիլիբատ, Պուլքէշ, Թարսքա, Կիպրոս եւ Թեհրան, ուր շերտ ընդունելութեան արժանացած եւ վայելուն նուագահանդէսներ տուած է: Նուագախումբը պիտի այցելէ նաեւ Հնդկաստան, Հոնկ-Գոնկ եւ ընտրուած:

Լուս Անճեղքի Ֆիլհարմոնիկ Նուագախումբը կը բաղկանայ 110 հոգիէ: Նուագախումբին տաղիկն ընթացողը (ընտելիք մասը) լիբանանահայ տաղանդաւոր ընթացողը Վարուժան Գողնեանն է:

Վարուժան Գողնեան Լուս Անճեղքի մէջ կուրճած է լարային դորնիֆերու նուագախումբ մը, որուն ղեկավարութիւնը ինք ստանձնած է: Նուագախումբը, որ կը բաղկանայ 18 հոգիէ,

մէջ գտնի ամբողջ նուագահանդէսներ պիտի տայ Գալիֆորնիայ մէջ:

ՏԻԿԻՆ ԱԼԻՍԻԱ ԹԵՐԱԿԱՆ

Արժանքիմանայ ծածօք երաժշտագէտ եւ երգեսան տիկին Ալիսիա Թերգեան, վերջերս Յուկոնյաւիայ մէջ առնուկցած է երաժշտագէտներու Միջազգային Համաժողովին: Տիկին Թերգեան անգամ ընտրուած է երաժշտագէտներու Միջազգային Բնկերակցութեան Խորհուրդին:

Համաժողովի աշխատանքներու տարաուճէն ետք, տիկին Թերգեան դասախօսութիւններ կարգացած է Փարիզ (Ֆրանսերէն), Հռոմ (իտալերէն) եւ Լիպյան (սլովաներէն): Լիպյանի մէջ կարողացած է երկու դասախօսութիւն՝ ներկայացնելով արժանքիման հրաժշտութիւնը եւ հայկական էնդիսկան հրգեցողութիւնը: Տիկին Թերգեան այցելած է նաեւ Մառիտ, ուր երկու անգամ եղած ներքին շարք իտեան է ճայնապիտէն, իրաւունքիւր անգամ իտալով նրբէ Էստրա ժամ (45 վայրկեան): Բայց դասախօսութեանց ներկայ ցումուած են մեծ թիւով ունկըմդիրներ, ինչպէս նաեւ անուանի երաժշտագէտներ, քննադատներ եւ մամուլի ներկայացուցիչներ: Իր դասախօսութիւնները բացառիկ յարգութիւն արձանագրուած եւ մամուլի զերմ գնահատանքին արժանացած են:

Իր այցելած բայց երկիրներում մէջ՝ տիկին Թերգեան ընդունուած է արժանքիման ցնապանասուններու ներկայացուցիչներու շարքէ: Գնագնահատները կարգակերպած են մամուլ յատուկ ձաւիտներ:

Ա. ՏԵՐ ԵԱՐՈՒԹԻՆԵԱՆԻ ՅԱՒՏԱԼԱՆԻԿՍԸ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Հայաստանի սիրող (ամաթէոր) արուեստագէտներէն Ալտա Տէր Թարսքեանի կողմէ

պատրաստուած ասանցուքը զործեք վերջերս  
ցուցադրուած են Թիֆլիսի մէջ:

Արուեստագէտին զործեքը կը բազմանան  
անօթներէ, ծաղկանօթներէ, ժողովածաններէ,  
փայտէ կամ մետաղեայ սպասներէ, բոլորն ալ  
զարդարուած հայկական մոթիֆներով:

Ասպարէզով ճարտարագէտ Ա. Տէր Յարու-  
թիւնեանի ստեղծարարութիւնները ցուցադրուած  
են Վրաստանի եւ Հայաստանի Թանգարաննե-  
րուն մէջ:

Շարլ Աղեաւուրի Երեւան այցելութեան լըր-  
ջանին, Տէր Յարութիւնեան Հայազգի երգիչը  
ներկայացուցած էր գեղեցիկ ծխամորեկ մը  
չըտյա:

ԳՈՒՆՈՒԿ ԳԱՋԱՐՈՍԵԱՆ

Հոկտեմբեր 29-ին Փարիզի Քոշէն հիւան-  
դանոցին մէջ իր մանկանոցում կնքուած է յայտնի  
երաժշտագէտ, երգանիւն եւ զարմակետր Գո-  
հարիկ Ղազարսեան: Ծնած էր Պոլիս: Մօտաւո-  
րագէտ 57 տարեկան էր: Նւազգի սկսած էր  
շուտ փոքր տարիէն: Իր ուսուցիչները եղած  
էին՝ հունգարացի աշխարհաշայկ գաղնակա-  
ետր Լիթի աշակերտներէն փրոֆեսոր Հեյկե-  
նի աւա երաժշտագէտ Լայպովիչ, իսկ արմնիկի  
ուսուցիչը եղած էր հայ ծանօթ երաժշտագէտ  
փրոֆեսոր Կոկար Մամառ:

Տասներօրը տարեկանիմ անցած էր Փարիզ  
եւ հետեւած ֆոնսիլվարտարին, ուսուցիչ ու-  
նեմալով այդ շրջանի ֆրանսացի ամէնէն անուա-  
նի եւ հեղինակաւոր երաժշտագէտները:

Հեղինակած էր երկու բանաստեղծութիւն,  
մէկ սո-  
նետ, (խառնար ափսոս) յարաւոր գործիքնե-  
րու հետեւ, մէկ ժուռնալէր, 24 էքսիտ եւ զաշ-  
նատարումներ, որոնցմէ վերջինները երատա-  
րակուած էին այս տարի, Փարիզի Շուտնա Ե-  
րաժշտական Հրատարակչական Տան կազմէ:

Հրատարակած էր մասն կամուսա Վարդա-  
պետի անտիպներէն ժողովրդական երգեր,  
1850-ին, Անթիլիասի Կաթողիկոսարանի տղա-  
բանէն եւ աշուղական երգեր՝ Փարիզի Տիրամ  
Տան կազմէ: Հրատարակելի ունէր՝ 30 ճեար-  
կան երգեր, ներշնչուած՝ մեր մեծ բանաստեղծ-  
ներու լատգոյն գործերէն: Հրատարակելի ու-  
նէր նաեւ 24 ֆրիլիտներ, պալէ մը, մծծ նուա-  
գախուսիքի հաւաք, ներշնչուած՝ Անտրուցի  
ՎՕր մը պատմութիւնը գործէն:

ՏՈՒՄՔ. ԲՈՍՏՈՄ ԲԱՐՈՒՆԵԱՆ

Ամերիկահայ երկտասարդ գիտնական տղք.  
Թոսոմ Բարլանեան Հրաւիրուած է մասնակ-  
ցելու Համայնի կողմնակրուած՝ Հոնոլուլուի մէջ  
Դեկտեմբեր 6-էն 8 տեղի ունենալիք մանագէտ  
մանրէտարան (Վէրոլու) գիտնականներու միջա-  
զային համագումարին:

Վերոյիշեալ համագումարին հիմնական նի-  
ւթը պիտի ըլլայ ծաղիկի մանրէի գիտական հե-  
տազոտութիւնը: Համագումարը կազմակերպուած  
է Ամերիկայի եւ Ճափոնի Միացեալ Կիսական  
Հետազոտութեանց Յանձնախումբին կողմէ:

Տղք. Թոսոմ Բարլանեան, որուն մասնա-  
գիտութիւնն է բնիկներու վրայ ծաղիկի ման-  
րէի աշխտաւոր գործունէութեան ուսումնասի-  
րութիւնը եւ անոր դէմ պայքարելու ջիմիական  
միջոցառումները, համագումարի լորս գլխաւոր  
գեղուցարներէն մէկը պիտի ըլլայ:

Տղք. Բարլանեան ծնած է Եթովպիոյ մայ-  
րաքաղաք Ատիս-Այեւայի մէջ, իր նախնական  
եւ երկրորդական ուսումը ստացած է Գահրէի  
Միթիթարեան վարժարանին եւ Ամերիկեան Հա-  
մալարանին մէջ:

1855-ին Միացեալ Նահանգներ երթալով իր  
մասնակցութիւնը կատարելադարձած է Նի-  
ւեոքի Ռոքֆելլը Հաստատութեան մէջ եւ Նի-  
ւեոքի Համալարանին ստացած մանրէտարան-  
ութեան տղքորի կոչում:

Ներկայիս, տղք. Թոսոմ Բարլանեան  
դասախօս է Նիւ-Յորք Կահնգի Համալարանի  
Բժշկական Մանրէտարանական բաժնին մէջ:

ՏԻՎՐԱՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ԵՐԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Փարիզի շէտլ Նորմալ տը Միւզիքի ար-  
հիմ մէջ երգանիւնդէտ մը տուած է քնարական-  
պարիթօն Տիգրան ժամկռչեան:

Յայտագրի առային մասին, ժամկռչեան եր-  
գած է երապական զասական հեղինակներու գը-  
ծերէն: Կրցած է պատուաւոր յաջողութիւն մը  
ձեռք ձգել, մասնաւորաբար վերստի ՎՕՐԿԻՅԻՆ  
Եսկոյի արիայով:

Յայտագրի երկրորդ մասին երգած է հայ  
հիւսմիշումներու գործերէն:

Տիգրան ժամկռչեանի Փարիզի հայ հաս-  
րակաւթեան հետ առային շփոււմը ստացած է լու-  
արդիւնք մը:

## **ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ**

ՀԱՄԱՍՏՅՆԸ («Ցուշամատեան»), Հրատարակչութիւն Կեդր. Յանձնարարութիւն, Նիւ Եորք, 1967

ԱԶԿԱՅԻՆ ԱՊՐՈՒՄՆԵՐ (յօդուածներ, Ս. Ա. Ս. Յ. Խաչատրեան, Միացեալ Նահանգներ, 1967

ԶՈՅԳ ՄԸ ԿԱՐՄԻՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ (յօդուածներ) Շ. Շահնուր, Պէյրութ, 1967

## **ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ «ՔԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

Պ. Մելեան՝ ճշգրտեցեալ, Պէյրութէն, Պ. Վարդգէս Պարոնեանի, Եռլկոստապիս

Պ. Կիրակոս Խոշեան, Պէյրութէն, Պ. Զուհի Թաշեանի, Այնճար

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ՀԻՐԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ. —

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban